

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՂԵՐԻ ԹՎՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՑԵՆՈՒԹՅԱՆ (ԱՏԹՆ) 2020 - 2021 ԹԹ. ԳԵԿՈՒՅՑ

REPUBLIC OF ARMENIA EXTRACTIVE INDUSTRIES TRANSPARENCY
INITIATIVE (EITI) REPORT 2020 - 2021

**ARMENIA
EITI**

**Extractive Industries
Transparency Initiative**



2022
ԵՐԵՎԱՆ - YEREVAN



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	5
ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ	7
1. ԱՃԹՆ ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ	12
1.1 ԱՃԹՆ զեկույցում ներկայացվող ընկերությունները և պետական մարմինները	12
1.2 ԱՃԹՆ զեկույցում ներկայացվող հարկերը և վճարները	14
1.3 Պետական մարմիններում և ընկերություններում աուդիտի հավաստիացման գործընթացը	16
2. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱՐԻՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳԵՐԸ	18
2.1. Հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենսդրությունը և ֆիսկալ ռեժիմը (պահանջ 2.1)	18
2.1.1. Հաշվետու ժամանակահատվածում իրավական դաշտում տեղի ունեցած էական փոփոխություններ	18
2.1.2. Հաշվետու ժամանակահատվածում ֆիսկալ ռեժիմում տեղի ունեցած փոփոխություններ	31
2.2 Հրապարակված ընդերքօգտագործման իրավունքների ռեզիստրի ամբողջականությունը (արդյոք բոլոր թույլտվությունները և ստանդարտով պահանջվող տվյալներն են ներառված)	41
2.3 Հայաստանի մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերություններում պետական մասնակցությունը, պետական մասնակցությանն առնչվող իրավական կարգավորումները, ԱՃԹՆ ստանդարտի 2.6-րդ, 4.2-րդ և 4.5-րդ պահանջների կիրառելիությունը	42
2.4 Ծրագիր եզրույթի սահմանում	45
2.5 ՀՀ աուդիտորական և համահարթեցման գործընթացները, պետական բյուջե (պահանջ 5.3)	47
3. ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ, ԱՐՏԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ	50
3.1 Մետաղական օգտակար հանածոների պաշարները հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.1)	50
3.2 Ընդերքի հետախուզում (պահանջ 3.1)	52
3.3 Արդյունահանումը և արտադրությունը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.2 և 3.3)	55
3.4 Իրացումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.2 և 3.3)	72
3.4.1 Արտահանում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում	72
3.4.2 Ներքին իրացում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում	84

4. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՑԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՑ (ՊԱՀԱՆՋ 4).....88

- 4.1 Մետաղական հանքարդյունահանող ընկերություններից մուտքերը պետական բյուջե 88
- 4.2 Մետաղական հանքարդյունահանող ընկերություններից մուտքերը համայնքային բյուջեներ... 92
- 4.3 Եկամուտների բաշխումը (պահանջ 5) 96

5. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ..... 103

- 5.1 Հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը ՀՀ տնտեսության մեջ..... 103
- 5.2 Զբաղվածությունը հանքարդյունաբերության ոլորտում 107
- 5.3 Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից իրականացված սոցիալ-տնտեսական գործունեությունը (պահանջ 6.1) 114
- 5.4. Հիմնադրամներին, ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց հատկացվող նվիրատվություններ..... 122
- 5.5 Մետաղական հանքարդյունաբերության բնապահպանական ազդեցության կառավարման և մոնիթորինգի վերաբերյալ առկա տեղեկատվությունը (պահանջ 6.4)..... 129
- 5.6 COVID-19 համավարակի ազդեցությունը հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի վրա..... 135
- 5.7 ԱՃԹՆ կարևորությունը էներգետիկ անցման համար 137
- 5.8 2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ռազմական գործողությունների, Հայաստանում հայտարարված ռազմական դրության և դրանից հետո ստեղծված իրավիճակի ազդեցությունը Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վրա: 140

6. ՀԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ..... 142

- 6.1 Համադրման գործընթացի մեթոդաբանությունը և շրջանակները..... 142
 - 6.1.1 ԱՃԹՆ գեկույցի համադրման շրջանակներում համադրվող ընկերությունների ցանկի որոշում..... 142
 - 6.1.2 ԱՃԹՆ գեկույցի համադրման շրջանակներում եկամտային հոսքերի որոշում..... 148
- 6.2 Համադրման գործընթացի ամբողջականություն..... 155
- 6.3 Համադրման գործընթացի արդյունքները 155

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՃԹՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 164

- 7.1 Առաջարկներ՝ հաջորդող տարիների հաշվետվությունների ձևաչափերի լրամշակման համար 164
- 7.2 Առաջարկներ՝ տվյալների հավաքագրման առցանց համակարգի հետ կապված խնդիրների շտկման համար 165
- 7.4 Փոխադրումներից ստացվող եկամուտներ (պահանջ 4.4)..... 167
- 7.5 Առաջընթացը պատասխանատու հանքարդյունաբերության ուղղությամբ..... 167

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԻԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 171

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ և ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ..... 172

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՄԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԴՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 186

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԲԱՐԵԳՈՐԾՍԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ, ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՁևՈՎ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐՈՒՄՆԵՐ 195

ՀԱՎԵԼՎԱԾ 5 ՀԱՄԱԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ 2020Թ. և 2021Թ. ՀԱՄԱՐ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ և ԿԱՏԱՐՎԱԾ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ..... 203

Հավելված 5.1. Համադրման արդյունքում կատարված ճշգրտումներ 2020թ. համար, տվյալների համադրման արդյունքներ և կատարված ճշգրտումների մեկնաբանություն..... 203

Հավելված 5.2. Համադրման արդյունքում կատարված ճշգրտումներ 2021թ. համար, տվյալների համադրման արդյունքներ և կատարված ճշգրտումների մեկնաբանություն..... 206

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՇՎԵՏՈՒ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱՐՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐ 2020Թ. և 2021Թ. ՀԱՄԱՐ (ՀԱՇՎԱՐԿՎԱԾ)..... 212

Հավելված 6.1. Հաշվետու ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրված տվյալներ, 2020թ. (ՀՀ դրամ)..... 212

Հավելված 6.2. Հաշվետու ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրված տվյալներ, 2021թ. (ՀՀ դրամ)..... 226

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԱՃԹՆ ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԻՆՔ..... 240

Հապավումներ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՃԹՆ	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԲԲԸ	Բաց բաժնետիրական ընկերություն
ԲՇԽ	Բազմաշահառու խումբ
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵՏՄ	Եվրոպական տնտեսական միություն
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
թմտ	թաց մետրիկ տոննա
ՀՀ ՊԵԿ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՎՀՀ	Հարկ վճարողի հաշվեհամար
ՀՄԿՊՈԱԿ	«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՄԱԿ ԵՏՀ	Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողով
ՄԱԿ ԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԷԳ	Միջազգային էներգետիկ գործակալություն
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄՆ	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
չմտ	չոր մետրիկ տոննա
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՊՄԿ	Պղնձամոլիբդենային կոմբինատ
ՍԴՈ	Սահմանադրական դատարանի որոշում
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԿԵՆ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՖՀՄՄ	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է, որին անդամակցում են 57 երկրներ (2022թ. դեկտեմբեր դրությամբ): Այն ընդգրկում է բնական պաշարների արդյունահանումից մինչև դրա՝ երկրի քաղաքացիների վրա ունեցած ազդեցությանն առնչվող բոլոր հիմնական խնդիրները, մասնավորապես, ինչպես են տրամադրվում և գրանցվում ընդերքօգտագործման և ոլորտի այլ թույլտվությունները և պայմանագրերը, ովքեր են այս գործընթացների շահառուները, ինչպիսիք են՝ ֆինանսական և իրավական կարգավորումները, որքան արտադրանք է արտադրվում, ինչքան են կազմում ոլորտից պետական բյուջե ուղղվող եկամուտները, ինչպես են տեղաբաշխվում այդ եկամուտները, ինչ ներդրում է ապահովվում տնտեսության մեջ ներառյալ զբաղվածության աճը:

ԱՃԹՆ նպատակն ավելի թափանցիկ և հաշվետվողական պետական և գործարար համակարգերի ստեղծումն է, ինչպես նաև հանրային երկխոսության կայացման խթանումը՝ դրանով իսկ երաշխավորելով փոխըմբռնման կայացումը կողմերի միջև:

ԱՃԹՆ գործընթացը Հայաստանում

ԱՃԹՆ անդամ դառնալու գործընթացը Հայաստանում սկսվել է 2015թ. հուլիսից: ՀՀ անդամակցությունը հաստատվել է 2017թ. մարտի 9-ին՝ Բոգոտայում կայացած ԱՃԹՆ խորհրդի նիստում¹:

ԱՃԹՆ իրականացնող յուրաքանչյուր երկիր, ԱՃԹՆ թեկնածու դառնալուց հետո երկուսուկես տարվա ընթացքում և երեք տարին մեկ անգամ, պետք է անցնի վավերացման գործընթաց: Վավերացումը թույլ է տալիս գնահատել երկրի առաջընթացն ԱՃԹՆ պահանջներից յուրաքանչյուրին համապատասխանության ապահովման առումով: Վավերացումն իրականացվում է ԱՃԹՆ միջազգային խորհրդի և այս կառույցի կողմից նշանակված անկախ վավերացում իրականացնող անձանց կողմից:

2020թ. հուլիսի 9-ին ԱՃԹՆ միջազգային Խորհուրդը Հայաստանի առաջին վավերացման եզրակացության արդյունքում Հայաստանին շնորհել է ամենաբարձր գնահատականը՝ Հայաստանը «բավարար» (satisfactory) առաջընթաց է արձանագրել ԱՃԹՆ 2016 ստանդարտի իրականացման գործում²:

Վավերացման գնահատականով՝ 20 պահանջների գծով Հայաստանը գրանցել է «բավարար»՝ գնահատական, իսկ 4-ի մասով՝ «գերազանցող» (beyond) գնահատական:

Խորհուրդը որոշում է կայացրել, որ Հայաստանի հաջորդ վավերացման գործընթացն իրականացվելու է 2023թ. հուլիսի 9-ին:

¹ <https://eiti.org/documents/36th-board-meeting-agenda-and-minutes>

² <https://eiti.org/board-decision/2020-39>

Հայաստանի ԱՃԹՆ բազմաշահառու խումբը

ԱՃԹՆ ստանդարտի իրականացման առանցքային բաղադրիչներից մեկը կառավարության, ընկերությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից կազմված բազմաշահառու խմբի (ԲՇԽ) ձևավորումն է, որը նախաձեռնության շրջանակներում որոշումներ ընդունող հիմնական մարմինն է: ԲՇԽ-ն ձևավորվում է ԱՃԹՆ գործընթացի կառավարման, ԱՃԹՆ գեկույցի կազմման գործընթացի վերահսկման և արդյունքների ներկայացման, ինչպես նաև այդ երկրում ընթացող թափանցիկության աշխատանքներում ԱՃԹՆ ստանդարտի ինտեգրման գործընթացի խրախուսման նպատակով: ԲՇԽ յուրաքանչյուր խմբակցության անդամներն ընտրվում են տվյալ խմբակցության կողմից՝ իրենց իսկ որոշած ընթացակարգերով, այսպիսով՝ ապահովելով ԲՇԽ անդամների անկախությունը: ԲՇԽ-ն պետք է ապահովի աշխատանքներին մասնակցության հրավերի թափանցիկությունը և հրապարակայնությունը, շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ անկախ քաղաքացիական խմբերի, լրատվամիջոցների, միությունների և համապատասխան պետական կազմակերպությունների պատշաճ ներկայացվածությունը:

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ ԲՇԽ-ն կազմված է տասնհինգ անդամներից՝ հետևյալ կազմով.

- վեց ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության կառավարությունից.
- չորս ներկայացուցիչ հանքարդյունաբերական ընկերություններից,
- հինգ ներկայացուցիչ քաղաքացիական հասարակությունից (այդ թվում՝ մեկ ներկայացուցիչ գիտական համայնքից):

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ն 2020-2021թթ. համար սահմանել է հետևյալ առաջնահերթությունները³.

1. Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ թափանցիկության և հաշվետվողականության ԱՃԹՆ ստանդարտի կիրառման խորացում, վերհանված բացերի հասցեագրում,
2. Ոլորտի շահառուների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում, համակարգված բացահայտումների գործելակարգի ներդրում, ոլորտի բացահայտված տվյալների օգտագործման և վերլուծության կարողությունների զարգացում,
3. Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ իրազեկվածության ապահովում,
4. Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի կատարելագործում՝ միջազգային լավագույն փորձի կիրառման, իրավական կարգավորումների բարելավման միջոցով,
5. Պատասխանատու ներդրողների համար մրցակցային ներդրումային միջավայրի բարելավում:

³<https://www.eiti.am/hy/%D4%B1%D5%83%D4%B9%D5%86-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80/>

Հայաստանի ԱՃԹՆ 2021-2022թթ. աշխատանքային ծրագրում⁴ սահմանված են ԱՃԹՆ ներդրման հետևյալ նպատակները⁵.

1. Հասանելի և արդիական տեղեկատվության ապահովում,
2. Հաշվետվողականության և հանրային վերահսկողության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում.
 - Հայաստանի ԱՃԹՆ անդամակցության կարգավիճակի պահպանում,
 - ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ գեկոյցի կազմում,
 - Իրական սեփականատերերի բացահայտման առցանց հանրային ռեգիստրի գործարկում, իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հասանելիության ապահովում, հանրային վերահսկողության հնարավորությունների աճ,
 - Հայաստանի ԱՃԹՆ շրջանակի ընդլայնում, ԱՃԹՆ ստանդարտի ներդրման շրջանակի ընդլայնման վերաբերյալ ԲՇԽ-ի որոշման դեպքում՝ ՀՀ իրավական դաշտի համապատասխանեցում,
3. ԱՃԹՆ տվյալների համակարգված բացահայտումների ապահովում, ԱՃԹՆ ԲՇԽ-ի և շահառուների կարողությունների հզորացում,
4. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելառճի ներդրում:

ԱՃԹՆ շրջանակը Հայաստանում

ԱՃԹՆ շրջանակը Հայաստանում ընդգրկում է հանքարդյունաբերության ոլորտի մետաղական հանքարդյունահանման ենթաոլորտը⁶:

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտը կարևոր մասնաբաժին ունի Հայաստանի տնտեսությունում: Ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տրամադրած տեղեկատվության, 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ՝ օգտակար հանածոների հանքավայրերի պետական կադաստրում հաշվառված է օգտակար հանածոների 961 հանքավայր և հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամաս, ներառյալ՝ 45 մետաղական օգտակար հանածոյի հանքավայր: 2020 և 2021թ. դրությամբ Հայաստանում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքները համապատասխանաբար 26 և 24 էին:

ԱՃԹՆ ստանդարտի իրականացման շրջանակներում պետական մարմինների և ընդերքօգտագործող ընկերությունների կողմից լրացվում են հաշվետվություններ, որոնք թույլ են տալիս բացահայտել *մետաղական հանքարդյունահանմամբ զբաղվող ընկերությունների արտադրությանը, իրացմանը, արտահանմանը, եկամուտներին, զբաղվածությանը, կառավարությանը և համայնքներին* կատարած վճարումներին, ինչպես նաև պետության ստացած եկամուտներին և այդ հոսքերի կառավարմանը վերաբերող տարբեր տեղեկություններ: *Ըստ ԱՃԹՆ ստանդարտի՝ ընդերքօգտագործողները պետք է բացահայտեն նաև ընկերությունների իրական շահառուներին վերաբերվող տեղեկությունները: Ստանդարտով նաև պահանջվում է, որ պետական մարմինները*

⁴Նույնը

⁵Նույնը

⁶ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի՝ 2022թ. ապրիլի 27-ի արձանագրություն

https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_27_04_2022_arm.pdf

բացահայտեն երկրաբանական ուսումնասիրության, բնական պաշարների հետախուզման, արդյունահանման, արտահանման պայմաններին, ինչպես նաև ընդերքօգտագործողներին թույլտվություններ տրամադրելու/փոխանցելու վերաբերող տեղեկություններ: *Ընդերքօգտագործողների և պետական մարմինների կողմից տրամադրված տեղեկությունները* համադրվում են Անկախ ադմինիստրատորի կողմից և ամենամյա կտրվածքով հրապարակվում արդյունահանող ճյուղերի մասին այլ տեղեկությունների հետ մեկտեղ՝ ԱՃԹՆ ստանդարտի պահանջներին համապատասխան: Բացի ամենամյա ԱՃԹՆ զեկույցից, ԱՃԹՆ իրականացնող երկրները նաև հրապարակում են տարեկան գործունեության *վերաբերյալ ընթացիկ* հաշվետվություններ: ՀՀ ԱՃԹՆ *չորրորդ* զեկույցի շրջանակը սահմանվել է 2022թ. ապրիլի 27-ին կայացած ԲՇԽ նիստի ընթացքում,⁷ որը վերահաստատել է նախաձեռնության շրջանակում մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած բոլոր ընդերքօգտագործողների հաշվետվություն ներկայացնելու պահանջը 2020 և 2021 ֆինանսական տարիների ընթացքում՝ բացառությամբ սնանկ ճանաչվածների:

⁷ Նույնը

1

ԱՃԹՆ-Ի ՁԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՄՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՇՐՋԱՆԱԿԸ

1. ԱՃԹՆ ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի՝ 2022թ. ապրիլի 27-ի նիստում⁸ հաստատվել են Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը, զեկույցում ընդգրկվելիք ընկերությունները և պետական կառույցները, ինչպես նաև հստակեցվել են համադրման չափանիշներն ընկերությունների և եկամտային հոսքերի համար: Նույն նիստի ընթացքում հաստատվել է նաև, որ սույն ԱՃԹՆ զեկույցը պետք է ներառի տեղեկատվություն 2020 և 2021թթ. վերաբերյալ:

1.1 ԱՃԹՆ զեկույցում ներկայացվող ընկերությունները և պետական մարմինները

Վերոնշյալ նիստի շրջանակներում ԲՇԽ-ն համաձայնության է եկել, որ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող բոլոր ընկերությունները պետք է ներառվեն ԱՃԹՆ զեկույցում: Այսպիսով, 2020-2021 թթ. համար հաշվետու են համարվել հետևյալ ընդերքօգտագործող ընկերությունները՝

N	Ընդերքօգտագործող	Գրանցման համար	Պայմանագրի համար և կնքման (վերաձևակերպման) ամսաթիվ
1.	«Չաարատ Կապան» ՓԲԸ	27.120.01216	ՊՎ-183 (27.11.2012)
2.	«Գեղի Գոլդ» ՍՊԸ	72.110.121815	Պ-544 (22.07.2016)
3.	«Բակտեկ Էլո» ՍՊԸ	282.110.06759	Պ-515 (22.08.2014)
4.	«Ղարազուլյաններ» ՓԲԸ	286.120.929505	Պ-547 (25.10.2016)
5.	«Ատ-Մետալս» ՍՊԸ	271.110.738775	Պ-514 (16.01.2015)
6.	«Վայք Գոլդ» ՍՊԸ	264.110.111245	Պ-371 (30.11.2012)
7.	«Սազամար» ՓԲԸ	278.120.03167	ՊՎ-093 (20.10.2012)
8.	«Ասաթ» ՍՊԸ	77.110.00569	ՊՎ-366 (06.06.2013)
9.	«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	286.110.07682	ՊՎ-057 (22.08.2012)
10.	«Լեռ-Էքս» ՍՊԸ	27.110.00893	ՊՎ-094 (16.08.2012)
11.	«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	96.120.00632	ՊՎ-103 (20.10.2012)
12.	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	273.110.02424	ՊՎ-189 (20.10.2012)
13.	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	264.120.07314	ՊՎ-245 (26.09.2012)
14.	«Ազարակի ՊՄԿ» ՓԲԸ	79.140.00036	ՊՎ-311 05.04.2013
15.	«Թեդուտ» ՓԲԸ	286.120.06078	ՊՎ-376 (20.02.2013)
16.	«Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	27.140.00009	ՊՎ-232 (27.11.2012)
17.	«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	273.110.03365	ՊՎ-425 (28.12.2012)
18.	«Լիճքվազ» ՓԲԸ	286.120.07744	ՊՎ-293 (22.11.2012)
19.	«Մուլտի Գրուպ Կոնցեն» ՍՊԸ	42.110.01460	ՊՎ-213 (20.10.2012)
20.	«Վարդանի զարթոնք» ՍՊԸ	79.110.00234	ՊՎ-239 (27.09.2012)
21.	«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	286.110.05872	ՊՎ-174 (07.11.2012)
22.	«Ֆորչն Բիգորսիս» ՍՊԸ	39.110.01312	ՊՎ-169 (20.10.2012)
23.	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ ⁹	286.120.58034	089 (12.06.2012)

⁸ <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

⁹ «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ չի դիտարկվելու 2021թ. համար

N	Ընդերքօգտագործող	Գրանցման համար	Պայմանագրի համար և կնքման (վերաձևակերպման) ամսաթիվ
Ստորև ընկերությունների համար 2020-2021 հաշվետու տարիների հրապարակային հաշվետվություններ են ներկայացրել միայն պետական մարմինները			
24.	«Մեզո Գոլդ» ՍՊԸ	77.110.00610	ՊՎ-184 (28.12.2012)
25.	«Թաթսթոուն» ՍՊԸ	264.110.06348	Պ-459 (11.02.2013)
26.	«Մարջան Մայնինգ» ՍՊԸ ¹⁰	273.110.05412	ՊՎ-398 (07.03.2013)

ԲՇԽ-ի որոշման համաձայն 2020 - 2021 թթ. զեկույցի համար համապատասխանաբար 2021 և 2022թթ. օգոստոսի 1-ի դրությամբ ընդերքօգտագործման թույլտվություններով գործունեությունն դադարեցրած, սակայն նույն թվականի ընթացքում ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների հրապարակային հաշվետվությունները ներկայացվել են միակողմանի՝ միայն հաշվետու պետական մարմինների կողմից, քանի որ ընդերքօգտագործող չհամարվող սույն ընկերությունները հրապարակային հաշվետվություններ ներկայացնելու պարտավորություն չունեն: Նույն որոշման համաձայն հաշվետու ֆինանսական տարում ՀՀ պետական բյուջե 150 միլիոն դրամին համարժեք կամ դրանից բարձր հարկեր և վճարումներ կատարած ընկերությունները համարվում են համադրվող ընկերություններ:

Համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ մինչև 2021թ. օգոստոսի 1-ը 2020թ. համար և ոչ ուշ, քան մինչև 2022թ. օգոստոսի 1-ը 2021 թ. համար պետական մարմինները՝ Պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, համայնքները (տվյալները ներկայացվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջոցով) ԱՃԹՆ reports.eiti.am առցանց հաշվետվությունների համակարգի միջոցով ներկայացրել են 2020 և 2021 հաշվետու տարվա հրապարակային հաշվետվությունները:

¹⁰ «Մարջան Մայնինգ» ՍՊԸ չի դիտարկվելու 2021թ. համար

1.2 ԱՃԹՆ զեկույցում ներկայացվող հարկերը և վճարները

Հաշվի առնելով տվյալների տարբերությունների նվազման դրական միտումը և դրանց ոչ էականությունը՝ պայմանավորված հաշվետու պետական մարմինների և ընկերությունների պատասխանատուների՝ հաշվետվություն լրացնելու հմտությունների ամրապնդմամբ և մեխանիկական սխալներ կատարելու ռիսկի նվազմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով զեկույցների կազմման ֆինանսական արդյունավետության ապահովման անհրաժեշտությունը և «Ճկուն հաշվետվողականության» վերաբերյալ ԱՃԹՆ միջազգային քարտուղարության խորհուրդները՝ 2022թ. ապրիլի 27-ին կայացած նիստում¹¹ ԲՇԽ որոշել է, որ 2020 և 2021 ֆինանսական տարիների համար համադրվող կհամարվեն արդյունահանման գործունեության հետ ուղղակի կապված էական և մեխանիկական սխալներ կատարելու տեսանկյունից ավելի ռիսկային հետևյալ 5 եկամտային հոսքերը՝



Համադրման գործընթացի շրջանակներում Անկախ ադմինիստրատորը դիտարկել է բոլոր ֆինանսական հոսքերը և, համաձայնել համադրվող ֆինանսական հոսքերի հետ կապված ԲՇԽ մոտեցման հետ:

¹¹ <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents/>

Արդյունահանող ճյուղերից երկկողմանի բացահայտվող ֆինանսական հոսքերն են՝

Պետական եկամուտների կոմիտե

- Շահութահարկ
- Եկամտային հարկ
- Ավելացված արժեքի հարկ
- Ակցիզային հարկ
- Ռոյալթիներ
- Բնապահպանական հարկ
- Բնօգտագործման վճարներ
- Մաքսային տուրքեր և վճարներ
- Ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք
- Ձրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք
- ԱՏԳ ԱԱ դասակարգչի 2603000000 ծածկագրին դասվող պղնձի խտահանք արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրքի (կիրառելի է 2021թ. համար)
- ԱՏԳ ԱԱ դասակարգչի 2613 ծածկագրին դասվող մոլիբդենի խտահանքեր արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրքի (կիրառելի է 2021թ. համար)
- ԱՏԳ ԱԱ դասակարգչի 7202700000, 8102 ծածկագրին դասվող մոլիբդենի (բացառությամբ 810297000) արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրքի (կիրառելի է 2021թ. համար)

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

- Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում
- Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը
- Մշտադիտարկումների իրականացման վճարներ
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման տուրք
- Բնապահպանական իրավախախտման համար տույժեր, տուգանքներ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

- Անշարժ գույքի հարկ
- Փոխադրամիջոցների գույքահարկ
- ՏԻՄ-ին (համայնքին) վճարված վարձակալության վճար
- Հողի ձեռքբերում
- Հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերության վճարում
- Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ

1.3 Պետական մարմիններում և ընկերություններում աուդիտի հավաստիացման գործընթացը

ԱՃԹՆ զեկույցի համար ներկայացված տվյալների հավաստիության ստուգման գործընթացը հիմնված է համապատասխան միջազգային ստանդարտների վրա, ինչպիսիք են ՀՇՄՍ 4400 (Ֆինանսական տեղեկատվության համաձայնեցված ընթացակարգերի իրականացման առաջադրանք) և ԱՄՍ 505 (Արտաքին հաստատումներ): Այնուամենայնիվ, ստուգման այս գործընթացներն իրենցից չեն ենթադրում աուդիտ կամ աուդիտորական եզրակացության տրամադրում միջազգային ստանդարտներին համապատասխան:

Հետևաբար, հավաստիացում չի կարող տրվել ընկերությունների և պետական մարմինների կողմից տրամադրվող տեղեկատվության արժանահավատության մասին, ինչպես նաև փորձ չի արվելու բացահայտել խարդախությունները և սխալները, որոնք կարող են թույլ տրված լինել ընկերությունների և (կամ) պետական մարմինների կողմից: Հաշվետու ընկերությունները, ինչպես նաև համապատասխան պետական մարմինները պատասխանատու են տրամադրված տվյալների ամբողջականության և ճշգրտության համար:

Տեղեկատվությունը, որը ներառված կլինի ԱՃԹՆ զեկույցում և (կամ) տեղեկատվությունը, որը կտրամադրվի հանքարդյունահանող ընկերությունների և պետական մարմինների կողմից, ենթակա չէ վերահսկման և ստուգման գործընթացներ անցնելու, եթե ԱՃԹՆ ստանդարտում այլ կերպ նախատեսված չէ: Ընկերությունների և պետական մարմինների կողմից տրամադրվող տվյալների հավաստիությունը երաշխավորվում է տվյալ ընկերությունների և պետական մարմինների ղեկավարների, ինչպես նաև ընկերությունների գլխավոր հաշվապահների ստորագրությամբ¹²:

Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակելու կարգը, ժամկետները և ձևերը, մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների գործունեության վերաբերյալ հրապարակային հաշվետվությունը ներկայացնելու կարգը, ժամկետները և ձևերը, ինչպես նաև պետական մարմինների ցանկը սահմանված են ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-Ն որոշմամբ¹³:

Հանքարդյունահանող ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների հրապարակման, ինչպես նաև արտաքին աուդիտի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 1-ում: Աուդիտորական գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է 2.5 բաժնում:

¹² https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_27_04_2022_arm.pdf

¹³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132674>

2

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ
ՕՐԵՆՍԴԵՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

2. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

2.1. Հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենսդրությունը և ֆիսկալ ռեժիմը (պահանջ 2.1)

2.1.1. Հաշվետու ժամանակահատվածում իրավական դաշտում տեղի ունեցած էական փոփոխություններ

1. Հաշվետու ժամանակահատվածում ոլորտը կարգավորող կենտրոնական փաստաթղթում՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում (այսուհետ՝ «Օրենսգիրք») կատարվել են մի շարք հիմնարար բնույթի փոփոխություններ, որոնք նկարագրված են ստորև:
 - **Իրական շահառու հասկացության սահմանում և հայտարարագրերի նոր ձևի հաստատում**
2. Օրենսգրքում փոփոխությունների 2021թ. հունիսի 03-ին ընդունված փաթեթով¹⁴ սահմանվել է «իրական շահառու» եզրույթը, որը փոխարինել է Օրենսգրքում օգտագործվող «իրական սեփականատեր» հասկացությանը: Օրենսգիրքը սահմանում է «իրական շահառու» հասկացությունը հետևյալ կերպ.

«մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության կամ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող կամ այդպիսի իրավունք հայցող իրավաբանական անձի դեպքում՝ ֆիզիկական անձ, որը

 - ա. ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,*
 - բ. իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը,*
 - գ. իրավաբանական անձից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ,*
 - դ. իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,*
 - ե. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ*

¹⁴ «Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին Օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 247-Ն օրենք (2021թ. հունիսի 03), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153772>

առկա չէ սույն կետի «ա»-«դ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ շահերի հայտարարագրի ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք, Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, փոխվարչապետների, նախարարների խորհրդականների, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականի, վարչապետի գլխավոր խորհրդականի, հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով՝ այդպիսի անձանց ընտանիքի անդամ համարվող անձինք սույն կետի «ա» և «գ» ենթակետերով նախատեսված հիմքերով համարվում են իրավաբանական անձի իրական շահառու՝ անկախ ունեցած ձայների և ստացված օգուտների մեծությունից»:

3. Օրենսգրքում համապատասխանաբար կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեռացվել են բոլոր հղումները «իրական սեփականատեր» հասկացությանը (այն փոխարինվել է «իրական շահառու» հասկացությամբ) և այն սահմանող իրավական ակտերին: Հայաստանի Հանրապետության արդարադատության Նախարարի N 416-Ն 30 օգոստոսի 2021թ. հրամանով¹⁵ հաստատվել է.
 - իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, դրա լրացման, ներկայացման և իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման կարգը,
 - իրական շահառուների բացահայտման համարժեք չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկը:
4. Վերջինիս հիման վրա ուժը կորցրած է ճանաչվել արդարադատության նախարարի 2020թ. փետրվարի 5-ի N 36-Ն հրամանը:
5. Հայաստանի Հանրապետության կառավարություն 2021թ. օգոստոսի 18-ի թիվ N 1330-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2020թ. մարտի 26-ի «*Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու մասին*» N 408-Ն որոշումը:¹⁶
6. Ընդերքօգտագործման ոլորտին զուգահեռ տեղի են ունեցել նաև ընդհանուր իրավական փոփոխություններ, որոնք վերաբերվել են ձեռնարկությունների իրական շահառուներին: Այսպես՝ «Հանրային ծառայության մասին» օրենքում 2021թ. հունվարի 19-ին¹⁷ կատարված փոփոխությունների համաձայն շահերի հայտարարագրի բովանդակությունում կատարվել է հետևյալ լրացումը. 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հայտարարագրի՝ «Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու*

¹⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155465>

¹⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155118>

¹⁷ «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-51-Ն (2021թ. հունվարի 19) ՀՀ օրենք, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=150019>

դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն: Սույն մասի իմաստով իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի հիման վրա իրավաբանական անձի իրական շահառու հանդիսացող անձը»:

7. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ 2021թ. հունիսի 3-ին ընդունված օրենսդրական ակտի համաձայն¹⁸, մասնավորապես՝
 - Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառվող տեղեկությունների ցանկում ավելացել է հետևյալ տեղեկությունը. «տեղեկություններ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ (անունը, ազգանունը, քաղաքացիությունը, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, ՀՕՀ, բնակության (հաշվառման) վայրը, կապի միջոցները, իրական շահառու դառնալու ամսաթիվը, իրական շահառու հանդիսանալու հիմքերը)»
 - Օրենքը լրացվել է «Գրանցամատյանում իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների գրառումը» 12.1-ին գլխով, որն ամբողջությամբ նվիրված է իրական շահառուների հայտնաբերման, բացահայտման, իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցման և հրապարակման առնչությամբ ծագող իրավահարաբերությունների կարգավորմանը:
 - Օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի նոր խմբագրության համաձայն (7-րդ կետ)՝ առանց պետական տուրք վճարելու տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից ի թիվս այլ տեղեկությունների հասանելի են պետական միասնական գրանցամատյանի հետևյալ տեղեկությունները. «իրավաբանական անձի իրական շահառուի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, իրական շահառու դառնալու ամսաթիվը, իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերը»:
 - Միայն ֆիզիկական անձ մասնակիցներ ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների համար նշված օրենքով նախատեսված պարտականությունները ծագելու են 2023թ. հունվարի 1-ից: Մինչև 28.06.2021թ. իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր ներկայացրած անձանց վրա նշված օրենքով նախատեսված կարգավորումները տարածվել են 01.09.2021թ.-ից այդ իրավաբանական անձինք պարտավոր էին իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնել մինչև 20.02.2022թ.:
 - Օրենքը համալրվել է նոր 60.4 հոդվածով, որի համաձայն իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցման համար գործակալություն է ներկայացվում իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, ինչպես նաև թարմացված

¹⁸ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-246-Ն ՀՀ օրենք (2021թ. հունիսի 3), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=153756>

հայտարարագրեր՝ իրական շահառուների փոփոխության դեպքում: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման ոլորտային պահանջների հիման վրա գործակալություն ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, բացառությամբ հրապարակային չհամարվող տեղեկությունների, հասանելի են տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից առանց պետական տուրք վճարելու:

8. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում նույնպես կատարվել են փոփոխություններ, որոնք ընդունվել են 2021թ. հունիսի 30-ին¹⁹. վերջիններիս համաձայն փոփոխության է ենթարկվել իրական շահառուի սահմանումը:

9. Օրենքի 3-րդ հոդված 1-ին մասի 14-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

*«**իրական շահառուն** ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է, կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի (բացառությամբ տրաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը*

ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք սովորաբար բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ»:

10. Իրական շահառուի նշված ձևակերպումը կիրառելի է բացառապես փողերի լվացման դեմ պայքարի կարգավորումների համատեքստում և կապ չունի ընդերքօգտագործման ոլորտում հաշվետվողականության հետ, որի համատեքստում օգտագործվում է «իրական շահառու» հասկացության առավել լայն սահմանում (ինչպես նշվեց վերը):

11. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում ավելացվել են նաև նոր կարգավորումներ, որոնք վերաբերվում են գրանցված բաժնետեր չունեցող օտարերկրյա իրավաբանական անձանց (տրաստերի) իրական շահառուների բացահայտմանը: Այսպես օրենքի 16-րդ հոդվածի 6.1 կետի համաձայն *«[տ]րաստ կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում հանդիսացող հաճախորդների դեպքում հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդի իրական շահառուին նույնականացնելու և*

¹⁹ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 20-296-Ն ՀՀ օրենք (2021թ. հունիսի 30), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=154466>:

ողջամիտ քայլերի ձեռնարկմամբ նրա ինքնությունն ստուգելու նպատակով պետք է լիարժեք տեղեկություններ ունենա դրա հիմնադիրների, կառավարիչների, շահառուների (այդ թվում՝ շահառուների դասի), շահերի պաշտպանի (առկայության դեպքում) և իրական (փաստացի) հսկողություն իրականացնող այլ ֆիզիկական անձի կամ համանման գործառույթներ իրականացնող անձի և նրանց լիազորությունների վերաբերյալ»:

12. 2021թ. հունիսի 3-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենսդրական փաթեթով նախատեսվել են իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման կանոնները խախտելու համար հետևանքները: Մասնավորապես, նախատեսվել է վարչական պատասխանատվություն իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող ընդերքօգտագործողի կողմից օրենսդրությամբ սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու, ընդերքօգտագործողի կողմից հայտարարագիրը դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու, ընդերքօգտագործողի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու, ինչպես նաև ընդերքօգտագործողի կողմից իրական շահառուների բացահայտման նպատակով պատշաճ ուսումնասիրություն չիրականացնելը կամ իրականացված պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները և փաստաթղթերն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չպահպանելու համար:
13. Ստորև ներկայացված է մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերը՝

Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերության անվանումը	Հայտարարագրի հղումը
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1267440
«Պարամաունտ գոլդ մայնինգ» ՓԲԸ	https://www.e-register.am/am/companies/1267456
«Սագամար» ՓԲԸ	https://www.e-register.am/am/companies/1267708
«Լեռ-Էքս» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1272746
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	https://www.e-register.am/am/companies/1266888
«Ֆորչն ռիզորսիս» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1127476
«Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1267818
«Չաարատ կապան» ՓԲԸ	https://www.e-register.am/am/companies/1272537
«Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1266780
«Մուլտի գրուպ» կոնցեռն ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1267169
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	https://www.e-register.am/am/companies/1272761
«Վարդանի գարթնքը» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1267799
«Լիդիան արմենիա» ՓԲԸ	https://www.e-register.am/am/companies/1272536
«Լիճքվազ» ՓԲԸ	https://www.e-register.am/am/companies/1266829
«Ագարակի պմկ» ՓԲԸ	https://www.e-register.am/am/companies/1269083
«Ասսաթ» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1267633
«Թեղուտ» ՓԲԸ	https://www.e-register.am/am/companies/1272552
«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1267399
«Թաթարոուն» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1268361
«Ատ-մետալս» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1267427
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1195647
«Գեդի Գոլդ» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1267410

Մետաղական հանքարար արդյունահանող ընկերության անվանումը	Հայտարարագրի հղումը
«Ղարագույաններ» ՓԲԸ	https://www.e-register.am/am/companies/1267820
«Մեզո գոլդ» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1237707
«Վայք գոլդ» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1232638
«Մարջան մայնինգ քումփանի» ՍՊԸ	https://www.e-register.am/am/companies/1237755

ԱՃԹՆ 2.5 պահանջի վավերացումով՝ Հայաստանին ուղղիչ գործողություն է նշանակվել ընդերքօգտագործող ընկերությունների իրական շահառուների (այդ թվում՝ ՓԲԸ-ների) տվյալները հասանելի դարձնելու մասով:²⁰ Հաշվի առնելով վերոնշյալ պահանջը՝ ընդերքօգտագործող ընկերությունների իրական շահառուների կազմի վերաբերյալ տեղեկատվությունն հասանելի է ԱՃԹՆ կայքում:²¹

▪ **Կիրառելի ընթացակարգերի ժամկետների փոփոխություններ**

14. Օրենսգրքում փոփոխությունների 2021թ. հունիսի 3-ին ընդունված փաթեթով²², ինչպես նաև 2021թ. ապրիլի 14-ին ընդունված փաթեթով²³, փոփոխվել են ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման հետ կապված ընթացակարգերի որոշ ժամկետներ:
15. Այսպես՝ մետաղական օգտակար հանածոների դեպքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրվող ընդերքօգտագործման իրավունքը (հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման ընդերքօգտագործման իրավունքը) այսուհետ տրամադրվում է, երբ հանքավայրի պաշարները գնահատվել են երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող դիմումին նախորդող օրվանից՝ 10 և ավելի տարի առաջ, նախկինում կիրառվող «5 և ավելի տարի առաջ» սահմանափակման փոխարեն:
16. Փոփոխվել են Օրենսգրքի 42-րդ հոդվածի 2.2 մասով սահմանված՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության (հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար) թույլտվության տևողությունը: Այժմ այն տրամադրվում է մինչև 3 տարի ժամկետով և առանց երկրաբանական հնարավորության (նախկինում՝ ֆիքսված 3 տարի ժամկետի փոխարեն): Օրենսգրքով սահմանված բացառությունը ժամկետի առումով (երբ հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարները գնահատվել են երկրաբանական ուսումնասիրության թույլտվության համար հայցվող դիմումին նախորդող օրվանից որոշակի ժամանակահատվածում) այժմ երկարացվել է մետաղական օգտակար հանածոների պարագայում և հասցվել 10 տարվան:

²⁰ <https://eiti.org/board-decision/2021-32>

²¹ <https://www.eiti.am/hy/legal-owners/?tab=104>

²² «Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին Օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-247-Ն ՀՀ օրենք (2021թ. հունիսի 03), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153772>

²³ «Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին Օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-172-Ն ՀՀ օրենք (2021թ. ապրիլի 14), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152132>

17. Ավելացվել է նաև նոր կարգավորում, որի համաձայն (42-րդ հոդվածի 2-րդ մասի 2.3 կետ) օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրված հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման թույլտվության գործողության ժամկետն օգտակար հանածոյի հանքավայրի պաշարների վերագնահատման հաշվետվության հաստատումից հետո՝ 20 օրվա ընթացքում, ուսումնասիրության թույլտվություն կրողի ներկայացրած դիմումի հիման վրա կարող է երկրաբաձգվել ևս մեկ տարով՝ արդյունահանման նախագիծը կազմելու համար:
18. Փոփոխվել են նաև մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով դիմումներին ներկայացվող որոշակի նախապայմաններ (Օրենսգրքի 49-րդ հոդված): Այսպես՝ եթե նախկինում իրավաբանական անձը մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով կարող էր դիմել լիազոր մարմին այն հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի համար, որտեղ դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ նախորդող 5 տարվա ընթացքում ընդերքաբանական փորձաքննության արդյունքներով հաստատվել են օգտակար հանածոյի պաշարներ, ապա այժմ դա հնարավոր է անել, եթե պաշարները հաստատվել են նախորդող 10 տարիների ընթացքում՝ փաստացի հավասարեցնելով մետաղական օգտակար հանածոյի և ոչ մետաղական օգտակար հանածոների նկատմամբ կիրառվող իրավական ռեժիմները:

▪ **Վարչական դատավարության համատեքստում վիճարկման հայցը վարույթ ընդունելու իրավական հետևանքները**

19. Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխությունների 2020թ. հուլիսի 16-ին ընդունված փաթեթով²⁴ բացառությունների ցանկը, որոնց դեպքում վիճարկման հայցի վարույթ ընդունելը չի կասեցնում վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը՝ համալրվել է այն դեպքերով, երբ վիճարկվում է ընդերքօգտագործման իրավունքի դադարման կամ կասեցման վարչական ակտը: Հարկ է նշել, սակայն, որ վարչական ակտի կատարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող է կասեցվել դատարանի կողմից (համապատասխան հայցի ապահովման միջնորդության ներկայացմամբ), որի պարագայում ընկերությունը շարունակում է համարվել ընդերքօգտագործող:
- Ընդհանուր առմամբ, նման կարգավորմամբ փաստացի բացառվել է ընթացակարգերի չարաշահումն ընդերքօգտագործողների կողմից: Բացի այդ, նշված փոփոխությունների արդյունքում ստացվում է, որ այն ընկերությունները, որոնք բողոքարկել են ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վարչական ակտը նախքան վերոնշյալ 2020թ. հուլիսի 16-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-399-Ն օրենքի ուժի մեջ մտնելը (այն է՝ 16.08.2020թ.), համարվում են ընդերքօգտագործող, քանի որ ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին վարչական ակտը կասեցված է և ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումը ուժի մեջ չի կարող

²⁴ «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենք (2020թ. հուլիսի 16), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145078>:

մտնել, քանի դեռ ավարտված չեն ընդերքօգտագործման իրավունքի կրողի նկատմամբ վերջինիս իրավունքի հետ կապված դատավարական գործընթացները:

▪ **Արդյունահանման նախագծին վերաբերող պայմանների փոփոխում**

20. Կատարվել են փոփոխություններ, որոնք վերաբերվում են արդյունահանման նախագծերին ներկայացվող պահանջներին: Նախ՝ Օրենսգրքի 50-րդ հոդվածը համալրվել է 1.1, 1.2, 1.3 և 1.4 կետերով, որոնց համաձայն նախագիծն այսուհետ պետք է պարունակի.
 - հանքավայրի պաշարների գնահատման համար հիմք հանդիսացած՝ օգտակար հանածոյի արդյունահանման և վերամշակման տեխնիկատնտեսական և տեխնոլոգիական հիմնարար ցուցանիշները և նախագծի համապատասխանությունն այդ ցուցանիշներին,
 - մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը: Եթե մետաղական օգտակար հանածոյի դեպքում հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը գերազանցում է հանքավայրի տարեկան արտադրողականության 25-ապատիկը, ապա կազմվում և ներկայացվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների արդյունահանման ընդհանուր պլանը՝ ըստ 25-ամյա արդյունահանման փուլերի՝ մանրամասն կազմելով փորձաքննվող առաջին փուլի նախագիծը,
 - մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝
 - ա. տարեկան մինչև 500 հազ. տոննա արտադրողականության դեպքում՝ պարտադիր կիրառմամբ միայն պինդ պոչանքների առաջացման տեխնոլոգիան,
 - բ. պարտադիր կիրառմամբ ջրի փակ շրջանառու համակարգը,
 - գ. պոչամբար նախատեսված լինելու դեպքում՝ պոչամբարի տեղադիրքի նկարագրությունը, քարտեզագրական նյութերը և կառուցման եղանակի հակիրճ նկարագրությունը՝ բացառելով վերընթաց եղանակով պոչամբարի կառուցումը:
21. Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծում պինդ օգտակար հանածոյի դեպքում՝ հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը ներկայացնելու պահանջն այժմ բաժանվում է երկու առանձին իրավական ռեժիմների, որոնք կիրառելի են մետաղական օգտակար հանածոների պարագայում և ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների դեպքում:
22. Առաջին դեպքում (մետաղական օգտակար հանածոներ) ներկայացվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը: Եթե մետաղական օգտակար հանածոյի դեպքում հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների քանակը գերազանցում է հանքավայրի տարեկան արտադրողականության 25-ապատիկը, ապա կազմվում և ներկայացվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների արդյունահանման

ընդհանուր պլանը՝ ըստ 25-ամյա արդյունահանման փուլերի՝ մանրամասն կազմելով փորձաքննվող առաջին փուլի նախագիծը:

▪ **Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը**

23. 2021թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է թիվ N 1733-ն որոշումը՝ «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. օգոստոսի 23-ի N 1079-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»²⁵:

24. Նոր կարգի համաձայն՝
Դրամագլխին գումարները հատկացվում են նախնական հատկացման և ընթացիկ հատկացումների ձևով:

Նախնական հատկացման չափը հաշվարկվում է դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափի առնվազն 15 տոկոսի չափով և սահմանվում է ընդերքօգտագործման պայմանագրով: Հաշվարկման բազային չափն օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով կամ ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքն է:

Դրամագլխին նախնական հատկացումը կատարվում է ընդերքօգտագործման պայմանագրի ստորագրման օրվան հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընթացիկ հատկացումները կատարվում են ընդերքօգտագործման պայմանագրով ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար սահմանված վճարումների ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար, բացառությամբ ընդերքօգտագործման պայմանագրի գործողության ժամկետի վերջին տարվա, ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

Ընթացիկ հատկացումների չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$S\text{Հ} = \frac{ՀԲ - ՆՀ}{\text{Ժ}}$$

որտեղ՝

- 1) SՀ-ն դրամագլխին կատարվող տարեկան հատկացումների չափն է.
- 2) ՀԲ-ն դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափն է.
- 3) ՆՀ-ն դրամագլխին կատարվող նախնական հատկացման չափն է.
- 4) Ժ-ն ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար վճարումների ժամկետն է (տարիներով):

Եթե հաշվետու տարվա արդյունքներով ընդերքօգտագործողի կողմից իրականացված և շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին թղթային կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված կատարողական ակտերով հավաստված ռեկուլտիվացիոն աշխատանքների գումարը գերազանցում է տվյալ ընդերքօգտագործողի ենթահաշվում առկա մնացորդի գումարը, ապա այդ

²⁵ <https://www.arlis.am/documentView.aspx?docid=157091>

դրական տարբերության չափով պակասեցվում է հաշվետու տարվան հաջորդող տարվա համար նախատեսված ընթացիկ հատկացման գումարը:

Պայմանագրով ընթացիկ հատկացումների կատարման ժամանակացույց սահմանված չլինելու դեպքում հատկացումները կատարվում են ընդերքօգտագործման իրավունքով սահմանված ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 20-ը:

▪ **Փոփոխություններ ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման ընթացակարգում**

25. «ՀՀ Ընդերքի մասին Օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022թ. մայիսի 25-ին ընդունված ՀՕ-143-Ն օրենքի համաձայն՝²⁶ Օրենսգրքի ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման վերաբերյալ համաձայնություն տալու կարգում կատարվել է լրացում: Վերջինիս համաձայն (23-րդ հոդվածի 4.1 կետ) *«Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ապա լիազոր մարմինը դիմումի գրանցման օրվանից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Դիմումին կից փաստաթղթերի ամբողջական և լրամշակված փաթեթը կրկին ներկայացնելուց հետո լիազոր մարմինը 30-օրյա ժամկետում որոշում է ընդունում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման համաձայնություն տալու կամ համաձայնություն տալը մերժելու մասին: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը»:*

▪ **Փոփոխություններ ընդերքօգտագործման պայմանագրի օրինակելի ձևում**

26. ՀՀ կառավարությունը 2021թ. մարտի 4-ի թիվ N 312 (*«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. մարտի 22-ի N 437-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»*)²⁷ ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերում կատարել են փոփոխություններ, որոնք վերաբերվում են պայմանագրերում փոփոխությունների կատարելու հիմքերին: Այսպես՝ նոր խմբագրությամբ 7-րդ կետն այժմ շարադրված է հետևյալ կերպ.
«Օրենսդրությամբ սահմանված դեպքերում ընդերքօգտագործման իրավունքի փոփոխության (թույլտվության ժամկետի երկարաձգում, ընդերքի տեղամասի ընդլայնում, ընդերքի տեղամասի մի մասի հրաժարում, օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխություն, լեռնահատկացման ակտի փոփոխություն / երկրաբանական ուսումնասիրության ծրագրի փոփոխություն), ինչպես նաև կողմերի փոխադարձ համաձայնությամբ կողմերի հարաբերությունները կարգավորող և օրենսդրությանը չհակասող այլ պայմանների ներառման կամ փոփոխման դեպքերում կողմերն ընդերքօգտագործման պայմանագրում կատարում են համապատասխան փոփոխություններ»:

²⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=164453>

²⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=150627>

▪ **Փոփոխություններ բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին օրենսդրական կարգավորումներում**

27. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ են կատարվել 2020թ. մայիսի 27-ին²⁸: Այս փոփոխությունների համաձայն, ի տարբերություն նախկինում գործող խմբագրության, որի համաձայն մասհանումների չափերը որոշելիս հիմք էր ընդունվում 2018թ. հունվարի 1-ից սկսած՝ միասնական հաշվից բնապահպանական հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին հաշվեգրված բնապահպանական հարկի հանրագումարը, նոր խմբագրությամբ 1-ին հոդվածի երկրորդ պարբերության համաձայն՝ *«Մասհանումների չափերը որոշվում են՝ ելնելով սույն հոդվածում նշված համապատասխան ընկերությունների կողմից առաջիկա բյուջետային տարվան նախորդող երկրորդ, երրորդ և չորրորդ տարիների արդյունքներով պետական բյուջե փաստացի վճարված (2018թ. և հետագա տարիների համար՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկներով հաշվարկված) բնապահպանական հարկի հանրագումարից՝ պակասեցնելով այն բյուջետային տարվան նախորդող առաջին երկու տարիների կտրվածքով՝ սույն օրենքով սահմանված կարգով համապատասխան համայնքներին կատարված մասհանումների չափով: Համայնքների և (կամ) բնակավայրերի ցանկի կազմումը և ըստ համայնքների և (կամ) բնակավայրերի մասհանումների բաշխման չափի հաշվարկումն իրականացնում է շրջակա միջավայրի բնագավառի լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»:* Նշված փոփոխությունները «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի իմաստով տարածելի է նաև մետաղական հանքերի ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների նկատմամբ:
28. Լրացվել է նաև ծրագրի հրապարակմանը վերաբերող դրույթը, մասնավորապես՝ օրենքի 3-րդ հոդվածի առաջին պարբերության վերջին նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

*«Ծրագիրը յուրաքանչյուր տարի հրապարակվում է՝
 ա. համայնքի ղեկավարի կողմից համայնքապետարանի կայքում և (կամ)
 բ. համապատասխան մարզապետարանի կայքում՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ»:*

29. Նույն հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.
*«Ընթացիկ տարվա Ծրագրի իրականացման վերաբերյալ համայնքի ղեկավարը կազմում է հաշվետվություն և ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը: Հաշվետվության ձևը հաստատում է տարածքային կառավարման բնագավառի պետական լիազոր մարմինը: Համայնքի ավագանու հաստատած հաշվետվությունը մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը հրապարակվում է՝
 ա. համայնքի ղեկավարի կողմից համայնքապետարանի կայքում և (կամ)*

²⁸ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=143032>

բ. համապատասխան մարզպետարանի կայքում՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:»

30. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում մեկ այլ փոփոխությունների փաթեթ ընդունվել է 2022թ. մայիսի 25-ին²⁹: Վերջինիս համաձայն 2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող նոր խմբագրությամբ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «(...) Մասհանումների չափերը որոշվում են՝ ելնելով սույն հոդվածում նշված համապատասխան ընկերությունների կողմից առաջիկա բյուջետային տարվան նախորդող երկրորդ, երրորդ և չորրորդ տարիների արդյունքներով բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկներով հաշվարկված բնապահպանական հարկի հանրագումարից՝ պակասեցնելով այն առաջիկա բյուջետային տարվան նախորդող առաջին տարվա համար համապատասխան համայնքների համար պետական բյուջեով նախատեսված և երկրորդ տարվա համար համայնքին փաստացի հատկացված մասհանումների հանրագումարի չափով: (...)»:
31. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բնապահպանական ծրագրի նախագիծը կամ բնապահպանական ծրագրի փոփոխությունները մշակում է համայնքի ղեկավարը՝ հիմք ընդունելով տվյալ մարզի կամ համայնքի զարգացման կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերը կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերը կամ շրջակա միջավայրի կամ առողջապահության ոլորտում համայնքի առաջնահերթությունները: Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանվող գումարների հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերի մշակման կարգը սահմանում է շրջակա միջավայրի ոլորտի լիազոր մարմինը»:
32. Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումները կամ դրանում համայնքի ղեկավարի կողմից առաջարկվող փոփոխությունները համաձայնեցվում են շրջակա միջավայրի ոլորտի և առողջապահության ոլորտի լիազոր մարմինների հետ: Բնապահպանական ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները կամ դրանց փոփոխությունները շրջակա միջավայրի ոլորտի և առողջապահության ոլորտի լիազոր մարմինների հետ համաձայնեցման կարգը սահմանում է Կառավարությունը»:
33. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բնապահպանական ծրագրի նախագիծը կամ դրանում փոփոխություններ նախատեսող առաջարկությունները շրջակա միջավայրի ոլորտի լիազոր մարմին համաձայնեցման ներկայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, համայնքի ղեկավարը հրապարակում է համայնքի պաշտոնական կայքում: Վերջինիս բացակայության դեպքում համայնքի ղեկավարի ներկայացմամբ դրանք հրապարակվում են համապատասխան մարզպետարանի պաշտոնական կայքում»:

▪ **Ստուգումներ և բնապահպանական վերահսկողություն**

34. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում 2020թ. հուլիսի 16-ին ընդունված

²⁹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=164449>

փոփոխությունների փաթեթով³⁰ սահմանվել է նոր բացառություն միևնույն տնտեսավարող սուբյեկտում և միևնույն բնագավառում ստուգումների անցկացման սահմանափակումից (օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասը լրացվել է 5.3-րդ կետով), որի համաձայն ստուգում հնարավոր է իրականացնել նաև եթե «*Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով սահմանված ընդերքաբանական փորձաքննության ներկայացված նյութերի և փաստացի իրականացված աշխատանքների հետ համեմատման, ինչպես նաև դրանց արժանահավատության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ընդերքօգտագործման ոլորտի լիազոր մարմինը ներկայացրել է համապատասխան գրություն*»:

35. Մի շարք փոփոխություններ են կատարվել նաև «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում 2020թ. հոկտեմբերի 6-ի փոփոխությունների փաթեթի հիման վրա.³¹ «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը լրացվել է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից դիտարկում իրականացնելու կարգը (հոդված 26.1.), ինչպես նաև ստուգվող սուբյեկտի գործունեության կամ գործողության կասեցումը (հոդված 29.1.) կարգավորող դրույթներով:
36. Մասնավորապես՝ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է մի շարք նոր պարբերություններով, այդ թվում՝ **«դիտարկում՝ բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից բնապահպանական օրենսդրության պահանջների խախտման կանխարգելման, բացահայտման և նախագուշացման նպատակով իրականացվող գործողությունների ամբողջություն.** (...) **գործունեության կասեցում՝** գործընթաց, որի միջոցով սույն օրենքով սահմանված դեպքերում անհապաղ ժամանակավորապես դադարեցվում է ստուգվող սուբյեկտի գործունեությունը՝ մարդու իրավունքների և առողջության, պետության շահերի, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանման նպատակով»:
37. Օրենքի 26.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **«Դիտարկումն իրականացվում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա, որում նշվում են դիտարկում իրականացնող մարմնի անվանումը, դիտարկում իրականացնող անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, դիտարկման նպատակը, ուղղությունը, ժամանակահատվածը և դիտարկվող հարցերի շրջանակը: Դիտարկում իրականացնելու վերաբերյալ հրամանը տրվում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարի հիմնավորված զեկուցագրի հիման վրա»:**
38. Օրենքի 29.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
«Բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարը որոշում է կայացնում ստուգվող սուբյեկտի գործունեությունը կասեցնելու վերաբերյալ, եթե ստուգման ընթացքում պարզվում է, որ՝
 1) ստուգվող սուբյեկտն առանց կենդանական կամ բուսական աշխարհի օբյեկտի օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթի օգտագործում է կենդանական կամ բուսական աշխարհի օբյեկտ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բույսերի կամ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակ.
 2) ստուգվող սուբյեկտն առանց լիցենզիայի գործածում է առաջին, երկրորդ կամ երրորդ դասի վտանգավորության աստիճան ունեցող վտանգավոր թափոններ.

³⁰ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=145076>

³¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=146629>

- 3) ստուգվող սուբյեկտն իրականացնում է ջրօգտագործում՝ առանց օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ջրօգտագործման թույլտվություն ստանալու:
 - 4) ստուգվող սուբյեկտն իրականացնում է ընդերքօգտագործում՝ առանց օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու:
 - 5) առկա է շրջակա միջավայրի կամ ընդերքօգտագործման ոլորտի լիազոր մարմինների կողմից ստուգվող սուբյեկտի իրավունքը կասեցնող կամ դադարեցնող՝ ուժի մեջ մտած վարչական ակտ, սակայն ստուգվող սուբյեկտի կողմից փաստացի իրականացվում է գործունեություն:
 - 6) ստուգվող սուբյեկտն իրականացնում է գործունեություն առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության, եթե օրենքով նախատեսված է, որ նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
 - 7) ստուգվող սուբյեկտն իրականացնում է ջրօգտագործում էկոլոգիական թողքի հաշվին:
 - 8) ստուգվող սուբյեկտն իրականացնում է ջրօգտագործում ռազմավարական ջրային պաշարի կամ ազգային ջրային պաշարի հաշվին՝ օրենքի խախտմամբ:
 - 9) ստուգվող սուբյեկտն իրականացնում է անշարժ աղբյուրից աղտոտող նյութերի արտանետում՝ առանց օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետման թույլտվությունների:
 - 10) ստուգվող սուբյեկտն առանց որսի իրավունքը հավաստող փաստաթղթերի իրականացնում է սիրողական կամ արդյունագործական որս:
 - 11) ստուգվող սուբյեկտը գործածում է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութեր կամ թունաքիմիկատներ»:
39. Օրենքի 29.1-ին հոդվածը օրենքի ընդունման պահին արդեն իսկ գործունեություն իրականացնող սուբյեկտների համար ուժի մեջ է մտել 18.10.2021թ.:

2.1.2. Հաշվետու ժամանակահատվածում ֆիսկալ ռեժիմում տեղի ունեցած փոփոխություններ

40. Փոփոխություններ հանքարդյունաբերական կազմակերպություններին հարկային արձակուրդներ տրամադրելու առնչությամբ տեղի չեն ունեցել: Ինչ վերաբերում է վճարումներին, որոնք չեն գրանցվում ազգային կամ համայնքային բյուջեներում (օրինակ՝ արտաբյուջետային միջոցներ), կարևոր է հաշվի առնել բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարները՝ ընդերքօգտագործման ընթացքում խախտված հողերի վերականգնման համար և մշտադիտարկումների իրականացման վճարները՝ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար:

- **Դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարները**

41. Դրամագլխի հատկացումները կատարվում են ընդերքօգտագործողի կողմից: Օգտակար հանածո արդյունահանողների կողմից սահմանված չափով կատարվող

հատկացումների հաշվին ստեղծվում է բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի:

Դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանում է կառավարությունը: Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումներ կատարելու ընդերքօգտագործողի պարտականությունը ներառվում է ընդերքօգտագործման պայմանագրում: Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի գումարները պահվում են կենտրոնական գանձապետարանում բացված լիազոր մարմնի արտաբյուջետային հաշվում և բացառապես օգտագործվում են՝

- 1) ընդերքօգտագործողի կողմից իրականացվող՝ նախագծով ստանձնված բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարման նպատակով:
- 2) ընդերքօգտագործողի կողմից նախագծով ստանձնված, բայց իր կողմից չիրականացված բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարման նպատակով:
- 3) ընդերքօգտագործողի գործունեության հետևանքով բնությանը և շրջակա միջավայրին հասցված և նրա կողմից չհատուցված վնասների վերականգնման նպատակով:

Բնապահպանական աշխատանքների իրականացման համար դրամագլխից ընդերքօգտագործողին տրամադրվող գումարը չի կարող գերազանցել ընդերքօգտագործողի կատարած դրամագլխի հատկացումները:

Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարումից հետո ընդերքօգտագործողի կողմից բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված գումարի մնացորդը վերադարձվում է ընդերքօգտագործողին:

Դրամագլխին գումարները հատկացվում են նախնական հատկացման և ընթացիկ հատկացումների ձևով:

Նախնական հատկացման չափը հաշվարկվում է դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափի առնվազն 15 տոկոսի չափով և սահմանվում է ընդերքօգտագործման պայմանագրով: Հաշվարկման բազային չափն օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով կամ պայմանագրով նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքն է:

Դրամագլխին նախնական հատկացումը կատարվում է պայմանագրի ստորագրման օրվան հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընթացիկ հատկացումները կատարվում են պայմանագրով ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար սահմանված վճարումների ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար, բացառությամբ

պայմանագրի գործողության ժամկետի վերջին տարվա, պայմանագրով սահմանված ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

Ընթացիկ հատկացումների չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$SC = \frac{ՀԲ - ՆՀ}{Ժ}$$

որտեղ՝

- 1) SՀ-ն դրամագլխին կատարվող տարեկան հատկացումների չափն է.
- 2) ՀԲ-ն դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափն է.
- 3) ՆՀ-ն դրամագլխին կատարվող նախնական հատկացման չափն է.
- 4) Ժ-ն ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար վճարումների ժամկետն է (տարիներով):

Եթե հաշվետու տարվա արդյունքներով ընդերքօգտագործողի կողմից իրականացված և շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին թղթային կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված կատարողական ակտերով հավաստված ռեկուլտիվացիոն աշխատանքների գումարը գերազանցում է տվյալ ընդերքօգտագործողի ենթահաշվում առկա մնացորդի գումարը, ապա այդ դրական տարբերության չափով պակասեցվում է հաշվետու տարվան հաջորդող տարվա համար նախատեսված ընթացիկ հատկացման գումարը:

Պայմանագրով ընթացիկ հատկացումների կատարման ժամանակացույց սահմանված չլինելու դեպքում հատկացումները կատարվում են ընդերքօգտագործման իրավունքով սահմանված ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 20-ը:

▪ **Մշտադիտարկումների իրականացման վճար**

42. Մշտադիտարկումների իրականացման հիմնական նպատակն է ստանալ տեղեկատվություն փակված հանքի, արդյունահանման արդյունքում առաջացած արտադրական լցակույտերի տարածքի երկրաբանական միջավայրի, հիդրոերկրաբանական (պոչանքային տնտեսություններից արտահոսքերի հետևանքով ջրերի որակի և ռեժիմի փոփոխություն, դրենաժային ջրերի առաջացում) և ինժեներատեխնիկական (լեռնային ապարների զանգվածում կամ երկրի մակերևույթին դեֆորմացիաների զարգացում, բացահանքերի կողերի լեռնային ապարների և արտադրական լցակույտերի շեղերի դեֆորմացում, սողանքային և կարստային գործընթացների ակտիվացում, տեխնածին երկրաշարժերի առաջացում) պայմանների փոփոխության մասին: Մշտադիտարկումների իրականացման նպատակով վճարներ կատարողներ են Օրենսգրքով սահմանված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործողները:

Մշտադիտարկումների իրականացման նպատակով հատկացումները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Նախնական հատկացման չափը սահմանվում է համապատասխան ընդերքօգտագործման մասին պայմանագրով, և այն չպետք է պակաս լինի մշտադիտարկումների իրականացման նպատակով կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափի 15 տոկոսից:

Հատկացման ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա կտրվածքով մշտադիտարկումների իրականացման նպատակով հատկացման ենթակա ընթացիկ հատկացումների գումարը չպետք է պակաս լինի հատկացումների նվազագույն չափից, որը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$ՄՎ = \frac{ՀԲ - ՆՎ}{\sigma}$$

որտեղ՝

- 1) ՄՎ-ն մշտադիտարկումների իրականացման նպատակով կատարվող տարեկան հատկացումների նվազագույն չափն է՝ հազ. ՀՀ դրամներով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ.
- 2) ՀԲ-ն մշտադիտարկումների իրականացման նպատակով կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափն է՝ հազ. ՀՀ դրամներով.
- 3) ՆՎ-ն մշտադիտարկումների իրականացման նպատակով կատարվող նախնական հատկացման չափն է՝ հազ. ՀՀ դրամներով,
- 4) σ -ն մշտադիտարկումների իրականացման նպատակով վճարումների կատարման ժամկետն է՝ տարիներով, բացառությամբ վերջին տարվա:

Մշտադիտարկումների իրականացման նպատակով հատկացված գումարները պահվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական գանձապետարանում լիազոր մարմնի անվամբ բացված դեպոզիտային հաշվում: Մշտադիտարկումների իրականացման նպատակով կատարվող հատկացումների գլխավոր կարգադրիչ է համարվում լիազոր մարմինը:

Տվյալ տարում մշտադիտարկումների իրականացումը ֆինանսավորվում է վերը նշված դեպոզիտային հաշվից Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական նպատակային ֆոնդ» արտաբյուջետային հաշիվ մուտքագրված գումարների հաշվին:

▪ **Պետական տուրք**

43. 15.07.2021թ. ընդունված «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքով նախատեսվել է 04.09.2021թ.-ից սահմանել պետական տուրք հետևյալ ապրանքների արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար: Մասնավորապես.

«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ՄՏԳ ԱԱ) դասակարգչի 2603000000 ծածկագրին դասվող պղնձի խտահանք արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵՍՄ երկրների (մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթաչափը)

**բազային տուրքի
160-պատիկի չափով**

«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (USԳ ԱԱ) դասակարգչի 2613 ծածկագրին դասվող մոլիբդենի խտահանքեր արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների (մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափը)

**բազային տուրքի
800-պատիկի չափով**

«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (USԳ ԱԱ) դասակարգչի 7202700000, 8102 ծածկագրին դասվող մոլիբդենի (բացառությամբ 810297000) արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների (մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափը)

**բազային տուրքի
1000-ապատիկի չափով**

44. Սույն օրենքի ընդունումը օրենսդիրը պայմանավորել է ՀՀ համար ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների (պղնձի և մոլիբդենի խտանյութ, ֆեռոմոլիբդեն) արտաքին առևտուրը կանոնակարգելու անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին համաշխարհային շուկայում արձանագրվում է գունավոր մետաղների բորսայական գների աճ, ինչը բարենպաստ պայմաններ է ստեղծում Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի եկամուտների աճի և ոլորտի հետագա զարգացման համար: Մասնավորապես՝ գնահատվել է, որ սկսած 2020թ. ապրիլից համաշխարհային շուկայում գրանցվում է պղնձի միջազգային գնի աճ կամ կայուն բարձր գին: Պղնձի գինը միջազգային բորսայում սկսած 2020թ. դեկտեմբերից գերազանցել է 7,500 ԱՄՆ դոլարը, իսկ օրենքն ընդունելու պահին այն կազմել է 9,225 ԱՄՆ դոլար: Մոլիբդենը, սկսած 2018թ. ապրիլից, գրանցել է կայուն գին՝ 24,000 ԱՄՆ դոլարի չափով: Ըստ էկոնոմիկայի նախարարության ուսումնասիրությունների՝ ՀՀ պղնձի հանքերի զգալի մասը շահութաբեր է 5,300 ԱՄՆ դոլար գնի պարագայում և նույնիսկ 7,500 ԱՄՆ դոլարի պարագայում հաշվարկված պետական տուրքի վճարումից հետո ոլորտը մնում է բավական շահութաբեր:
45. Հաշվի առնելով, որ վերը նշված գնային արտաքին պահանջարկը բարենպաստ պայմաններ է ստեղծում Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի եկամուտների աճի և ոլորտի հետագա զարգացման համար, ինչը կարող է ամուր նախադրյալներ ստեղծել ոլորտի հետագա արդիականացման և միջազգային պահանջների համապատասխան հանքարդյունաբերական և լեռնամետալուրգիական համալիր ձևավորելու համար, որոշում է կայացվել

սահմանել պետական տուրք պղնձի, մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիբդենի՝ դեպի երրորդ երկրներ արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար՝ նպատակ ունենալով կարգավորել հետևյալ խնդիրները՝

- Երկրի ընդերքի շահագործումից գներացվող բարձր շահույթից ուղղել մշակող արդյունաբերության և հանքարդյունաբերության ոլորտում ռազմավարական ակտիվների զարգացմանը և արդյունաբերական արժեշոթանների խորացմանը: Մասնավորապես, նախատեսվում է խորացնել պղնձի մշակման արժեշոթան՝ նախնական փուլում հիմնվելով բարձր մաքրության կատոդային պղնձի արտադրության վրա, իսկ այնուհետև խթանել հարակից արտադրատեսակների էկոհամակարգի արագ զարգացումը:
- Խթանել հանքերի առավել արդյունավետ շահագործումը և գործող հանքավայրերի արտադրողականության բարձրացումը՝ նոր տեխնոլոգիաների ներդրմամբ:
- Խթանել շրջակա միջավայրի նկատմամբ առավել պատասխանատու հանքարդյունաբերությունը՝ հնարավորինս նվազեցնելով վնասակար արտանետումները:

- 46. Ընդ որում օրենսդիրը սույն կարգավորումը համարել է ժամանակավոր լուծում՝ մինչև ոլորտին վերաբերող քաղաքականության ամբողջական և խորքային վերանայումը՝ բոլոր ոլորտային գերատեսչությունների ներգրավմամբ:
- 47. Ի սկզբանե նախատեսվել է, որ այս փոփոխությունները ուժը կորցնելու են 2023թ. հունվարի 1-ից, սակայն հաշվի առնելով համաշխարհային շուկայում տեղի ունեցած փոփոխությունները՝ մասնավորապես՝ գունավոր մետաղների գների անկումը, ՀՀ կառավարությունը նպատակահարմար է գտել դադարեցնել վերը նշված ապրանքների արտահանման համար լիցենզիաների տրամադրումը և պետական տուրքի գանձումը 2022թ. սեպտեմբերի 10-ից:

▪ **Ռոյալթի**

- 48. ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների համաձայն 2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտնում ռոյալթիի հաշվարկման նոր կարգ:
- 49. Նոր կարգի ընդունման անհրաժեշտությունը օրենսդիրը պայմանավորում է մետաղական օգտակար հանածոների համար վճարվող ռոյալթիի համակարգը մետաղների միջազգային գներին ավելի արձագանքող և ավելի պրոգրեսիվ դարձնելով:
- 50. Ակնկալվում է, որ սույն փոփոխությունների և լրացումների կատարումը հնարավորություն կտա.
 - 1) ձևավորել հանքարդյունաբերության ոլորտի հարկման կայուն և կանխատեսելի հարկային միջավայր, որը նաև կապահովի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների մրցունակությունը միջազգային շուկաներում, կնպաստի ոլորտի ներդրումային գրավչության բարձրացմանը,
 - 2) մետաղական օգտակար հանածոների համար վճարվող ռոյալթիի համակարգը դարձնել առավել արդարացի և տնտեսագիտական տեսանկյունից առավել հիմնավորված,
 - 3) մետաղական օգտակար հանածոների համար վճարվող ռոյալթիի համակարգը դարձնել մետաղների միջազգային գներին ավելի արձագանքող և ավելի պրոգրեսիվ՝ դրանով իսկ մետաղների բարձր գների պայմաններում պետական

բյուջեի համար ապահովելով լրացուցիչ հարկային եկամուտներ: Մասնավորապես, նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է ռոյալթիի տեսքով հավաքագրել այնքան լրացուցիչ գումար, որը գրեթե համարժեք կլինի ներկայումս պետական տուրքի տեսքով հավաքագրվող գումարի կեսին: Ընդ որում, ներկայումս պետական տուրքի տեսքով հավաքագրվող գումար ասելով՝ ի նկատի է առնվում պետական տուրքի տեսքով փաստացի հավաքագրվող գումարի շուրջ 70 տոկոսը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ գումարի մնացած 30 տոկոսը, միննույն է, շահութահարկի և ռոյալթիի տեսքով հավաքագրվելու էին, եթե պետական տուրքի համակարգը ներդրված չլիներ, և եթե վճարված պետական տուրքի գումարները նվազեցված չլիներին շահութահարկի և ռոյալթիի հաշվարկման բազաներից՝ որպես համախառն եկամտի նվազեցումներ:

51. Մասնավորապես, 2022թ. հունիսի 15-ին ընդունված «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն 2023թ.-ից սկսած ռոյալթիի հաշվարկման նպատակով կիրառվելու են հետևյալ հարկման բազաները և դրույքաչափերը.

1) F_1 - հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված խտանյութի, խտանյութի փոխարեն կամ առանց խտանյութի ստացման ձուլվածքի կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի (այսուհետ՝ խտանյութի հետ միասին՝ արտադրանք) իրացման շրջանառություն.

2) F_2 - շահույթ նախքան հարկումը, որը հաշվարկվում է որպես F_1 -ի և ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված՝ F_1 -ի հետ անմիջականորեն կապված նվազեցումների (բացառությամբ ֆինանսական ծախսերի, սույն բաժնով սահմանված ռոյալթիի և նախորդ տարիների հարկային վնասների) դրական տարբերություն.

3) F_3 - շահույթ նախքան հարկումը, որի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով, ընդ որում, F_3 -ի հիման վրա ռոյալթիի գումարը հաշվարկվում է միայն այն դեպքում, երբ ռոյալթի վճարողի մոտ F_3 -ը մեծ է 0-ից.

$$F_3 = F_2 - \text{ՖՕ} - (F_1 \times R_1) - (F_2 \times R_2) - (F_1 \times 0.15)$$

որտեղ՝ ՖՕ-ն ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ֆինանսական ծախսերն են, որոնք F_3 -ի հաշվարկման նպատակով հաշվի են առնվում Կառավարության սահմանած կարգով, դեպքերով և չափերով, իսկ R_1 -ը և R_2 -ը՝ ՀՀ հարկային օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված ռոյալթիի դրույքաչափերը:

52. Նշվածի կիրառության իմաստով՝ F_2 -ի հաշվարկման ժամանակ՝

1) իրացման շրջանառությունից ֆինանսական ծախսերի, սույն բաժնով սահմանված ռոյալթիի և նախորդ տարիների հարկային վնասների նվազեցում չի կատարվում՝ անկախ այդ ծախսերը և հարկային վնասները հանքավայրերի շահագործման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության հետ կապված լինելու հանգամանքից.

2) բնօգտագործման վճար վճարողի վարչական ծախսերի, իրացման ծախսերի և ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի նվազեցումները հաշվի են առնվում համախառն եկամտի մեջ ռոյալթիի իրացման շրջանառությանը համապատասխանող տեսակարար կշռով:

53. Ընդ որում վերը նշված ռոյալթիի բազաների նկատմամբ կիրառվելու են հետևյալ դրույքաչափերը.
- 1) Բ1-ի համար՝ R1, որը հավասար է 4 տոկոսի.
 - 2) Բ2-ի համար՝ R2, որը հավասար է 12.5 տոկոսի.
 - 3) Բ3-ի համար՝ R3, որը հավասար է 15 տոկոսի:

Բացի այդ սահմանվել է նաև, որ.

- Խտանյութի իրացման շրջանառության հաշվարկման նպատակով հիմք է ընդունվում Կառավարության սահմանած ցանկում ներառված լաբորատորիաների տված եզրակացությունների հիման վրա որոշված՝ մատակարարված խտանյութում մետաղների վերջնական պարունակությունը:
 - Խտանյութի մատակարարման պայմանագրում գնորդման համար խտանյութի մատակարարման օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամիսը ներառյալ ժամանակահատվածից ավելի երկար ժամանակահատված նախատեսված լինելու դեպքում մատակարարված խտանյութի ֆիզիկական ծավալի գինը հաշվարկելու համար հիմք են ընդունվում խտանյութի մատակարարման օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա համար ձևավորված՝ մետաղների միջազգային միջին գները:
 - Այն դեպքում, երբ ռոյալթիի հաշվետու ժամանակաշրջանը ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով ռոյալթիի իրացման շրջանառությունը 15 տոկոս կամ ավելի չափով ցածր է նույն ամսվա ընթացքում մատակարարված խտանյութում՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ մատակարարման պայմանագրով վճարվող հանդիսացող մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների տվյալ ամսվա միջազգային գների հիման վրա հաշվարկված իրացման շրջանառությունից, ապա այդ ամսվա համար իրացման շրջանառություն է համարվում մատակարարված խտանյութում՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ մատակարարման պայմանագրով վճարվող հանդիսացող մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների տվյալ ամսվա միջազգային միջին գների 85 տոկոսի արտադրյալը:
54. Հարկ ենք համարում նշել, որ 2022թ. մարտի 4-ին ընդունված «ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի համաձայն պետական բյուջեի ծախսերում նախատեսվում է նաև ազդակիր համայնքների բյուջեներին հատկացնել անվերադարձ կարգով տրվող մասհանումներ՝ յուրաքանչյուր ռոյալթի վճարողի կողմից օրենքով սահմանված չափով և կարգով յուրաքանչյուր հաշվետու տարում պետական բյուջե վճարված ռոյալթիի չափի երկու տոկոսից:

2.2. Ընկերությունների հետ կնքված պայմանագրերում հաշվետու տարում կատարված փոփոխություններ

55. Հաշվետու ժամանակաշրջանում տեղի են ունեցել փոփոխություններ թվով 6 օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրերում, որոնք գերազանցապես վերաբերվում են ժամկետների, պաշարների կամ այլ տվյալների հստակեցմանը, ինչպես նաև որոշ դեպքերում ընդերքօգտագործողների պարտավորությունների շրջանակների հստակեցմանը կամ ընդարձակմանը: Խնդրո առարկա պայմանագրերում արված փոփոխությունների համառոտագիրը ներկայացված է ստորև:
56. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության հետ 26.09.2012թ. կնքված թիվ ՊՎ – 245 վերաձևակերպված պայմանագրում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- 30.12.2020թ. փոփոխությունների փաթեթով Ամուլսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի նկատմամբ ընդերքօգտագործողի տիրապետման և օգտագործման իրավունքի տրամադրման ժամկետի ավարտը հետաձգվել է 03.04.2034թ.-ից 01.01.2036թ.
 - 19.09.2022թ. փոփոխությունների փաթեթով հանքավայրի նկատմամբ ընդերքօգտագործողի տիրապետման և օգտագործման իրավունքի տրամադրման ժամկետի ավարտը հետաձգվել է 01.01.2036թ.-ից 25.03.2039, իսկ շինարարական շրջանի վերջնաժամկետ է սահմանվել 28.10.2024թ.:
57. «**Լիճքվազ**» ՓԲ ընկերության հետ 22.11.2012թ. կնքված ՊՎ-293 վերաձևակերպված պայմանագրում կատարվել է ունեցել հետևյալ փոփոխությունը.
- 18.07.2022թ. համաձայնագրով ընդարձակվել են ընդերքօգտագործողի պարտավորությունների ծավալները, մասնավորապես ավելացել է
 - պարտավորություն ուսումնասիրել հանքաքարի վերամշակման ցուցանիշների բարելավման և պոչերի առանձին տեղակայման հնարավորությունները և այդ մասին հաշվետվություն ներկայացնել Լիազոր մարմնին նախքան 01.05.2022թ.,
 - պարտավորություն մշակել հարստացման ֆաբրիկայի կառուցման ընդհանրական պլանը նախքան 01.06.2020թ.,
 - պարտավորություն ձեռնարկելու մի շարք միջոցառումների ֆաբրիկայի կառուցումը նախաձեռնելու համար (ազդակիր համայնքի ծանուցում, հանրային քննարկումներ, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (այսուհետ՝ «ՇՄԱԳ»)):
58. «**Գեոպրոմայնինգ Գոլդ**» ՍՊ ընկերության հետ 20.10.2012թ. կնքված ՊՎ-189 վերաձևակերպված պայմանագրում կատարվել է հետևյալ փոփոխությունը.
- 21.10.2021թ. համաձայնագրով ընդարձակվել են ընդերքօգտագործողի պարտավորությունների ծավալները, մասնավորապես ավելացել է Լիազոր մարմնին Սոթքի ոսկու հանքավայրում 01.01.2011թ. դրությամբ հաստատված պաշարներից 01.01.2021թ. դրությամբ բացահանքի սահմաններում արդյունահանված, ենթադրյալ չհավաստված և չմարված պաշարների դուրսգրումը հիմնավորող հաշվետվություն ներկայացնելու պարտականություն:
59. «**Չաարատ Կապան**» ՓԲ ընկերության (նախկին «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ) հետ 27.11.2012թ. կնքված ՊՎ-183 վերաձևակերպված պայմանագրում կատարվել են հետևյալ փոփոխությունները.
- 29.08.2019թ. համաձայնագրով պայմանագրում կատարվել են մի շարք խմբագրական բնույթի փոփոխություններ՝ փոփոխվել է Լիազոր մարմնի անվանումը և հասցեն, փոփոխվել է ընդերքօգտագործողի անվանումը,
 - 06.05.2022թ. համաձայնագրով ընդարձակվել են ընդերքօգտագործողի պարտավորությունների ծավալները, մասնավորապես ավելացել է
 - պարտավորություն Լիազոր մարմնին ներկայացնելու հաշվետվություն Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրում 2008-2022թթ. ժամանակահատվածում մշակված տարածաշրջաններում թողնված բնամասերի հաշվառման և դրանց պաշարների հաշվարկման վերաբերյալ,
 - պարտավորություն մինչև 31.08.2022թ. Լիազոր մարմնին ներկայացնելու հանքավայրում օպտիմալ մշակման համակարգերի ընտրության և ներդրման փորձարարական աշխատանքների վերաբերյալ նախագիծ,
 - պարտավորություն (օպտիմալ մշակման համակարգի ներդրման անհրաժեշտության հիմնավորվածության դեպքում) նախքան 31.12.2023թ. Լիազոր մարմնին ներկայացնելու հանքավայրում ընտրված մշակման

- համակարգերով փորձարարական աշխատանքների արդյունքները և մշակման համակարգի կիրառման արդյունքների հետ համեմատական գնահատականը,
- պարտավորություն (եթե չհիմնավորվի օպտիմալ մշակման համակարգի ներդրման անհրաժեշտությունը) մինչև 31.08.2024թ. Լիազոր մարմինն ներկայացնելու հանքավայրի պաշարների վերագնահատման հաշվետվություն:
60. «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերության հետ 05.04.2013թ. կնքված ՊՎ-311 վերաձևակերպված պայմանագրում կատարվել է հետևյալ փոփոխությունը.
- 13.08.2020թ. համաձայնագրի հիման վրա տարեկան մարման ենթակա օգտակար հանածոների պաշարների քանակը 2020թ. համար սահմանվել է 3,490,000 տոննա, 2021թ. համար՝ 3,880,000 տոննա, իսկ 2022թ. սկսած յուրաքանչյուր տարվա համար՝ 4,360,000 տոննա, նախկինում սահմանված տարեկան 3,500,000 տոննայի փոխարեն, հստակեցվել են տրամադրվող պաշարների սահմանների կոորդինատները, փոփոխվել են հիմնական և ուղեկից բաղադրիչների քիմիական նկարագրերը: Ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ներկայացվող ֆինանսական առաջարկները թարմացվել են՝ այժմ ներառելով հարստացուցիչ ֆաբրիկայի վերազինման և պոչային տնտեսության համար 16,840,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի ներդրում նախքան 01.01.2022թ. կատարելու պարտավորություն: Նույն փոփոխությունների փաթեթով թարմացվել են նաև հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները, բնապահպանական կառավարման պլանը:
61. Ինչպես երևում է վերոգրյալից, միակ ընկերությունը, որի հետ կնքված օգտակար հանածոների արդյունահանման ընդերքօգտագործման պայմանագրերում արվել են փոփոխություններ սոցիալական պարտավորությունների տեսանկյունից, «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերությունն է:
62. Այսպես վերջինիս պայմանագրի մաս կազմող հանքի փակման ծրագրում ավելացել է պարտավորություն՝ աշխատուժի սոցիալական մեղմացման նպատակով իրականացնելու աշխատողների վերաորակավորման աշխատանքներ և կազմակերպել նրանց այլ ճյուղերում աշխատանքի տեղավարման աշխատանքներ: Պարտավորության տևողությունն է 6 ամիս և ենթադրում է այս նպատակով 27,000,000 ՀՀ դրամի ներդրման իրականացում:
63. «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերության սոցիալ-տնտեսական պարտավորությունների փոփոխությունների աղյուսակը ստորև.

Պարտավորության տեսակը	Տարեկան ներդրման ծավալները նախքան 13.08.2020թ ՀՀ դրամով	Տարեկան ներդրման ծավալները 13.08.2020թ.-ից հետո ՀՀ դրամով
Մեղրի համայնքի (նախկինում՝ միայն Ագարակ քաղաքի) զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն	6,500,000	36,000,000
Ագարակ քաղաքի մանկապարտեզ	1,500,000	1,200,000
հաշմանդամ երեխաների ֆինանսական աջակցություն	700,000	720,000
զոհված ազատամարտիկների ընտանիքներին ֆինանսական աջակցություն	600,000	720,000

Պարտավորության տեսակը	Տարեկան ներդրման ծավալները նախքան 13.08.2020թ ՀՀ դրամով	Տարեկան ներդրման ծավալները 13.08.2020թ.-ից հետո ՀՀ դրամով
Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի ֆինանսական աջակցություն	500,000 (միանվագ)	2,000,000 (այժմ տարեկան)
Այլ միջոցառումներ	500,000	բացակայում է

2.2 Հրապարակված ընդերքօգտագործման իրավունքների ռեգիստրի ամբողջականությունը (արդյոք բոլոր թույլտվությունները և ստանդարտով պահանջվող տվյալներն են ներառված)

1. ԱՃԹՆ պահանջ 2.3-ը սահմանում է.

«ԱՃԹՆ իրականացնող պետությունները պարտավոր են վարել հանրությանը հասանելի գրանցամատյան կամ կադաստրի համակարգ (համակարգեր), որը (որոնք) կպարունակի (կպարունակեն) հետևյալ արդիական և համակողմանի տեղեկությունները՝ ԱՃԹՆ իրականացման համաձայնեցված շրջանակում ընկերություններին տրամադրված լիցենզիաներից յուրաքանչյուրի վերաբերյալ.

i. լիցենզառուն (լիցենզառուները):

ii. որոշված լինելու դեպքում՝ լիցենզավորված տարածքի կոորդինատները: Այն դեպքում, երբ կոորդինատները որոշված չեն, կառավարությունը պարտավոր է ապահովել, որ լիցենզիայի տարածքի չափերի և տեղադիրքի մասին տվյալները բացահայտվեն լիցենզիաների գրանցամատյանում, և կոորդինատները կառավարության համապատասխան գործակալությունից հանրության համար հասանելի լինեն առանց անհիմն վճարների և սահմանափակումների: Բացահայտումները պետք է պարունակեն ցուցում այն մասին, թե ինչպես կարող են այդ կոորդինատները հասանելի դառնալ, ինչպես նաև, առկայության դեպքում, դրանք ձեռք բերելու արժեքը: Կառավարությունը պետք է նաև արձանագրի այն ծրագրերը և ժամանակացույցը, որոնց համաձայն այս տեղեկատվությունը կարող է ազատ և էլեկտրոնային եղանակով հասանելի դառնալ լիցենզիաների գրանցամատյանի միջոցով:

iii. հայտի ներկայացման ամսաթիվը, լիցենզիայի շնորհման ամսաթիվը և տևողությունը:

iv. արդյունահանման լիցենզիաների դեպքում՝ արդյունահանվող ապրանքատեսակը:

Ակնկալվում է, որ լիցենզիաների գրանցամատյանը կամ կադաստրը կպարունակի տեղեկություններ բոլոր տրված լիցենզիաների մասին, այդ թվում՝ ԱՃԹՆ իրականացման համաձայնեցված շրջանակից դուրս գտնվող ընկերություններին և անհատներին կամ խմբերին, ում վճարումները համաձայնեցված էականության շեմից ցածր են: Նման համակողմանի բացահայտմանը խանգարող բոլոր էական իրավական կամ գործնական խոչընդոտները պետք է արձանագրվեն և բացատրվեն՝ ներառելով տեղեկատվություն այդպիսի խոչընդոտների հաղթահարմանն ուղղված

կառավարության ծրագրերի և ցանկալի արդյունքներին հասնելու կանխատեսվող ժամանակացույցի մասին:

2. Տրամադրված թույլտվությունների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում, որում հրապարակված են մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրերը, մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի դադարեցման կամ հրաժարման վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև հրապարակվում են և տարեկան մի քանի անգամ թարմացվում են մետաղական օգտակար հանածոների արդյունահանման մասով գործունեության վերաբերյալ և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ:³²
3. Կայքում հրապարակված տեղեկատվությունն ամբողջությամբ ծածկում է ԱՃԹՆ պահանջներով նախատեսված կետերը և ներառում է՝
 - թույլտվություն ստացած իրավաբանական անձի անվանումը,
 - թույլտվությունը ստանալու համար ներկայացված դիմումի ամսաթիվը,
 - թույլտվության համարը, տրամադրման ամսաթիվը և ժամկետը,
 - հանքավայրի (տեղամասի) անվանումը,
 - ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները,
 - տեղամասի ընդհանուր մակերեսը,
 - օգտակար հանածոյի անվանումը,
 - տրամադրված օգտակար հանածոյի մարվող պաշարների քանակը, հիմնական և ուղեկից բաղադրիչները և դրանց քանակը,
 - հանքի տարեկան արտադրողականությունը,
 - ընդերքօգտագործման պայմանագրի համարը և կնքման ամսաթիվը,
 - ընդերքօգտագործման պայմանագրերում փոփոխությունների համարը և կնքման ամսաթիվը,
 - թույլտվությունների երկարաձգման համարները, տարեթիվը, երկարաձգման ժամկետը:
4. Ինչպես նշվեց վերը, կայքում տեղադրված են և ազատ հասանելի են նաև մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրերը՝ բոլոր փոփոխություններով և հավելվածներով՝ առանց որևէ տվյալների կամ տեղեկատվության գաղտնագրման:

2.3 Հայաստանի մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերություններում պետական մասնակցությունը, պետական մասնակցությանն առնչվող իրավական կարգավորումները, ԱՃԹՆ ստանդարտի 2.6-րդ, 4.2-րդ և 4.5-րդ պահանջների կիրառելիությունը

ՀՀ գործող ընդերքօգտագործման կարգավորումների և իրավական ռեժիմի կայացման պահից պետական մասնակցությամբ ընդերքօգտագործող ձեռնարկություններ

³² <https://mtad.am/pages/extractive-industries-transparency-initiative?tab=1>;
<https://mtad.am/pages/extractive-industries-transparency-initiative?tab=2>;
<https://mtad.am/pages/extractive-industries-transparency-initiative?tab=3>

Հայաստանում չեն եղել: Այս փաստը վերահաստատվել է ՀՀ վերաբերյալ նախորդ բոլոր ԱՃԹՆ զեկույցներում:

5. Իրավիճակը փոխվել է սակայն 2021թ. սեպտեմբերի 30-ին: 30.09.2021թ. ՀՀ կառավարության կայքում հրապարակված կառավարության գրավոր քվեարկության հարցերի շրջանակում նշված է եղել միայն հետևյալ հարցը.
«Արդյունաբերական ընկերություն» բաժնետիրական ընկերությունը, հանդիսանալով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության 60.000946% բաժնետոմսերի սեփականատեր, ցանկանում է Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերել Ընկերության կանոնադրական կապիտալում սեփականության իրավունքով իրեն պատկանող Ընկերության 25% (քսանհինգ տոկոս) 412,250.75 (չորս հարյուր տասներկու հազ. երկու հարյուր հիսուն ամբողջ յոթանասունհինգ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերը:
6. Քվեարկության ներկայացված հարցի հիմնավորման մեջ նշված է եղել, որ *«Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ կառավարության, պատրաստակամություն է հայտնել ի սեփականություն ընդունել Բաժնետոմսերը և դրանց կառավարման լիազորությունը վերապահել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին»:*
7. Ըստ ԶԼՄ-ներում տեղ գտած տեղեկատվության ընկերության 15 տոկոս բաժնեմասը կառավարությանը նվիրաբերել է «Արդյունաբերական ընկերություն» բաժնետիրական ընկերությունը, որը «Գեոպրոմայնինգ» ընկերությունների խմբին պատկանող ձեռնարկություն է:
8. Հրապարակային որոշ տեղեկությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության 30 սեպտեմբերի 2021թ. N 1613-Ա որոշման համաձայն Արդյունաբերական ընկերությունը 29.09.2021թ. ձեռք բերելով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության բաժնետոմսերի 60 տոկոսը, դրա 25 տոկոսը նույն օրը նվիրաբերել է ՀՀ կառավարությանը՝ այսպիսով կառավարությանը դարձնելով Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 15 տոկոսանոց համասեփականատեր:³³
9. ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության e-register.am կայքում տեղադրված 04.11.2021թ. հաստատված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի համաձայն Հայաստանի Հանրապետությունը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության բաժնետոմսերի 15.000033 %-ի սեփականատերն էր, իսկ ահա 30.08.2022թ. հայտարարագրի համաձայն Հայաստանի Հանրապետությունն արդեն հանդիսանում է ընկերության բաժնետոմսերի 21.874998 % սեփականատեր:
10. Հայաստանի մետաղական արդյունահանող ճյուղերում պետության մասնակցությանն առնչվող իրավական կարգավորումները որպես այդպիսին բացակայում են: Այն է՝ պետությունն ընդերքօգտագործող ընկերություններում մասնակցում է նույն պայմաններով և ենթարկվում է նույն իրավական կարգավորումներին, ինչ և մասնավոր անհատները կամ իրավաբանական անձինք:
11. ՀՀ իրավական համակարգում առկա են միայն մի շարք ընդհանրական դրույթներ, որոնք վերաբերվում են պետական մասնակցությամբ գույքի (ներառյալ ընկերություններում մասնակցության և բաժնետոմսերի) օտարմանը:

³³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172062>

12. Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն *«[սյ]ետության սեփականությանը պատկանող գույքն օտարվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց՝ մասնավորեցման (ապապետականացման) մասին օրենքներով սահմանված կարգով»*: Իսկ ահա «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքը³⁴ կարգավորում է արդեն պետության սեփականությունը համարվող գույքի, այդ թվում՝ պետական բաժնետոմսերի օտարման առանձնահատկությունները և ընթացակարգը:
13. Իսկ ահա նախկին Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության հրամանով հաստատված *Պետական բաժնետիրական և պետական մասնակցությամբ ընկերությունների կողմից վճարվող շահաբաժինների պետական մասնաբաժինը պետական բյուջե փոխանցելու կարգը* սահմանում է նման ընկերություններում բաշխված դիվիդենտները պետական բյուջե փոխանցելու կարգը և ժամկետները³⁵:
14. Հատկանշական է, սակայն, որ ստեղծված իրավիճակը չի բարձրացնում հարցեր ԱՃԹՆ պահանջ 2.6-ի շրջանակներում: Վերջինիս ա) կետը սահմանում է. *Այն դեպքում, երբ արդյունահանող ճյուղերում պետության մասնակցությունը հանգեցնում է էական եկամուտների վճարումների, իրականացնող պետությունները պետք է ներկայացնեն [ի թիվս այլոց] բացատրություն ոլորտում պետական ձեռնարկությունների (ՊՁ-ների) դերի և կառավարության և ՊՁ-ների միջև ֆինանսական հարաբերություններին առնչվող կանոնների և գործելակերպերի մասին, այսինքն՝ ՊՁ-ի (ՊՁ-ների) և պետության միջև ֆինանսական միջոցների փոխանցումը, չբաշխված շահույթը, վերաներդրումները և երրորդ կողմի ֆինանսավորումը կարգավորող կանոնների և գործելակերպերի վերաբերյալ: Սա պետք է ներառի ՊՁ-ների համատեղ ձեռնարկությունների և դուստր ձեռնարկությունների հետ կապված փոխանցումների, չբաշխված շահույթի վերաներդրումների և երրորդ կողմի ֆինանսավորման բացահայտումները*:
15. Սակայն ԱՃԹՆ պահանջների համաձայն պետական ձեռնարկություն է համարվում *«ամբողջովին կամ մեծ մասամբ կառավարության սեփականությունը հանդիսացող»* ընկերությունները: Ուստի՝ անգամ եթե «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունից պետության կողմից ստացվող եկամուտները որակվեն որպես էական, մինևույն է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը չի որակվի որպես պետական ձեռնարկություն:
16. Համանման կերպ կիրառելի չէ պահանջ 4.5-ը, որը վերաբերվում է պետական ձեռնարկություններին առնչվող գործարքներին, ինչպես նաև պահանջ 6.2-ը, որը վերաբերվում է պետական ձեռնարկություններից ստացված քվազի-ֆիսկալ ծախսերի բացահայտման անհրաժեշտությանը:
17. Վերջապես խնդիրներ չեն առաջանում նաև ԱՃԹՆ պահանջ 4.2-ի շրջանակներում: Այսպես պահանջ 4.2-ը վերաբերվում է պետության կողմից ստացվող արդյունահանման մասնաբաժնի դեպքերին, մինչդեռ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գործունեության ընթացքում արդյունահանված պինդ օգտակար հանածոները որևէ կերպ չեն դառնում պետության մասնաբաժինը:

³⁴ Թիվ ՀՕ-188 (ընդունված 17.12.1997թ.), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=495>:

³⁵ ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարություն, հրաման թիվ N 301 (ընդունված 02.09.1998թ.), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=19605>:

18. Առավել խնդրահարույց են անշուշտ պետության՝ «Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության բաժնետեր դառնալու գործընթացի և գործարքի մանրամասները. Հասկապես հարցեր են առաջացնում պետության թիվ մեկ հարկատուի բաժնետոմսերը պետությանը նվիրաբերելու որոշման պատճառների համատեքստում:

2.4 Ծրագիր եզրույթի սահմանում

ԱՃԹՆ ստանդարտի 4.7-րդ պահանջը (տրոհման մակարդակ) սահմանում է.

«Անհրաժեշտ է, որ ԱՃԹՆ տվյալները տրոհվեն ըստ յուրաքանչյուր առանձին ծրագրի, ընկերության, պետական կազմակերպության և եկամուտների հոսքի: Ծրագիրը սահմանվում է որպես գործառնական գործունեություն, որը կարգավորվում է առանձին պայմանագրով, լիցենզիայի, վարձակալության, համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության կամ նմանատիպ իրավական համաձայնագրով, և հիմք է հանդիսանում կառավարության հետ վճարային պարտավորությունների համար: Այնուամենայնիվ, եթե մի քանի նման համաձայնագրեր էականորեն փոխկապակցված են, բազմաշահառու խումբը պետք է հստակ բացահայտի և փաստաթղթավորի, թե որ դեպքերն են համարվում առանձին ծրագիր: Էականորեն փոխկապակցված համաձայնագրերը գործառնական և աշխարհագրորեն ինտեգրված պայմանագրերի, լիցենզիաների, վարձակալության կամ համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության կամ հարակից համաձայնագրերի մի շարք են՝ էապես համանման պայմաններով, որոնք կնքվում են կառավարության հետ՝ առաջացնելով վճարային պարտավորություններ: Նման համաձայնագրերը կարող են կարգավորվել առանձին պայմանագրով, համատեղ ձեռնարկատիրության, արտադրության բաշխման համաձայնագրով կամ այլ համապարփակ իրավական համաձայնագրով: Եթե ԱՃԹՆ բացահայտումների շրջանակին պատկանող վճարը գանձվում է ոչ թե ծրագրի, այլ կազմակերպության մակարդակով, ընկերությունը կարող է բացահայտել վճարումը կազմակերպության մակարդակով»:

ԲՀԽ-ն իր 2022թ. ապրիլի 27-ի նիստին (արձանագրություն 15)³⁶ արձանագրել է, որ այն «որպես ծրագիր է դիտարկում մեկ ընդերքօգտագործման իրավունքով/թույլտվությամբ իրականացվող գործունեությունը» և որ «2020 և 2021թթ. համար կազմվող զեկույցում այն բոլոր ֆինանսական հոսքերը, որոնք հնարավոր է ներկայացնել արդյունահանման թույլտվությունների մակարդակով, պետք է ներկայացվեն հենց այդ մակարդակում՝ հստակ նշում կատարելով այդ մասին»:

Ուղեցույց 29-ը³⁷ բերում է «Ծրագիր» եզրույթի օրենսդրական սահմանման երկու օրինակ, որոնք նախատեսված են ԵՄ հաշվապահական դիրեկտիվով և Կանադայի արդյունահանող ոլորտի թափանցիկության միջոցառումների մասին ակտով: Եվրոպական միության հաշվապահական դիրեկտիվի 41-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն «Ծրագիրը» սահմանվում է հետևյալ կերպ.

«Օպերացիոն գործառնություններ, որոնք կարգավորվում են մեկ պայմանագրով, լիցենզիայով, վարձակալության, կոնցեսիայի կամ նմանատիպ այլ իրավական համաձայնագրերով և հիմք են հանդիսանում պետությանը կատարվող վճարների համար: Այնուամենայնիվ, եթե մի շարք նմանատիպ պայմանագրեր էականորեն փոխկապակցված են, դրանք միասին կհամարվեն մեկ ծրագիր»:

³⁶ <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

³⁷ https://eiti.org/sites/default/files/attachments/guidance_note_29_english.pdf

Կանադայի արդյունահանող ոլորտի թափանցիկության միջոցառումների մասին ակտը ներառում է «Ծրագիր» եզրույթի հետևյալ սահմանումը.

«[Օ]պերացիոն գործառնություններ, որոնք կարգավորվում են մեկ պայմանագրով, լիցենզիայով, վարձակալության, կոնցեսիայի կամ նմանատիպ այլ իրավական համաձայնագրով և հիմք են հանդիսանում պետությանը կատարվող վճարների համար: Այնուամենայնիվ, եթե մի շարք նմանատիպ պայմանագրեր էականորեն փոխկապակցված են, դրանք միասին կհամարվեն մեկ ծրագիր: «Էականորեն փոխկապակցված» լինել նշանակում է կազմել օպերացիոն և աշխարհագրական առումներով ինտեգրացված պայմանագրերի, լիցենզիաների, վարձակալությունների կամ կոնցեսիաների ամբողջություն կամ փոխկապակցված համաձայնություններ, որոնք ունեն էականորեն նման պայմաններ, կնքված են կառավարության հետ և հիմք են հանդիսանում վճարային պարտավորությունների համար»:

Հայաստանում նման սահմանում կիրառելու առաջնային խոչընդոտը կայանում է նրանում, որ փաստաթղթերը (թույլտվություն, լեռնահատկացման ակտ, պայմանագիր), որոնք կարգավորում են արդյունահանման գործունեությունը, վճարային պարտավորությունների ձևավորման հիմքը չեն (բացառությամբ որոշ բնապահպանական ընդերքօգտագործման վճարների, ինչպիսիք են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման վճարը և մշտադիտարկումների իրականացման համար վճարը), որի արդյունքում բարձրանում է Հայաստանում որևէ նմանատիպ սահմանման կիրառման իրատեսականության և արդյունավետության հարցը:

Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը, օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը, լեռնահատկացման ակտը և համապատասխան փորձաքննություններ անցած նախագիծը միասին հանքարդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթեր են:

Ուղեցույց 29-ը պարզաբանում է. *«Արտադրության կիսման ռեժիմի պայմաններում ծրագիրը, որպես կանոն, պայմանագիրն է, որը հիմք է հանդիսանում վճարային պարտավորությունների համար: Հարկային/ռոյալթի ռեժիմի պայմաններում, ծրագիրը, որպես կանոն, լիցենզիան է, որից բխում են վճարային պարտավորությունները»:* Ուղեցույցն այնուհետև նշվում է, որ *«ԲՇՆ-ները պետք է առաջնորդվեն այն ելակետային սկզբունքով, որ ծրագրային մակարդակի վճարները պետք է ներկայացվեն այն իրավական համաձայնության առնչությամբ, որը պետությանն ուղղված վճարային պարտավորությունների հիմքն է»:*

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող ռեժիմը բացահայտորեն հարկային / ռոյալթի ռեժիմ է, սակայն «ծրագրային մակարդակի» կապումն օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության հետ տեխնիկապես անօգուտ կլինի, քանի որ ռոյալթիների հաշվարկման բազան մատակարարված խտանյութի, ձուլվածքի կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի իրացման շրջանառությունն է, այլ ոչ թե պայմանագրերը կամ թույլտվությունները:

Այսպիսով՝ Հայաստանում գործող հաշվետվողականության մակարդակը փաստացի թույլ չի տալիս իրականացնել հաշվետվողականության ապահովում ծրագրային մակարդակում: Չնայած վերոգրյալին՝ հաշվետվությունները փաստացի ներկայացվում են ծրագրային մակարդակում:

Շուկայում առկա է միայն մեկ ընկերություն՝ «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ն (գրանցման համար՝ 42.110.01460, ՀՎՀՀ՝ 03516447), որը հանքարդյունահանման հետ միասին

ներգրավված է նաև այլ ձեռնարկատիրական գործունեության մեջ: Այնուամենայնիվ, վերջինիս կողմից կատարված առնվազն ռոյալթիի վճարումներն ակնհայտորեն տարբերակելի են բյուջետային այլ պարտավորություններից:

Հիմնվելով վերոգրյալի վրա՝ մենք եզրակացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության պարագայում էականորեն փոխկապակցված իրավական համաձայնագրերը խնդիր չեն:

2.5 ՀՀ աուդիտորական և համահարթեցման գործընթացները, պետական բյուջե (պահանջ 5.3)

Աուդիտորական գործընթացներ: Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող աուդիտորական գործունեության և հաշվապահական հաշվառման ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն է՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի³⁸:

ՀՀ տարածքում գործում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները, որոնք ներառում են ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները և դրանց վերաբերյալ մեկնաբանությունները:

ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հաշվապահական հաշվառման մասին» (ՀՕ-282-Ն),³⁹ «Աուդիտորական գործունեության մասին» (ՀՕ-283-Ն)⁴⁰ և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» (ՀՕ-284-Ն)⁴¹ օրենքների համաձայն ներկայացվում է պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակը:

«Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի⁴² համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով պետական գրանցում ստացած իրավաբանական անձինք (ներառյալ՝ նրանց ստեղծած հիմնարկները), օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղերը և ներկայացուցչությունները հիմնադիրներին, բաժնետերերին, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ պետական մարմիններին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պարտավոր են պատրաստել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ամբողջական ՖՀՄՍ-ներ), փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) կամ միկրոկազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկին համապատասխան:

Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման կարգավորումը և ֆինանսական հաշվետվությունների կազմման/ներկայացման վերաբերյալ պահանջները կարգավորում են «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքով⁴³:

³⁸ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=170564>

³⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164986>

⁴⁰ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=164910>

⁴¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165008>

⁴² <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164986>

⁴³ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=91454>

Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգը սահմանվում է, իսկ բյուջետային գործընթացը կանոնակարգվում է «Բյուջետային համակարգի մասին» 24 հունիսի 1997թ. ՀՕ-137 օրենքով⁴⁴: Բյուջեն հաստատող իրավական ակտը պետական բյուջեի մասով Ազգային ժողովի ընդունած՝ տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքն է, իսկ համայնքի բյուջեի մասով՝ համայնքի ավագանու ընդունած համայնքի բյուջեի մասին որոշումը:

⁴⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172015>

3

ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒՄԸ,
ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԻՐԱՑՈՒՄԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ


3. ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՅՈՒՄԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

3.1 Մետաղական օգտակար հանածոների պաշարները հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.1)

2010-2021թթ. Հայաստանում հաստատվել են մետաղական օգտակար հանածոների զգալի պաշարներ: Հաստատված մետաղական հանքաքարի պաշարների ամենամեծ ծավալը բաժին է ընկնում երկաթին, այնուհետև ոսկուն, մագնեզիումին, պղնձին և քրոմիտին: Ընդ որում, դիտարկվող ժամանակահատվածում հաստատվել են մետաղական օգտակար հանածոների պաշարներ, ինչպիսիք են ցինկը, կապարը և մոլիբդենը, ինչպես նաև ուղեկից բաղադրիչների պաշարներ (ներառյալ թելուրը, բիսմութը, ռենիումը, պլատինը, պալադիումը, ծծումբը և սելենը):

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղեկատվության համաձայն՝ 2021թ. հունվարին առաջին անգամ հաստատվել են Սյունիքի մարզի Մուցքի ոսկու հանքավայրի պաշարները: Ըստ այդմ՝ հանրապետությունում աճել են ոսկու և արծաթի հանքաքարի հաստատված պաշարները: Մետաղական հանքաքարի հաստատված պաշարների բաշխումն ըստ մարզերի 2010-2021թթ. ընթացքում ամփոփված է ստորև ներկայացված գծապատկերում:

Գծապատկեր 3.1.1 2010 – 2021թթ. մետաղական հանքաքարի հաստատված քանակն ըստ մարզերի, հազ. տոննա




Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ զեկոլոյցի համար

Մետաղական հանքաքարի 2010թ.-ից հետո նոր հաստատված պաշարների (առանց վերագնահատվածների) ամենամեծ ծավալը Լոռու մարզում է: Լոռիում է կենտրոնացված երկաթի հանքաքարի հաշվեկշռային պաշարների 100%-ը և ոսկու պաշարների 7%-ը: Երկրորդ տեղում է Սյունիքը՝ պղնձի հանքաքարի հաշվեկշռային պաշարների 100% և ոսկու 44% մասնաբաժնով: Մետաղական օգտակար հանածոների պաշարներով Սյունիքին բաժին է ընկնում մոլիբդենի հաշվեկշռային պաշարների 100%-ը, կապարի 91%-ը և ցինկի 89%-ը: Մագնեզիումի և քրոմիտի օգտակար հանածոների հաստատված բոլոր պաշարները տեղակայված են Գեղարքունիքի մարզում: 2010-2021թթ. ոսկու հաստատված պաշարների 9.8%-ով Վայոց ձորի տարածքը երրորդ տեղում է՝ հաջորդելով Սյունիքի և Լոռու մարզերին:


Գեղարքունիքի մարզում է գտնվում ոսկու ընդհանուր պաշարների 3.3%-ը: Մետաղական օգտակար հանածոների, ոսկու և արծաթի ի հաստատված պաշարներն ըստ մարզերի 2010-2021թթ. համապատասխանաբար ամփոփված են ստորև ներկայացված գծապատկերներում:

Գծապատկեր 3.1.2 2010–2021թթ. մետաղական օգտակար հանածոների հաստատված պաշարներն ըստ մարզերի, հազ. տոննա



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

Գծապատկեր 3.1.3 2010–2021թթ. ոսկու և արծաթի հաստատված պաշարները, ըստ մարզերի, տոննա



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ զեկույցի համար


3.2 Ընդերքի հետախուզում (պահանջ 3.1)

Օրենսգիրքը ներկայացնում է երկրաբանական ուսումնասիրության հետևյալ ձևակերպումը՝ «Երկրաբանական ուսումնասիրություններ. ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է՝ ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտաձին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել և գնահատել օգտակար հանածոների պաշարները»:

Երկրաբանական ուսումնասիրությունների ուղղությամբ ներդրումներն առաջնային նշանակություն ունեն հանքարդյունաբերության ոլորտի զարգացման համար: Երկրակեղևի հետազոտության շնորհիվ կարող են հայտնաբերվել նոր՝ շահագործման ենթակա հանքեր:

Ստորև գծապատկերում ներկայացված է 2010-2021թթ. ընթացքում կայացած երկրաբանական գործունեության համառոտ նկարագիրը՝ դրամական արտահայտությամբ:

Գծապատկեր 3.2.1 2010–2021թթ. երկրաբանական աշխատանքների ծավալը, մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե՝ armstat.am⁴⁵

Նկարագրված ժամանակահատվածում երկրաբանական գործունեության ընդհանուր արժեքային ծավալը կազմել է 4,750 մլն ՀՀ դրամ՝ պայմանավորված 2014 և 2018թթ. իրականացված ներդրումների զգալի աճով: 2018թ. երկրաբանական աշխատանքների ծավալն աճել է 188%-ով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ: Եթե 2014թ. երկրաբանական աշխատանքների իրականացման համար նախատեսված ներդրումների ծավալային կտրուկ աճը պայմանավորված էր ուսումնասիրությունների քանակի, ուսումնասիրությունների ծրագրերով նախատեսված և անցկացված լեռնային փորվածքների քանակի և ուսումնասիրությունների մանրակրկիտ հետախուզական փուլի

⁴⁵ Երկրաբանական ուսումնասիրություններ՝ https://armstat.am/file/article/eco_book_2021_4.pdf
 Երկրաբանական ուսումնասիրություններ՝ [eco_book_2020_3.pdf](https://armstat.am/file/article/eco_book_2020_3.pdf) (armstat.am)
 Երկրաբանական ուսումնասիրություններ՝ https://armstat.am/file/article/eco_book_2019_3.pdf
 Երկրաբանական ուսումնասիրություններ՝ [eco_book_2018_3.pdf](https://armstat.am/file/article/eco_book_2018_3.pdf) (armstat.am)

ավարտի հետ, աշխատանքների ավելի ծախսատար փուլի անցումով է բացատրվում 2018թ. արձանագրված աճը:

2018թ.-ից սկսած երկրաբանական աշխատանքների ֆինանսավորման ներդրումները էապես նվազել են՝ 2020թ. գրանցելով ամենացածր ծավալը: Տարածքային կառավարման նախարարության տվյալներով 2019թ. գրանցված անկումը պայմանավորված է երկրաբանական աշխատանքներով զբաղվող ընկերությունների նպատակների և թիրախների փոփոխությամբ և երկրաբանական հետախուզման համար լիցենզավորված որոշ ընկերությունների հանքարդյունաբերական իրավունքների ժամկետի ավարտով: 2018թ.-ից ոլորտում կիրառվող օրենսդրական կարգավորումներով սահմանվել են նոր պահանջներ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլատվության համար դիմելու, մասնավորապես՝ երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով ընդերքօգտագործման իրավունքի տևողության փոփոխության և ուսումնասիրությունների ժամկետի երկարաձգման, ինչպես նաև երկրաբանահետախուզական աշխատանքների պարտադիր իրականացման և միջանկյալ հաշվետվությունների ներկայացման համար⁴⁶:

Մասնավորապես, 2019թ. ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի⁴⁷ ընդունմամբ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնող իրավաբանական անձանց համար սահմանվել է իրական սեփականատերերի բացահայտման պարտավորություն: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձի համար 2019թ. նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով⁴⁸ սահմանվել է լիազոր մարմին վարչական վիճակագրական «Երկրաբանական ուսումնասիրությունների մասին» (տարեկան) և «Երկրաբանական ուսումնասիրությունների կատարման մասին» (եռամսյակային) հաշվետվությունների ներկայացման պարտավորությունը: Ավելին, 2019թ. ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի⁴⁹ փոփոխություններով օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձանց համար սահմանվել են լրացուցիչ պարտավորություններ որոշ տեղեկությունների տրամադրման կապակցությամբ: Մասնավորապես, «Ընդերքի մասին» օրենսգրքի 46-րդ հոդվածի, 2-րդ մասի, 2-րդ կետի, 2.1 ենթակետի համաձայն, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձը պարտավոր է մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցողի դեպքում՝ լիազոր մարմնին տեղեկացնել ֆինանսական և տեխնիկական կարողությունների և միջոցների մասին տեղեկություն՝ պահանջվող տեղեկության փոփոխության մասին փոփոխություն կատարելուց հետո՝ 14 օրվա ընթացքում:⁵⁰

Ընդերքօգտագործման իրավունքի տրման շրջանակներում անցկացվող լուսմների՝ այդ թվում նաև երկրաբանական ուսումնասիրության վերաբերյալ լուսմների իրավական

⁴⁶ <https://www.e-draft.am/projects/4619/about>

⁴⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130250>

⁴⁸ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=137114>

⁴⁹ Նույնը

⁵⁰ Նույնը

կարգավորումներն ընդհանուր առմամբ խնդրահարույց չեն: Ինչ վերաբերում է գործնական խնդիրներին, ապա դրանք, որպես կանոն, կապված են համայնքի (համայնքի ղեկավարների կողմից) իրենց վրա դրված պարտականությունների կատարման հետ, որոնց չկատարումը հանգեցնում է սահմանված լսումների անցկացման կարգի խախտմանը: Նման դեպքերում ընդերքօգտագործողի կողմից միակ իրավական հակազդման միջոց կարող է լինել վարչական դատավարության կարգով իր խախտված իրավունքի վերականգնումը, ինչը գործնականում տևում է մի քանի տարի:

Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված թույլտվությունների թիվը 2021թ., 2018թ. համեմատ, նվազել է շուրջ 6 անգամ: ՀՀ վիճակագրական կոմիտե ներկայացված հաշվետվությունների համաձայն, վերոնշյալի արդյունքում 2020թ. երկրաբանական աշխատանքների ընդհանուր դրամական արժեքը 2019թ. համեմատ նվազել է 92%-ով և կազմել է 26 մլն ՀՀ դրամ, որը 2021թ. աճել է՝ հասնելով 83.8 մլն ՀՀ դրամի:

Հանքարդյունաբերական ընկերությունները երկրաբանական գործունեությունն իրականացնում են բացառապես իրենց նախաձեռնությամբ և, հետևաբար, կրում են դրանից բխող բոլոր ծախսերը և ռիսկերը: 2020 և 2021թթ. կատարված երկրաբանական ուսումնասիրությունների ոլորտներն ըստ բնագավառների և աշխատափուլերի ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 3.2.1.1 2020թ. երկրաբանական ուսումնասիրություններն ըստ բնագավառների և աշխատափուլերի, մլն ՀՀ դրամ

Բնագավառը	Ընդամենը	2020				
		Որոնողական	Որոնողական գնահատողական	Նախնական հետախուզական	Մանրակրկիտ հետախուզական	Այլ աշխատանքներ
Ազնիվ մետաղներ	2.13			2.13		
Ոչ մետաղներ	6.55	0.90	0.60	0.50	3.22	1.33
Հիդրոէրկրաբանական և ինժեներաէրկրաբանական աշխատանքներ	0.18				0.18	
Այլ աշխատանքներ	17.26					17.26
Երկրաբանական ուսումնասիրությունների ընդհանուր ծավալ	26.1	0.9	0.6	2.63	3.39	18.59

Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե՝ armstat.am⁵¹

Աղյուսակ 3.2.1.2 2021թ. երկրաբանական ուսումնասիրություններն ըստ բնագավառների և աշխատափուլերի, մլն ՀՀ դրամ

Բնագավառը	Ընդամենը	2021				
		Որոնողական	Որոնողական գնահատողական	Նախնական հետախուզական	Մանրակրկիտ հետախուզական	Այլ աշխատանքներ
Ազնիվ մետաղներ	24.4			6.7		21.7
Ոչ մետաղներ	28.6	-	-	2.7	26.9	-

⁵¹Երկրաբանական ուսումնասիրություններ՝ eco_book_2020_3.pdf (armstat.am)

Բնագավառը	Ընդամենը	2021				
		Որոնողական	Որոնողական գնահատողական	Նախնական հետախուզական	Մանրակրկիտ հետախուզական	Այլ աշխատանքներ
Հիդրոէրկրաբանական և ինժեներաէրկրաբանական աշխատանքներ	2.3	-	-	0.2	1.2	0.85
Այլ աշխատանքներ	2.8	-	-	0.15	2.3	0.35
Երկրաբանական ուսումնասիրությունների ընդհանուր ծավալ	83.8			9.7	29.4	44.7

Սղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ armstat.am⁵²

3.3 Արդյունահանումը և արտադրությունը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.2 և 3.3)

Հայաստանի տարածքում արդյունահանվող մետաղական օգտակար հանածոների հիմնական տեսակներն են՝ պղինձը, մոլիբդենը, ոսկին և ցինկը: Հանրապետական երկրաբանական ֆոնդի կողմից վարվող՝ Հայաստանի Հանրապետության օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերակումների պետական կադաստրում 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառվել են 928 հանքավայր և հանքավայրի տեղամաս, այդ թվում՝ 44 մետաղական, 769 պինդ ոչ մետաղական, 29 պինդ ոչ մետաղական՝ հաստատված գիտատեխնիկական խորհրդով, և 18 պինդ ոչ մետաղական՝ արտահաշվեկշռային պաշարներով, 44 ստորերկրյա քաղցրահամ ջրեր, 24 հանքային ստորերկրյա ջրեր և 578 հանքերակումներ (129 մետաղական, 449 ոչ մետաղական): 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ քանակներն ավելացել են և կազմել 954, այդ թվում՝ 45 մետաղական, 793 պինդ ոչ մետաղական, 29 պինդ ոչ մետաղական հաստատված գիտատեխնիկական խորհրդով և 18 պինդ ոչ մետաղական՝ արտահաշվեկշռային պաշարներով, 45 ստորերկրյա քաղցրահամ ջրեր, 24 հանքային ստորերկրյա ջրեր և 578 հանքերակումներ (129 մետաղական, 449 ոչ մետաղական):

2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ Հանրապետական երկրաբանական հիմնադրամի կողմից կառավարվող Հայաստանի Հանրապետության հանքերի, հանքավայրերի և օգտակար հանածոների առաջացման պետական կադաստրը հաստատել է 961 հանք, այդ թվում՝ 45 մետաղական, 800 պինդ ոչ մետաղական, 29 պինդ ոչ մետաղական հաստատված գիտատեխնիկական խորհրդով և 18 պինդ ոչ մետաղական՝ արտահաշվեկշռային պաշարներով, 45 ստորերկրյա քաղցրահամ ջրեր, 24 հանքային ստորերկրյա ջրեր և 578 հանքերակումներ (129 մետաղական, 449 ոչ մետաղական): Հաստատված 45 մետաղական օգտակար հանածոների հանքավայրերից հաստատվել են հետևյալ հանքավայրերը՝

- 26 ոսկու և ոսկի-բազմամետաղային,
- 7 պղինձ-մոլիբդենային,
- 4 պղնձի,
- 3 երկաթի,
- 2 բազմամետաղային,
- 1 մոլիբդենի,
- 1 մագնեզիումապիլիկատային ապարների և քրոմիտների,

⁵²Երկրաբանական ուսումնասիրություններ՝ https://armstat.am/file/article/eco_book_2021_4.pdf

- 1 նեֆեյիային սիենիտների:

Հանքավայրերի քանակների մեծ տարբերությունը նախորդ ԱՃԹՆ զեկույցում ներկայացված հանքավայրերի հաստատված թվերի նկատմամբ պայմանավորված է ոչ թե հանքերի քանակի կտրուկ փոփոխությամբ, այլ մինչև 2021թ. քանակի հաշվարկի կիրառված մոտեցմամբ, որը չի համապատասխանել ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 22-ի թիվ 1571-Ն որոշմանը: Վերը նշված մեթոդաբանության կիրառմամբ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հանքավայրերի քանակը կազմում է՝ 916, այդ թվում՝ 44 մետաղական, 757 պինդ ոչ մետաղական, 29 պինդ ոչ մետաղական հաստատված գիտատեխնիկական խորհրդով և 18 պինդ ոչ մետաղական՝ արտահաշվեկշռային պաշարներով, 44 ստորերկրյա քաղցրահամ ջրեր, 24 հանքային ստորերկրյա ջրեր:

2020 և 2021թթ. ընդերքօգտագործողների կողմից շահագործվող հանքավայրերի մասին տեղեկատվությունն ամփոփված է ստորև ներկայացրած աղյուսակում:

Աղյուսակ 3.3.1 2020 և 2021թթ. ընդերքօգտագործող ընկերությունների շահագործած հանքավայրերը

N	Ընկերության անվանումը	Շահագործած հանքավայր/տեղամասը, Մարզը	Օգտակար հանածոյի անվանումը
1	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Ագարակի պղինձ-մոլիբդենային հանքավայր, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
2	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	Շամլուղի պղնձի հանքավայր, Լոռի	պղինձ
3	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	Այգեձորի պղնձամոլիբդենային հանքավայրի Կենտրոնական տեղամաս, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
4	«Ասաթ» ՍՊԸ	Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամաս, Լոռի	ոսկի, արծաթ
5	«ԱՏ-Մետալս» ՍՊԸ	Մեղրասարի ոսկու հանքավայր, Սյունիք	ոսկի
6	«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Արջուտի ոսկու հանքավայր, Լոռի	ոսկի, արծաթ, պղինձ
7	«Գեղի Գօլդ ՍՊԸ»	Ոսկեձորի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Սյունիք	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ
8	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Սոթքի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամաս, Գեղարքունիք	ոսկի, արծաթ
9	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայր, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
10	«Թաթսթոուն» ՍՊԸ	Լիճքի պղնձի հանքավայր, Սյունիք	պղինձ
11	«Թեղուտ» ՓԲԸ	Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայր, Լոռի	պղինձ, մոլիբդեն
12	«Լեո-Էքս» ՍՊԸ	Հանքասարի պղնձ-մոլիբդենային հանքավայրի Կենտրոնական տեղամաս, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
13	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Ամուլսարի ոսկեքար քվարցիտների հանքավայրի «Տիգրանես»,	ոսկի, արծաթ

N	Ընկերության անվանումը	Շահագործած հանքավայրը/տեղամասը, Մարզը	Օգտակար հանածոյի անվանումը
		«Արտավազդես» և «Էրատո» տեղամասեր, Վայոց Ձոր ⁵³	
14	«Լիճքվազ» ՓԲԸ	Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայր, Սյունիք	ոսկի, արծաթ, պղինձ
15	«Չաարատ Կապան» ՓԲԸ	Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Սյունիք	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար
16	«Ղարազյուլյաններ» ՓԲԸ	Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի Կենտրոնական տեղամաս, Սյունիք	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար
17	«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Սյունիք ⁵⁴	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար
18	«Մեզո Գոլդ» ՍՊԸ	Թուխմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամաս, Արագածոտն	ոսկի, արծաթ
19	«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	Մեդրաձորի ոսկու հանքավայր, Կոտայք	ոսկի, արծաթ, թելուր
20	«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ ⁵⁵	Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայր (Կենտրոնական տեղամաս), Սյունիք ⁵⁶	պղինձ, մոլիբդեն
21	«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Մդարթի ոսկու հանքավայր, Լոռի	ոսկի, արծաթ
22	«Պարամատոնտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Մեդրաձորի ոսկու հանքավայրի «Լուսաջուր» տեղամաս, Կոտայք	ոսկի, արծաթ, թելուր, բիսմութ
23	«Սագամար» ՓԲԸ	Արմանիսի ոսկու բազմամետաղային հանքավայր, Լոռի	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար
24	«Վայք Գոլդ» ՍՊԸ	Ազատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Վայոց Ձոր	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար
25	«Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ ⁵⁷	Սոֆի Բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Վայոց Ձոր	ոսկի, արծաթ, ցինկ, կապար

⁵³ ՀՀ օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների պետական կադաստրում հաշվառվում է Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայր, որն իր մեջ ներառում է «Տիգրանես» և «Արտավազդես» տեղամասերը, և Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի «Էրատո» տեղամասը: «Տիգրանես» և «Արտավազդես» տեղամասերը, որպես հանքավայրի առանձին տեղամասեր, պետական կադաստրում չեն հաշվառվում:

⁵⁴ ՀՀ օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների պետական կադաստրում հաշվառվում է որպես հանքերևակում:

⁵⁵ ՏԿԵ նախարարի 28.07.2020թ. թիվ 1008-Ս հրամանով դադարեցվել էր «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ի ընդերքօգտագործման իրավունքը: Սակայն ՀՀ Վարչական դատարանը բավարարել է ընկերության պահանջը ՏԿԵ-ի՝ հրամանը անվավեր ճանաչելու մասին: http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950270

⁵⁶ ՀՀ օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների պետական կադաստրում հաշվառվում է Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Կենտրոնական տեղամաս:

⁵⁷ ՀՀ ՏԿԵ նախարարի 07.08.2020 թվականի թիվ 1075-Ս հրամանով դադարեցվել էր «Վարդանի զարթոնքը» ՍՊԸ-ի ընդերքօգտագործման իրավունքը: ՀՀ վերաքննիչ դատարան Ընկերության կողմից ներկայացված բողոքի հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 07.08.2020 թվականի թիվ 1075-Ս հրամանի կատարումը կասեցվել է մինչև գործով վերջնական որոշում կայացվելը: http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950978

N	Ընկերության անվանումը	Շահագործած հանքավայրը/տեղամասը, Մարզը	Օգտակար հանածոյի անվանումը
26	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ ⁵⁸	Հրազդանի երկաթի հանքավայր, Կոտայք	Երկաթ

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ հաշվետվության համար⁵⁹

Վերոնշյալ ընկերությունները 2020 և 2021թթ. ընթացքում ունեցել են Հայաստանի համապատասխան հետախուզման շրջաններում թվարկված հանքերի շահագործման իրավունք: Համաձայն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ տրամադրված տեղեկությունների 2020թ. արդյունահանվել է 33 մլն տոննա պղնձի և պղինձ-մոլիբդենային հանքաքար, ինչը կազմում է տվյալ ժամանակահատվածում մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արդյունահանման 95.5%-ը: Հարկ է նշել, որ 2021թ. պղնձի և պղինձ-մոլիբդենային հանքաքարի արդյունահանման ծավալը նվազել է՝ հասնելով 32 մլն տոննայի, որը գրեթե համահունչ է նախորդ տարվա համեմատ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արդյունահանման ծավալի 5.6% նվազմանը: Հաշվի առնելով Հայաստանի տարածքում արդյունահանվող պղնձի և պղինձ-մոլիբդենային հանքաքարի զգալի մեծ ծավալները՝ հարկ է նաև նշել տվյալ հանքերում առկա վճարային համարվող ոսկու և արծաթի բարձր կոնցենտրացիան:

Աղյուսակ 3.3.2 2020 և 2021թթ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտում արդյունահանված հիմնական արտադրատեսակները

N	Հանքաքարի տեսակը	Ծավալ		Ընկերությունը
		2020	2021	
1	Պղինձ-մոլիբդենային հանքաքար	19,933,652 տ	19,186,227 տ	«Չանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
2	Պղինձ-մոլիբդենային հանքաքար	8,630,648 տ	7,768,331 տ	«Թեդուս» ՓԲԸ
3	Պղինձ-մոլիբդենային հանքաքար	3,569,555 տ	4,500,443 տ	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ
4	Պղինձ-մոլիբդենային հանքաքար	1,605 տ	0	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ
5	Պղնձի հանքաքար	408,737 թմտ	361,945 թմտ	«Ախթալայի լեռնահարստացվման կոմբինատ» ՓԲԸ
6	Պղնձի և ոսկու հանքաքար	17,921 մ ³	177,679 չմտ	«Լիճքվազ» ՓԲԸ
7	Ոսկու հանքաքար	1,395,614 տ	1,672,416 տ	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ
8	Ոսկու պարունակությամբ հանքաքար	684,156 չմտ	600,757 տ	«Չաարատ Կապան» ՓԲԸ

⁵⁸ ՏԿԵ նախարարի 2020 թվականի հուլիսի 31-ի թիվ 1033-Ս հրամանով դադարեցվել էր «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ-ի ընդերքօգտագործման իրավունքը: ՀՀ վերաքննիչ դատարան Ընկերության կողմից ներկայացված բողոքի հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 31.07.2020 թվականի թիվ 1033-Ս հրամանի կատարումը կասեցվել է մինչև գործով վերջնական որոշում կայացվելը: http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950937

⁵⁹ «Թաթառոն» ՍՊԸ-ի և «Մարջան Մայնինգ Քամֆինի» ՍՊԸ-ի արդյունահանման թույլտվությունները դադարեցվել են 2021 թ. մայիս և հուլիս ամիսներին համապատասխանաբար: «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ի 2019 թվականի դեկտեմբերի արդյունահանման թույլտվությունը բողոքարկվել է և 2021 թվականի հունիսից վերջինս կրկին ճանաչվել է մետաղի արդյունահանող ընկերություն:

N	Հանքաքարի տեսակը	Ծավալ		Ընկերությունը
		2020	2021	
9	Ոսկու պարունակությամբ հանքաքար	67,555 տ	62,660 տ	«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ
10	Ոսկու պարունակությամբ հանքաքար	0	33,447 տ	«Ասսաթ» ՍՊԸ
11	Ոսկու պարունակությամբ հանքաքար	46,400 տ	6 տ	«Բակտեկ Էկո» ՍՊԸ
12	Ոսկու պարունակությամբ հանքաքար	0	0.02 տ	«Ղարագուլյաններ» ՓԲԸ

Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՀԹՆ զեկույցի համար

ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակած ըստ տնտեսական գործունեության տեսակների առանձնացրած արդյունաբերական արտադրության վիճակագրական տվյալների համաձայն 2020թ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի արժեքը նախորդ տարվա համեմատ աճել է 12.8%-ով՝ հասնելով 386,900 ՀՀ մլն ՀՀ դրամի, ինչը կազմում է ընդհանուր արդյունաբերական արտադրանքի 18.4%-ը: 2021թ. արտադրանքի արժեքն աճել է 47.4%-ով և, համապատասխանաբար, կազմել է ընդհանուր արդյունաբերական արտադրանքի 23.6%-ը:

Իր տարածաշրջանում շահագործվող մեծաքանակ հանքավայրերի և մետաղական հանքարդյունաբերության արտադրանքի մեծ ծավալի շնորհիվ Սյունիքը համարվում է հանքարդյունաբերության ոլորտի առաջատարը: Սյունիքի մարզի ընդհանուր արտադրանքը 2020թ. նախորդ տարվա համեմատ աճել է 6.4%-ով՝ կազմելով ընդհանուր արտադրության 77.6%-ը, մինչդեռ 2021թ. համապատասխան աճը կազմել է 53.7%՝ ընդհանուրի մեջ 81.0% մասնաբաժնով: Սյունիքին հաջորդում է Լոռին, որին 2020 և 2021թթ. համապատասխանաբար բաժին է ընկել ընդհանուր արտադրանքի 14.9%-ը և 16.2%՝ 2019-ին գրանցված 10.3%-ի փոխարեն: 2018թ. արտադրության զգալի լճացումից հետո, ինչը պայմանավորված էր «Թեղուտ» ՓԲԸ-ի ֆինանսական դժվարություններով և Թեղուտի պոչամբարի հետ կապված տեխնիկական խնդիրներով, գործունեությունը ժամանակավոր կասեցրած հանքի շահագործումը վերսկսվել է 2019թ. հունիսից՝ նպաստելով տարածաշրջանում մետաղի արտադրության զգալի աճին: 2020թ. Լոռիում մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրությունը նախորդ տարվա համեմատ աճել է 63.1%-ով:

Ստորև աղյուսակում և գծապատկերում ներկայացված են 2014-2021թթ. ընթացքում մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի ծավալները, դրամական արտահայտությամբ, ըստ մարզերի:


Աղյուսակ 3.3.3 Մետաղական հանքաքարերի արտադրությամբ առաջատար մարզերը՝ ընթացիկ գներով, մլն ՀՀ դրամ

Մարզ	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Սյունիք	168,165	146,159	167,184	236,667	259,558	282,285	300,423	461,652
Լոռի	10,695	54,899	66,515	79,088	7,263	35,456	57,838	92,571
Գեղարքունիք	8,279	12,855	14,854	15,089	18,886	23,165	26,435	14,198
Կոտայք	1,099	1,599	2,547	1,517	1,567	1,750	2,203	1,837
Ք. Երևան	-	-	-	-	-	289	-	-

Մարդ	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Ընդամենը	188,238	215,513	251,099	332,362	287,274	342,944	386,900	570,259

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության մետաղական հանքաքարի արդյունահանված արտադրանքի ծավալն ընթացիկ գներով ըստ մարզերի» հրապարակումը համապատասխան տարիների համար ⁶⁰

Գծապատկեր 3.3.1 Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի ծավալներն ըստ մարզերի, մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության մետաղական հանքաքարի արդյունահանված արտադրանքի ծավալն ընթացիկ գներով ըստ մարզերի» հրապարակումը համապատասխան տարիների համար ⁶¹


Պղինձի, ցինկի, մոլիբդենի խտանյութերը, ոսկու համաձուլվածքը և ֆերոմոլիբդենը Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքներն են: Տարածաշրջանում պղինձի խտանյութի արտադրության մեծ ծավալներով և բարձր դրամական արժեքով պայմանավորված, պղինձի խտանյութը հանդիսանում է մետաղական հանքաքարերի արդյունաբերության հիմնական արտադրատեսակը: Հայաստանի հանքարդյունաբերական ընկերությունները, ի թիվս այլ թանկարժեք մետաղների, արտադրում են նաև ոսկու հանքաքարեր և ոսկու և արծաթի ձուլակտորներ:

Հանքարդյունաբերության արտադրանքի ընդհանուր դրամական արժեքը 2020 և 2021թթ. համար ամփոփված է ստորև ներկայացված գծապատկերներում:

⁶⁰https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__3%20Industry,%20Construction,%20trade%20and%20services__32%20Industry/IC-in-e.px/table/tableViewLayout2/?rxid=636adc14-dabb-49b4-853a-d62d5b935d00

⁶¹ Նույնը

Գծապատկեր 3.3.2 2020թ. և 2021թ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրատեսակների մասնաբաժինն ընդհանուր արտադրության մեջ



Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկուլցի համար

Աղյուսակ 3.3.4.1 2020թ. մետաղական հանքաքարի արդյունաբերության ոլորտի արտադրած հիմնական արտադրատեսակները, դրանց ծավալը և արժեքը

N	Արտադրատեսակը	Չափման միավորը	Ծավալը	Դրամային արժեքը, մլն ՀՀ դրամ	Ընկերությունը
1	Պղնձի խտանյութ	թմտ	260,901	66,531	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
2	Պղնձի խտանյութ	չմտ	83,488	36,533	«Թեղուտ» ՓԲԸ
3	Պղնձի հանքաքար	թմտ	12,400	4,135	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ
4	Պղնձի հանքաքարեր և խտանյութեր	մ ³	17,921	-	«Լիճքվազ» ՓԲԸ
5	Պղնձի հանքաքարեր և խտանյութեր	տ	42,678	14,698	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
6	Պղնձի հանքաքարեր և խտանյութեր	չմտ	13,716	31,324	«Չաարատ Կապան» ՓԲԸ
7	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	գրամ	4,363,880	61,827	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ
8	Ֆերոմոլիբդեն	տ	7,179	29,547	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
9	Մոլիբդենի խտանյութ	թմտ	14,684	20,001	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

N	Արտադրատեսակը	Չափման միավորը	Ծավալը	Դրամային արժեքը, մլն ՀՀ դրամ	Ընկերությունը
10	Մոլիբդենի խտանյութ	չմտ	1,091	3,166	«Թեղուտ» ՓԲԸ
11	Մոլիբդենի խտանյութ	տ	706	1,696	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
12	Ցինկի հանքաքարեր և խտանյութեր	չմտ	12,930	6,932	«Չաարատ Կապան» ՓԲԸ
13	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տ	4,486	2,833	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ
14	Ոսկու պարունակությամբ հանքաքարեր	թմտ	13,200	-	«Ատ-Մետալս» ՍՊԸ
15	Գունավոր մետաղների հանքաքար	թմտ	1,605	-	«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ

Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկուլցի համար

Աղյուսակ 3.3.4.2 2021թ. մետաղական հանքաքարի արդյունաբերության ոլորտի արտադրած հիմնական արտադրատեսակները, դրանց ծավալը և արժեքը

N	Արտադրատեսակը	Չափման միավորը	Ծավալը	Դրամային արժեքը, մլն ՀՀ դրամ	Ընկերությունը
1	Պղնձի խտանյութ	թմտ	227,520	65,097	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
2	Պղնձի խտանյութ	չմտ	84,983	40,615	«Թեղուտ» ՓԲԸ
3	Պղնձի հանքաքար	չմտ	8,995	28,043	«Չաարատ Կապան» ՓԲԸ
4	Պղնձի հանքաքարեր և խտանյութեր	չմտ	5,164	7,380	«Չաարատ Կապան» ՓԲԸ
5	Պղնձի հանքաքարեր և խտանյութեր	տ	52,044	18,786	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ
6	Պղնձի հանքաքարեր և խտանյութեր	թմտ	10,648	8,373	«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ
7	Պղնձի հանքաքարեր և խտանյութեր	չմտ	177,679	1,558	«Լիճքվազ» ՓԲԸ
8	Պղնձի հանքաքարեր և խտանյութեր	չմտ	4,318	1,779	«Լիճքվազ» ՓԲԸ
9	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	գրամ	2,088,717	44,710	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ

N	Արտադրատեսակը	Չափման միավորը	Ծավալը	Դրամային արժեքը, մլն ՀՀ դրամ	Ընկերությունը
10	Ֆերոնոլիբդեն	տ	8,442	41,798	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
11	Մոլիբդենի խտանյութ	թմտ	8,494	15,703	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
12	Մոլիբդենի խտանյութ	չմտ	1,252	3,982	«Թեղուտ» ՓԲԸ
13	Մոլիբդենի խտանյութ	տ	817	2,307	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ
14	Ցինկի հանքաքարեր և խտանյութեր	չմտ	10,622	8,122	«Չաարատ Կապան» ՓԲԸ
15	Ոսկու պարունակությամբ հանքաքարեր	չմտ	2,304	7,183	«Չաարատ Կապան» ՓԲԸ
16	Ոսկու պարունակությամբ հանքաքարեր	չմտ	3,875	5,538	«Չաարատ Կապան» ՓԲԸ
17	Ոսկու պարունակությամբ հանքաքարեր	չմտ	3,705	1,726	«Լիճքվազ» ՓԲԸ
18	Ոսկու պարունակությամբ հանքաքարեր	տ	33,447	708	«Ասսաթ» ՍՊԸ
19	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տ	4,132	1,671	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ
20	Գունավոր մետաղների հանքաքար	կգ	20	0	«Ղարագուլյաններ» ՓԲԸ


Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՀԹՆ գեկոյցի համար

Պղնձի խտանյութի արտադրությունը և միջազգային գները

Հանքարդյունաբերության ոլորտում պղնձի խտանյութի զգալի տեսակարար կշիռը փաստում է Հայաստանի տնտեսության համար վերջինիս կարևորության մասին: ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակած տվյալների համաձայն՝ 2013-2021թթ. տարածաշրջանում պղնձի խտանյութի արտադրության միջին տարեկան աճը կազմել է 11.4%: Չնայած 2019թ. մետաղի արտադրության ծավալների զգալի աճին, հիմնականում պայմանավորված Թեղուտի հանքավայրի շահագործման վերսկսմամբ, որն իր հերթին նպաստել էր մեկ տարվա ընթացքում պղնձի արտադրության ծավալների տասնհինգապատիկ աճին, մետաղի ընդհանուր արտադրության ծավալը 2020թ. նվազել է 7.9%-ով և կազմել 375,641 տոննա, իսկ 2021թ.՝ կազմել է 357,966 տոննա:

2020թ.-ից մինչև 2021թ. ընկած ժամանակահատվածում արտադրության փոփոխվող ծավալը կախված չէ արդյունահանման աշխատանքներում ներգրավված ընկերությունների թվի հետ, քանի որ նույն երկու տարիներին էլ նույն ընկերություններն են զբաղվել են արդյունահանման գործունեությամբ և զեկուցել արդյունքները:

Գծապատկեր 3.3.3 2013-2021թթ. պղնձի խտանյութի արտադրությունը և պղնձի միջազգային գինը



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ «Արդյունաբերություն» տարեգրքի «Հիմնական արտադրատեսակների արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների հատվածների» հրապարակումը⁶² համապատասխան տարիների համար, միջազգային գինն վերաբերող տեղեկատվությունը վերցվել է Համաշխարհային բանկի տվյալների բազայից⁶³

Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում գործող ընկերությունների կողմից տրամադրված վիճակագրական տվյալների համաձայն՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն պահպանել է իր առաջատար դիրքը՝ պղնձի խտանյութի արտադրության մեջ համապատասխանաբար 60.5% և 57.3% մասնաբաժնով 2020 և 2021թթ.: «Թեղուտ» ՓԲԸ-ին 2020թ. բաժին է ընկել արտադրության 19.4%, իսկ 2021թ.՝ 21.9%-ը:

Համաշխարհային բանկի տվյալներով՝ 2021թ. պղնձի համաշխարհային միջին գները 91%-ով գերազանցել են 2016թ. գները: Ժամանակաշրջանի ընդհանուր միջին տարեկան աճը 16% է: Պղնձի շուկայական գնի աճի ամրապնդումը սկսվել է 2017թ., երբ միջին համաշխարհային գինը 2016թ. համեմատ (4,868 ԱՄՆ դոլար/տ) բարձր էր 27%-ով (6,170 ԱՄՆ դոլար/տ): 2018թ. գինը կազմել է 6,530 ԱՄՆ դոլար/տ: Չնայած 2019-ի աննշան անկմանը (6,010 ԱՄՆ դոլար/տ), 2020-ին գինն աճել է մինչև 6,174 ԱՄՆ դոլար/տ և հասել է իր ամենաբարձր ռեկորդին 2021թ.՝ 9,317 ԱՄՆ դոլար/տ:

Պղնձի միջազգային գների տատանումներն ընդհանուր առմամբ ազդում են Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի և պղնձի խտանյութի արտադրական ծավալների վրա: Վերջին տարիներին պղնձի գների աճը տեղի է ունեցել Հայաստանում պղնձի արտադրության ծավալների կրճատման հետ միաժամանակ, մինչդեռ պղնձի վաճառքից ստացված ընդհանուր եկամուտներն աճել են:

2020 և 2021թթ. ընդերքօգտագործող ընկերություններն արտադրության միասնական մոտեցում չեն կիրառել, այն է՝ պղինձ արտադրող ընկերություններից մի քանիսը նախորդ տարվա համեմատ կրճատել են իրենց արտադրությունը, իսկ մի քանիսը՝ մեծացրել են:

⁶²https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__3%20Industry,%20Construction,%20trade%20and%20services__32%20Industry/IC-in-e.px/table/tableViewLayout2/?rxid=636adc14-dabb-49b4-853a-d62d5b935d00f

⁶³ Commodity Markets (worldbank.org)

Օրինակ՝ «Չանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն 2020թ. իր արտադրության մակարդակը նվազեցրել է 21.1%-ով, որին հաջորդել է ևս 14.7% նվազեցում 2021թ.։ «Թեղուտ» ՓԲԸ-ն, ընդհակառակը, 2019թ.-ից ի վեր մեծացրել է իր արտադրության ծավալները (2020 և 2021թթ. գրանցելով համապատասխանաբար 57.3% և 1.8% աճ նախորդ տարվա համեմատ)։ Նմանապես, «Չաարատ Կապան» ՓԲԸ-ն 2020 և 2021թթ. արտադրությունն ավելացրել է համապատասխանաբար 29.7%-ով և 3.2%-ով։ Ավելին, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն նշված երկու տարիների ընթացքում ավելացրել է արտադրության ծավալները, մինչդեռ «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ն նույն ժամանակահատվածում կրճատել է իր արտադրանքի ծավալները։

Աղյուսակ 3.3.5.1 2020թ. պղնձի խտանյութի արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Չափման միավոր	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«Չանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	թմտ	260,901	66,531
«Թեղուտ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Թեղուտ	չմտ	83,488	36,533
«Չաարատ Կապան» ՓԲԸ ⁶⁴	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	չմտ	13,716	31,324
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	տ	42,678	14,698
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Թեղուտ	թմտ	12,400	4,135
«Լիճքվազ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	չմտ	17,921	-
Ընդամենը			431,104	153,221

Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկուլցի համար

Աղյուսակ 3.3.5.2 2021թ. պղնձի խտանյութի արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Չափման միավոր	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«Չանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	թմտ	222,905	65,097
«Թեղուտ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Թեղուտ	չմտ	84,983	40,615
«Չաարատ Կապան» ՓԲԸ ⁶⁵	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	չմտ	14,119	35,423
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	տ	52,044	18,786
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Թեղուտ	թմտ	10,648	8,373
«Լիճքվազ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	չմտ	4,318	1,779
Ընդամենը			388,672	170,074

Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկուլցի համար

⁶⁴ Նախկինում՝ «Կապանի Լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ

⁶⁵ Նույնը

Մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտադրությունը և միջազգային գները

Մոլիբդենի արտադրատեսակներից Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվում է ֆերոմոլիբդեն և մոլիբդենի խտանյութ: «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին, «Թեղուտ» ՓԲԸ-ին, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին 2020թ. դրությամբ բաժին է ընկել ֆերոմոլիբդենի և մոլիբդենի խտանյութի արտադրության ծավալի համապատասխանաբար 92.4%, 4.6% և 3.0%-ը և 89.1%, 6.6% և 4.3%-ը 2021թ. դրությամբ:

Աղյուսակ 3.3.6 2020թ. և 2021թ. մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	2020		2021	
		Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	21,863	49,548	16,936	57,501
«Թեղուտ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Թեղուտ	1,091	3,166	1,252	3,982
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Ագարակ	706	1,696	817	2,307
Ընդամենը		23,660	54,410	19,005	63,790

Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՀԹՆ գեկոյցի համար


ՀՀ ՎԿ-ի հրապարակած տվյալների համաձայն⁶⁶՝ 2015թ.-ից ի վեր գրանցվել է մոլիբդենի խտանյութի արտադրության աճ, արտադրության աննշան լճացումով (3.7%) գրանցված 2018թ., ինչը վերականգնվել է 2019թ. գրանցված 29.9% աճով: Բացի այդ, մոլիբդենի արտադրության ծավալը 2020թ. հասել է ռեկորդային բարձր ցուցանիշի (24,884 տոննա), որը 72.43%-ով գերազանցել է 2019թ. համապատասխան ցուցանիշը: Չնայած 2021թ. մոլիբդենի արտադրության բարձր մակարդակի պահպանմանը, որը կազմել է շուրջ 22,177 տոննա, արձանագրվել է մոլիբդենի արտադրության ծավալի 10.9% անկում նախորդ տարվա համեմատ:

Մինչդեռ 2013-2021 ընկած ժամանակահատվածում ֆերոմոլիբդենի արտադրության ծավալներն աննշան փոփոխություններ են կրել՝ գրանցելով 3.3% միջին տարեկան աճ: Արտադրության ամենացածր մակարդակը գրանցվել է 2015թ. (5,576 տոննա): 2020թ. արձանագրվել է ֆերոմոլիբդենի արտադրության ծավալի աննշան անկում 0.04%-ով, մինչդեռ 2021թ. համապատասխան ցուցանիշը կազմել է 8,335 տոննա, ինչը 8.1%-ով գերազանցել է նախորդ տարվա արդյունքները: Թեև մոլիբդենի և ֆերոմոլիբդենի արտադրության դինամիկան երբեմն կարող է համընկնել, արտադրության ծավալները էապես տարբերվում են: Վերջին երեք տարիների ընթացքում մոլիբդենի խտանյութի արտադրության միջին տարեկան աճը կազմել է 30.5%, մինչդեռ ֆերոմոլիբդենինը՝ ընդամենը 4.6%:

⁶⁶https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__3%20Industry,%20Construction,%20trade%20and%20services__32%20Industry/IC-in-e.px/table/tableViewLayout2/?rxid=636adc14-dabb-49b4-853a-d62d5b935d00f

Trading Economics ամսագրից վերցված տվյալների համաձայն⁶⁷ 2015-2023թթ. ընթացքում մոլիբդենի միջազգային գների աճի միտում է նկատվել: Մոլիբդենի միջազգային գինը 2021թ. աճել է գրեթե չորս անգամ՝ համեմատած 2015թ. գրանցված համապատասխան ցուցանիշի հետ: Նշված ժամանակահատվածում միջին տարեկան աճը կազմել է 26%: 2018թ. մոլիբդենի գների ռեկորդային բարձր ցուցանիշից հետո (28,571 ԱՄՆ դոլար/տ) գները 2019թ. դրությամբ նվազել են՝ հասնելով մինչև 21,905 ԱՄՆ դոլար/տ: 2020թ. մոլիբդենի միջին գինը կազմել է 23,691 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար, իսկ 2021թ. այն հասել է ռեկորդային մակարդակի՝ 44,881 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար: Ընդհանուր առմամբ, ինչպես երևում է ներքևի նկարում, արտադրության ծավալների աճը համեմատաբար համապատասխանել է մոլիբդենի գների աճին:

Գծապատկեր 3.3.4 2013-2021թթ.ն մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտադրությունը և մոլիբդենի միջազգային գինը



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ «Արդյունաբերություն» տարեգրքի «Հիմնական արտադրատեսակների արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների հատվածների» հրապարակումը համապատասխան տարիների համար⁶⁸, միջազգային գինն վերաբերող տեղեկատվությունը վերցվել է tradingeconomics.com կայքից⁶⁹

Ցինկի հանքաքարի և խտանյութի արտադրությունը և միջազգային գները

Ցինկը Հայաստանում արտադրվող մետաղատեսակներից է: ՀՀ-ում ցինկի արդյունահանմամբ զբաղվող միակ ընկերությունը «Չարատ Կապան» ՓԲԸ-ն է, որը շահագործում է Սյունիքի մարզում գտնվող հանքերը:


Համաձայն ՀՀ ՎԿ-ի կողմից տրամադրված տվյալների՝ 2013-2016 ընկած ժամանակահատվածում ցինկի արտադրությունը զգալիորեն նվազել է՝ 2016թ. հասնելով ամենացածր ցուցանիշին (7,891 տոննա)՝ նախորդ տարվա համեմատ նվազելով մոտ 30.3%-ով: Այնուհետև, 2017-2020 ընկած ժամանակահատվածում, ցինկի արդյունաբերության ծավալը շարունակաբար աճել է՝ գրանցելով 13.3% միջին տարեկան աճ: Սակայն աճման տենդենցը հակադարձել է 2021թ.՝ 17.9% արտադրության ծավալի կտրուկ նվազմամբ:

⁶⁷ <https://tradingeconomics.com/commodity/molybden>

⁶⁸ https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__3%20Industry,%20Construction,%20trade%20and%20services__32%20Industry/IC-in-e.px/table/tableViewLayout2/?rxid=636adc14-dabb-49b4-853a-d62d5b935d00

⁶⁹ <https://tradingeconomics.com/commodity/molybden>

Գծապատկեր 3.3.5 2013-2021 թթ. ցինկի խտանյութի արտադրությունը և ցինկի միջազգային գինը



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ «Արդյունաբերություն» տարեգրքի «Հիմնական արտադրատեսակների արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների հատվածների» հրապարակումը համապատասխան տարիների համար⁷⁰, միջազգային գինն վերաբերող տեղեկատվությունը վերցվել է Համաշխարհային բանկի տվյալների բազայից⁷¹

Համաշխարհային բանկի տվյալներով՝ 2021թ. ցինկի միջին գինը 2016-2021թթ. ընթացքում աճել է 43%-ով՝ գրանցելով 10% միջին տարեկան աճ: 2018թ. ցինկի միջազգային գինն աճել է մինչև 2,922 ԱՄՆ դոլար/տ՝ 2017թ. գրանցված 2,891 և 2016թ.՝ 2,090 ԱՄՆ դոլար/տոննայի դիմաց: Հարկ է նշել, որ հաջորդող երկու տարիների ընթացքում ցինկի միջազգային գինը նվազման միտում է ցուցաբերել՝ կազմելով 2,550 և 2,266 ԱՄՆ դոլար/տ համապատասխանաբար 2019 և 2020թթ. համար: Սակայն 2021թ. ցինկի գինը հասել է իր առավելագույն ցուցանիշին՝ կազմելով 3,003 ԱՄՆ դոլար/տ, ինչը գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը 32%-ով:

Ցինկի միջազգային միջին գների և արտադրության ծավալների միջև կա ընդհանուր բացասական հարաբերակցություն, քանի որ ցինկը պղինձ-բազմամետաղային հանքաքարի արտադրության հավելանյութ է: Ցինկի խտանյութի արտադրության ծավալների և հանքանյութի միջազգային գների միջև դինամիկան ներկայացված է 3.3.5 գծանկարում: Վիճակագրական տվյալների համաձայն՝ գների անկումից հետո Հայաստանը 2020թ. ավելացրել է ցինկի արդյունահանման ծավալները մինչև 12,930 տոննա, սակայն 2021թ. գների աճին զուգընթաց նվազեցրել է արդյունահանման ծավալները՝ հասցնելով 10,622 տոննայի:

Աղյուսակ 3.3.7 2020թ. և 2021թ. ցինկի խտանյութի արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	2020		2021	
		Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«Չաարատ Կապան» ՓԲԸ	Սյունիքի մարզ, Կապան	12,930	6,932	10,622	8,122
Ընդամենը		12,930	6,932	10,622	8,122

Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՀԹՆ գեկույցի համար

⁷⁰https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__3%20Industry,%20Construction,%20trade%20and%20services__32%20Industry/IC-in-e.px/table/tableViewLayout2/?rxid=636adc14-dabb-49b4-853a-d62d5b935d00

⁷¹ Commodity Markets (worldbank.org)

Ընդերքօգտագործող ընկերություններից և Վիճակագրական կոմիտեից ստացած տեղեկատվության համեմատություն

Աղյուսակ 3.3.8 2020թ. և 2021թ. ընդերքօգտագործող ընկերություններից և Վիճակագրական կոմիտեից ստացած տեղեկատվության համեմատություն

Արտադրատեսակը	2020		2021	
	Արտադրանքի ծավալը (տ) ըստ ՀՀ ՎԿ-ի	Արտադրանքի ծավալը (թմտ) ըստ ընկերությունների	Արտադրանքի ծավալը (տ) ըստ ՀՀ ՎԿ-ի	Արտադրանքի ծավալը (թմտ) ըստ ընկերությունների
Պղնձի խտանյութ	375,641	431,104	357,966	388,672
Մոլիբդենի խտանյութ	24,884	16,481	22,177	10,563
Ֆերոմոլիբդեն	7,709	7,179	8,335	8,442
Ցինկի խտանյութ	12,930	12,930	10,622	10,622

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների և ՀՀ ՎԿ-ի կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

2020 և 2021թթ. մետաղի արտադրության ծավալի վերաբերյալ հավաքագրված տվյալների ստուգման նպատակով համեմատություն է անցկացվել ընկերությունների կողմից տվյալ տարվա համար հրապարակված տեղեկատվությունների և ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակված համապատասխան տվյալների միջև: Ցինկի խտանյութերի դեպքում ընկերությունների բացահայտած արտադրական ծավալների և ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակված տվյալների միջև անհամապատասխանություններ չեն գրանցվել: Մինչդեռ, առկա են տարբերություններ պղնձի, մոլիբդենի և Ֆերոմոլիբդենի արտադրատեսակների ծավալների միջև 2020 և 2021թթ. տվյալներում: Նշված մետաղատեսակների ցուցանիշներում անհամապատասխանությունները բացատրվում են չափման միավորների նկատմամբ ստանդարտացման տարբեր գործակիցների կիրառմամբ: Մասնավորապես՝ ընկերությունների կողմից հրապարակված ծավալները հաշվարկվել են տոննաներով, չոր մետրիկ տոննայով (չմտ) և թաց մետրիկ տոննայով (թմտ), իսկ ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակված ծավալները ներկայացված են չոր մետրիկ տոննաներով (չմտ):

Վերոնշյալ պատճառով 2020 և 2021թթ. պղնձի խտանյութերի դեպքում ընկերությունների կողմից բացահայտած արտադրական ծավալները գերազանցում են ՀՀ ՎԿ-ի արձանագրած ծավալները համապատասխանաբար 14.8% և 8.6%-ով: 2020թ. ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակված ֆերոմոլիբդենի արտադրական ծավալի ցուցանիշը 7.4%-ով գերազանցում է ընկերությունների կողմից հրապարակված համապատասխան ցուցանիշը, մինչդեռ 2021թ. ընկերությունների կողմից հրապարակված ֆերոմոլիբդենի արտադրական ծավալի ցուցանիշը 1.3%-ով գերազանցում է ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակված ցուցանիշը:

Տարբերությունների վերաբերյալ մի այլ հիմնավորում է առաջ եկել, որը բացատրում է երկու աղբյուրների կողմից հրապարակված մոլիբդենի խտանյութի և Ֆերոմոլիբդենի արտադրության ծավալների տարբերությունը: Մոլիբդենի խտանյութի արտադրության ծավալների միջև 2020թ.՝ 33,8% և 2021թ.՝ 52,4% զգալի տարբերությունը հիմնականում պայմանավորված է «Զանգեզուր» պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից ընդերքի լիցենզիա չունեցող երրորդ կողմի կապալառու ընկերությունների ներգրավմամբ ֆերոմոլիբդենի արտադրության մեջ: Մոլիբդենի խտանյութի արտադրության ծավալների

միջև 2020թ. գրանցված 33.8%-ի և 2021թ. գրանցված 52.4% զգալի տարբերությունը հիմնականում պայմանավորված է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից ֆերոմոլիբդենի արտադրության մեջ ընդերքօգտագործման լիցենզիա չունեցող երրորդ կողմ հանդիսացող պայմանագրային ընկերությունների ներգրավմամբ: Նշված երկու տարիներին վերջինս պայմանագիր է կնքել «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի և «ԱՄՊ հոլդինգ» ՍՊԸ-ի հետ՝ ֆերոմոլիբդենի արտադրության նպատակով: Նշված երկու ընկերությունները իրենց կողմից արտադրված մետաղի ծավալի մասին տեղեկատվությունը տրամադրում են ՀՀ ՎԿ, մինչդեռ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն ներկայացրել է միայն իր սեփական արտադրության ծավալները, քանի որ մյուս երկու ընկերությունները ներառված չեն ԱՃԹՆ շրջանակներում:

Թանկարժեք մետաղների խտանյութի արտադրությունը և ոսկու միջազգային գները

2016թ. -ից ի վեր ոսկու գինը ցուցաբերել է աճման միտում՝ չգրանցելով որևիցե բացասական շեղումներ: 2016-2021թթ. ոսկու միջազգային գինը գրանցել է 44% միջին աճ՝ 1,249 ԱՄՆ դոլար/տրոյական ունցիայից հասնելով մինչև 1,800 ԱՄՆ դոլար/տրոյական ունցիայի (8% միջին տարեկան աճ): Հայաստանում ոսկու և արծաթի ձուլակտորների արժեքային ծավալն արտադրության ընդհանուր ծավալի մեջ կազմել է 95.6% և 97.3%՝ համապատասխանաբար 2020 և 2021թթ. համար: Ոսկու և արծաթի ձուլակտորների պատմականորեն մեծ արժեքը, այս մետաղի տեսակը դարձնում է Հայաստանի Հանրապետության ոսկու հիմնական արտադրանքը: ՄԱԿ-ի Comtrade տվյալների համաձայն⁷², Հայաստանը գրանցվել է 247 մլն ԱՄՆ դոլարի ընդհանուր եկամուտ ոսկու արտահանումից: Սակայն, չնայած գների բարձրացմանը, ոսկու արտահանումից ստացված ընդհանուր եկամուտը 2021թ. կազմել է ընդամենը 134 մլն ԱՄՆ դոլար: Հետևաբար, Հայաստանը 2021թ. կրճատել է ոսկու արտադրության ծավալները:


ՀՀ ՎԿ-ն չի հրապարակում թանկարժեք մետաղների տարանջատման առավել մանրամասն տվյալները (օր՝ ոսկի, արծաթ և այլն), քանի որ, համաձայն «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի գ) ենթակետի, այդ տվյալները դասվում են պետական և ծառայողական գաղտնիքների շարքին⁷³: Այս պատճառով, հասանելի են միայն ԱՄՆ Երկրաբանական ծառայության կողմից հրապարակված տվյալները, որոնք, սակայն, ընդգրկում են Հայաստանում ոսկու արդյունահանումը միայն 2014-2018թթ. ընկած ժամանակահատվածի համար ⁷⁴ : Հարկ է նշել, որ ընկերությունների կողմից հրապարակված ոսկու արտադրության ծավալները հաշվառվում են ըստ թանկարժեք մետաղների մեջ առկա ոսկու կոնցենտրացիայի: Ստորև պատկերված գծանկարում ներկայացված է ոսկու միջազգային գնի 2013-2021թթ. դինամիկան, որին հաջորդում է ընկերությունների կողմից բացահայտված ոսկու արտադրմանը վերաբերող տվյալները:

⁷² <https://comtrade.un.org/data/>

⁷³ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=140399>

⁷⁴ <https://d9-wret.s3.us-west-2.amazonaws.com/assets/palladium/production/atoms/files/myb3-2017-18-Armenia.pdf>

Գծապատկեր 3.3.6 2013-2021թթ. ոսկու մեկ տրոյական ունցիայի գինը, ԱՄՆ դոլար



Աղբյուրը՝ միջազգային գնին վերաբերող տեղեկատվությունը վերցվել է Համաշխարհային բանկի տվյալների բազայից⁷⁵

Աղյուսակ 3.3.9.1 2020թ. ոսկու արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Արտադրատեսակը	Չափման միավոր	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Գեղամասար	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	տ	4.36	61,827
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	ՀՀ, Կոտայքի մարզ, Մեդրաձոր	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տ	4,486	2,833
«Ատ-Մետալս» ՍՊԸ	ՀՀ, Վայոց Ձոր, Ագատեկ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	թմտ	13,200	0 ⁷⁶

Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՀԹՆ զեկույցի համար

Աղյուսակ 3.3.9.2 2021թ. ոսկու արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Արտադրատեսակը	Չափման միավոր	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Գեղամասար	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	տ	2.09	44,710
«Չարատ Կապան» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	չմտ	6,179	12,721
«Լիճքվազ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	չմտ	3,705	1,726
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	ՀՀ, Կոտայքի մարզ, Մեդրաձոր	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տ	4,132	1,671

Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՀԹՆ զեկույցի համար

2020 և 2021թթ. Հայաստանի Հանրապետությունում ոսկու տարատեսակներից արտադրվել են ոսկու և արծաթի ձուլակտորներ և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութեր: 2018թ. արտադրության ժամանակավոր դադարեցումից հետո «Ատ-Մետալս» ՍՊԸ-ն վերսկսել է իր գործունեությունը և 2020թ. գրանցել է թանկարժեք մետաղների խտանյութ պարունակող 13 հազ. թաց մետրիկ տոննա ոսկու արտադրություն: Մակայն,

⁷⁵ <https://www.worldbank.org/en/research/commodity-markets#1>

⁷⁶ «Ատ-Մետալս» ՍՊԸ-ի սպառման արժեքը գրոյական է, քանի որ ընկերության տվյալներով վաճառք չի կատարվել 2020 թվականին:

ընկերության կողմից հայտարարագրված արտադրության արժեքը 0 է, քանի որ ընկերությունը 2020թ. ընթացքում վաճառքներ չի իրականացրել: 2020 և 2021 թթ. ընթացքում «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն իր արդյունահանման մակարդակը նվազեցրել է համապատասխանաբար 9.1% և 52.1%-ով: Մինևույն ժամանակ, ոսկու արդյունահանման համապատասխան արժեքը 2020թ. աճել է 17.2%-ով, իսկ 2021թ. նվազել է 27.7%-ով:

2020թ. «Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ-ն ոսկու արդյունահանման ծավալներն ավելացրել է 37.0%-ով, մինչդեռ արդյունահանման արժեքն ավելացել է 68.5%-ով: Սակայն, 2021թ. «Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ-ի ոսկու արդյունահանման ծավալները և արժեքը նվազել են համապատասխանաբար 8% և 41%-ով: 2021թ. ոսկու արտադրության զգալի բաժինն ապահովել են «Չաարատ Կապան» ՓԲԸ-ն և «Լիճքվազ» ՓԲԸ-ն, տվյալ ժամանակահատվածում արդյունահանված ոսկու ընդհանուր արժեքում համապատասխան 20.9% և 2.8% մասնաբաժնով: Հարկ է նշել, որ թեև «Չաարատ Կապան» ՓԲԸ-ի ոսկու և արծաթի ձուլակտորների արտադրության ծավալը գերազանցում «Լիճքվազ» ՓԲԸ-ի արտադրության ծավալն ընդամենը 1.7 անգամ, արտադրանքի արժեքը 7.4 անգամ ավելին է:

3.4 Իրացումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.2 և 3.3)


3.4.1 Արտահանում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

Արդյունաբերությունը Հայաստանում առաջատար ճյուղերից մեկն է՝ 2021թ.⁷⁷ ՀՆԱ-ում 26.93% մասնաբաժնով: Հանքարդյունաբերության ոլորտը, ըստ էության, գերիշխող ոլորտը չէ, բայց այն ապահովում է երկրի արտահանումների զգալի մասը: Համաձայն ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության⁷⁸՝ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը կազմել է Հայաստանի Հանրապետության ընդհանուր արտահանման ծավալի 42.8% (998 մլն ԱՄՆ դոլար) և 41.5% (1,230 մլն ԱՄՆ դոլար) համապատասխանաբար 2020 և 2021թթ. համար: Չնայած 2013-2019թթ. հանքարդյունաբերության ոլորտում գրանցված արտահանման ցուցանիշների շարունակական տարեկան աճին, 2020թ. արձանագրվել է աճի լճացում: Աճման ցուցանիշը նվազել է 2.5%-ով, սակայն այն վերականգնվել է 2021թ.՝ գրանցելով 23.3% աճ նախորդ տարվա համեմատ: Չնայած արտահանվող մետաղների դոլարային արժեքի բարձրացմանը, արտահանվող մետաղների ընդհանուր ծավալը 2019թ.-ից ի վեր նվազել է: Վերջինիս ցուցանիշը 2019թ. գրանցված 588 հազ. տոննայից նվազել է հասնելով 503 հազ. տոննայի 2020թ. և 460 հազ. տոննայի 2021թ.:

⁷⁷ <https://www.statista.com/statistics/440577/armenia-gdp-distribution-across-economic-sectors/#:~:text=This%20statistic%20shows%20the%20distribution,percent%20from%20the%20services%20sector.>

⁷⁸ <https://comtrade.un.org/data/>

Գծապատկեր 3.4.1 2013-2021թթ. ընդհանուր արտահանումը, մետաղական արտադրատեսակների մասնաբաժինն արտահանման մեջ, և՛ն ԱՄՆ դոլար



Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՍՄԿ-ի COMTRADE վիճակագրության վրա⁷⁹

Մետաղատեսակներից պղնձի խտանյութին է բաժին ընկնում Հայաստանից ընդհանուր արտահանման ամենամեծ տոկոսը, որը համապատասխանաբար 2020 և 2021թթ. կազմել է 24.0% և 25.9%: Մոլիբդենի խտանյութի տեսակարար կշիռն ընդհանուր արտահանման մեջ 2020 և 2021թթ. կազմել է 4.1%՝ 3%-ով ավելի 2019թ. համապատասխան արժեքից: Մինչդեռ 2021թ. արտահանվող մոլիբդենի խտանյութի ծավալը 2020թ. գրանցված 15,234 տոննայից նվազել է 10,233 տոննայի: Ավելին, ոսկուն վերագրվող արտահանման մասնաբաժինը 2020թ. աճել է մինչև 10.6% 2019թ. գրանցված 8.6% փոխարեն, իսկ 2021թ. կտրուկ նվազել է 4.5%: 2021թ. ֆերոմոլիբդենին է բաժին ընկնում ընդհանուր արտահանման 6.4%՝ 2020թ. 3.7% համեմատ, մինչդեռ 2021թ. ցինկի խտանյութն ընդհանուր արտահանման մեջ հասել է մոտ 0.6%:


Պղնձի խտանյութերը կազմում են հանքանյութերի արտահանման ընդհանուր ծավալի գերակշիռ մասը: Պղնձի խտանյութի մասնաբաժինը հանքանյութերի արտահանման ընդհանուր ծավալի մեջ 2020թ. գրանցված 56.1%-ից (560 մլն ԱՄՆ դոլար) 2021թ. աճել է՝ հասնելով 62.5% (769 մլն ԱՄՆ դոլար): 2021թ. ոսկու խտանյութի մասնաբաժինը հանքանյութերի արտահանման ընդհանուր ծավալի մեջ զգալիորեն նվազել է հասնելով 10.9%-ի, ի տարբերություն 2020թ.ին գրանցված 24.8%-ի: Մինևս ժամանակ, ֆերոմոլիբդենի խտանյութի արտահանման ցուցանիշը, որը 2020թ. կազմում էր հանքարդյունաբերության ոլորտի արտահանման միայն 8.6%-ը, 2021թ. գրեթե կրկնապատկվել է (15.3%): Մոլիբդենի և ցինկի խտանյութերի բաժնեմասերը հանքանյութերի արտահանման ընդհանուր ծավալում 2020 և 2021թթ. համեմատաբար կայուն են պահպանվել՝ համապատասխանաբար 9.9% և 1.3%:

Ի տարբերություն այլ մետաղատեսակների 2013-2021թթ. ընթացքում պղնձի խտանյութը, ցինկի խտանյութը և ֆերոմոլիբդենը կազմել են հանքանյութերի արտահանման ընդհանուր ծավալի գերակշիռ մասը: Մոլիբդենի մասնաբաժինը հանքանյութերի արտահանման

⁷⁹ Նույնը

ընդհանուր ծավալի մեջ նախորդ տարիների համեմատ զգալիորեն աճել է: 2013-2021թթ. արտահանված ոսկու խտանյութի ծավալը համեմատաբար աննշան է եղել՝ համեմատած մյուս մետաղատեսակների հետ, ինչպես ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

Գծապատկեր 3.4.2 2013-2021թթ. մետաղական արտադրատեսակների արտահանումը բնեղեն արտահայտությամբ, հազ. տոննա




Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա⁸⁰

Պղնձի խտանյութի արտահանում

Պղնձի խտանյութի արտահանումը 2021թ. կազմել է Հայաստանի հանքանյութերի արտահանման ընդհանուր ծավալի 93.4%-ը: Պղնձի խտանյութի արտադրության և արտահանման մեծ ծավալները և բարձր արժեքն այն դարձնում են էական խթանիչ Հայաստանի ՀՆԱ-ի համար: 2013-2021թթ. տարածաշրջանում պղնձի խտանյութի արտադրության միջին տարեկան աճը կազմել է 11.9%: Աճման միտումը շարունակվել է մինչև 2017թ.: 2018թ. պղնձի խտանյութի արտադրության ծավալը նվազել է 25.9%-ով, ինչը համեմատաբար հավասարակշռվել է 2019թ. գրանցված 28.5% աճով: Սակայն, 2020թ. պղնձի խտանյութի արտադրության ծավալը կրկին նվազել է 7.9%-ով, որին հաջորդել է ևս 1.1% նվազում 2021թ.: Համապատասխանաբար պղնձի խտանյութի արտահանման ծավալները 2020 և 2021թթ. ընթացքում նվազել են 16.3% և 8.7%-ով:

Գծապատկեր 3.4.3 2013-2021թթ. պղնձի խտանյութի արտահանման բաշխումն ըստ երկրների, մլն դոլար



Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա⁸¹

Չնայած 2020 և 2021թթ. պղնձի խտանյութի արտահանման ծավալների անկմանը, 2021թ. պղնձի խտանյութի դրամական արժեքն աճել է 37.9%-ով: Պղնձի խտանյութի

⁸⁰ Նույնը
⁸¹ Նույնը

մասնաբաժինը Հայաստանի հանքանյութերի արտահանման ընդհանուր արժեքային ծավալի մեջ 2020 և 2021թթ. կազմել է համապատասխանաբար 56.1% և 62.5%: Հարկ է նշել, որ պղնձի խտանյութի արտահանման ամենամեծ մասնաբաժինը 2020 և 2021թթ. բաժին է ընկել Շվեյցարիային՝ պղնձի խտանյութի ընդհանուր արտահանման մեջ համապատասխանաբար 43.1% և 37.4% մասնաբաժնով: Տոկոսային մասնաբաժնով հաջորդ պետությունը Չինաստանն է, որը 2021թ. ապահովել է ընդհանուր արտահանման 37.2%, ի տարբերություն 2020թ. գրանցված 31.6%-ի: 2021թ. Չինաստան արտահանված պղնձի խտանյութի արժեքային ծավալը 62.0%-ով գերազանցել է 2020թ. գրանցված համապատասխան ցուցանիշը (176.7 մլն ԱՄՆ դոլար): Իր հերթին Բուլղարիան պահպանել է իր երրորդ տեղը՝ չնայած պղնձի խտանյութի արտահանման 37,9% աճին՝ 2020 և 2021թթ. համապատասխանաբար 25.3% (141.8 մլն ԱՄՆ դոլար) և 25.4% (195.6 մլն ԱՄՆ դոլար) չափով: 2020 և 2021թթ.: Միացյալ Թագավորությունը, Նիդերլանդները, Վրաստանը, Ավստրալիան և Ռուսիայի հանդիսանում են արտահանման մյուս ուղղությունները՝ 2021թ. ապահովելով ընդհանուր պղնձի խտանյութի արտահանման արժեքային ծավալի ավելի քիչ քան 1%-ը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է արտահանվող պղնձի խտանյութի բաշխումն ըստ երկրների 2013-2021թթ. դրությամբ:

«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն հանդիսանում է պղնձի խտանյութի առաջատար արտահանող: 2020թ. ընկերության ծավալային մասնաբաժինն ընդհանուր արտահանման մեջ կազմել է 57.8%, որը ուղղված է եղել դեպի Չինաստան և Բուլղարիա: Ավելին, 2021թ. «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ից արտահանվող պղնձի խտանյութի մասնաբաժինը կրճատվել է մինչև 56%՝ Չինաստան, Վրաստան և Բուլղարիա արտահանման հիմնական ուղղություններով: Հարկ է նշել, որ ընկերության մասնաբաժնի կրճատումը տեղի է ունեցել այլ ընկերությունների կողմից արտահանման ծավալների ավելացման հետևանքով:

Աղյուսակ 3.4.1.1 2020թ. պղնձի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ցածման մարզը	Ընկերության անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար ⁸²
Լոռու մարզ	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ»	Բուլղարիա	12,050 թմտ	5,381	10,997
	«Թեղուտ» ՓԲԸ	Շվեյցարիա	86,515 չմտ	51,162	104,560
Սյունիքի մարզ	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Չինաստան	41,686 տ	18,163	37,119
	«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Չինաստան, Վրաստան, Բուլղարիա	260,983 թմտ	144,155	294,610
	«Չաարատ Կապան» ՓԲԸ	Վրաստան	14,548 թմտ	30,594	62,524
Ընդամենը			-	249,454	509,810

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

⁸² Ձեկույցի շրջանակներում տարադրամի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված բոլոր փոխարժեքների միջինացմամբ: 2020թ. մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը եղել է 489.31 ՀՀ դրամ:

Աղյուսակ 3.4.1.2 2021թ. պղնձի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար ⁸³
Լոռու մարզ	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ»	Բուլղարիա	11,025 թմտ	8,373	16,643
	«Թեղուտ» ՓԲԸ	Շվեյցարիա	82,721 չմտ	76,939	152,923
Սյունիքի մարզ	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Չինաստան	50,038 տ	39,208	77,930
	«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Չինաստան, Վրաստան, Բուլղարիա	222,906 թմտ	196,544	390,651
	«Չաարատ Կապան» ՓԲԸ	Վրաստան	14,158 թմտ	29,876	59,381
Ընդամենը				350,940	697,528

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

Պղնձից զատ պղնձի խտանյութը պարունակում է թանկարժեք մետաղներ, ինչպիսիք են ոսկին և արծաթը: Ստորև աղյուսակում ներկայացված են պղնձի հանքաքար և խտանյութ արդյունահանող ընկերությունների արտահանման ծավալներն՝ ըստ մետաղների վերջնական պարունակության:

Աղյուսակ 3.4.2 2020թ. և 2021թ. արտահանված պղնձի խտանյութի մեջ վճարվող համարվող մետաղների վերջնական պարունակությունը

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Մետաղը	2020		2021	
			Ծավալը	Խտանյութի ծավալը	Ծավալը	Խտանյութի ծավալը
Լոռու մարզ	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ»	պղինձ	2,305 տ	12,050 թմտ	2,040 չմտ	11,025 թմտ
	«Թեղուտ» ՓԲԸ	պղինձ	19,256 տ	86,515 թմտ	18,042 չմտ	82,721 չմտ
Սյունիքի մարզ	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	պղինձ	9,296 տ	41,686 թմտ	11,519 տ	50,038 տ
	«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	պղինձ	51,966 տ	260,983 թմտ	44,634 տ	222,906 թմտ
		արծաթ	587 կգ		396 կգ	
		ոսկի	12,249 կգ		9,425 կգ	
	«Չաարատ Կապան» ՓԲԸ	պղինձ	2,328 տ	14,158 թմտ	2,407 տ	14,158 թմտ
		ոսկի	917 կգ		977 կգ	
արծաթ		17,530 կգ	19,991 կգ			

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար


⁸³ Չեկույցի շրջանակներում տարադրամի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված բոլոր փոխարժեքների միջինացմամբ: 2021թ. մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը եղել է 503.12 ՀՀ դրամ:

Մոլիբդենի խտանյութ և ֆերոմոլիբդենի արտահանում

Մոլիբդենի խտանյութի արտահանման դրամական արժեքը 2020թ. կազմել է 95.4 մլն ԱՄՆ դոլար, ինչը հինգ անգամ գերազանցում է 2019թ. գրանցված համապատասխան ցուցանիշը: Համապատասխանաբար, նշված ժամանակահատվածում արտահանված մոլիբդենի խտանյութի ծավալն աճել է մոտ 7 անգամ: 2020թ. մոլիբդենի խտանյութի արտահանումն արժեքային առումով կազմել է մետաղական արտադրատեսակների արտահանման 9.6%-ը: 2021թ. համապատասխան ցուցանիշը կազմել է մետաղական արտադրատեսակների արտահանման 10.0%-ը: Չնայած 2020-2021թթ. արտահանված մոլիբդենի արժեքի 28.3% աճին, մոլիբդենի արտահանման ընդհանուր ծավալը մեկ տարում կրճատվել է 32.8%-ով: Նշված երկու տարիների ընթացքում մոլիբդենի խտանյութի արտահանման հիմնական ուղղություն է հանդիսացել Չինաստանը: Չինաստանին է բաժին ընկել արտահանված մոլիբդենի խտանյութի ընդհանուր ծավալի համապատասխանաբար 85% և 82%-ը: Հարկ է նշել, որ Չինաստան արտահանված մոլիբդենի խտանյութի ընդհանուր ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 33.5 անգամ, 2021թ. հասնելով 99.8 մլն ԱՄՆ դոլարի: Երկու տարվա ընթացքում Չինաստանին հաջողվել է դառնալ Հայաստանի արտահանման առաջատար գործընկեր՝ մոլիբդենի խտանյութի արտահանման հսկայական ծավալով և արժեքով: Արտահանման ծավալներով երկրորդ և երրորդ հորիզոնականները զբաղեցնում են Շվեյցարիան և Բելգիան:

2020 և 2021թթ. ֆերոմոլիբդենի արտահանումն կազմել է մետաղական արտադրատեսակների արտահանման համապատասխանաբար 8.6% և 15.3%: 2018թ.-ից ի վեր Հայաստանից ֆերոմոլիբդենի արտահանման միակ գործընկերներ են հանդիսացել Նիդերլանդները և Ռուսաստանի Դաշնությունը: 2013թ.-ից ի վեր Նիդերլանդները հանդիսացել է Հայաստանից ֆերոմոլիբդենի արտահանման հիմնական ուղղությունը: 2020 և 2021թթ. Նիդերլանդներին է բաժին ընկել արտահանված ընդհանուր ծավալի համապատասխանաբար 87% և 93%: Հայաստանի Հանրապետությունից ֆերոմոլիբդեն ներկրողների ցանկում երկրորդ հորիզոնականը զբաղեցնում է Ռուսաստանի Դաշնությունը, որի մասնաբաժինը նշված ժամանակահատվածի համար համապատասխանաբար կազմել է 12% և 6%: 2020թ. ֆերոմոլիբդենի արտահանման ընդհանուր արժեքը նվազել է 40.0%-ով, սակայն վերջինիս ցուցանիշը 2021թ. աճել է 2.2 անգամ՝ հասնելով 188.7 մլն ԱՄՆ դոլարի:


Գծապատկեր 3.4.4 2013-2021թթ. մոլիբդենի խտանյութի արտահանման բաշխումն ըստ երկրների, մլն դոլար



Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա⁸⁴

⁸⁴ <https://comtrade.un.org/data/>

Գծապատկեր 3.4.5 2013-2021թթ. ֆերոմոլիբդենի արտահանման բաշխումն ըստ երկրների, մլն դոլար



Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա⁸⁵

Մյուսիքում տեղակայված երեք ընկերություններից, որոնք զբաղվում են մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտադրությամբ, միայն երկուսն են զբաղվում նշված մետաղատեսակների արտահանմամբ: Ֆերոմոլիբդենի արդյունահանմամբ զբաղվում է միայն «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, որի հիմնական արտահանման ուղղությունը Նիդերլանդներն է: Մոլիբդենի արտահանմամբ զբաղվում են նաև «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն և «Թեղուտ» ՓԲԸ-ն: 2020 և 2021թթ. «Թեղուտ» ՓԲԸ-ի հիմնական արտահանման ուղղությունը հանդիսացել է Շվեյցարիան: Մինչդեռ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ից արտահանվող արտադրանքի առաջնային ուղղությունները 2020թ. եղել են Չինաստանը և Ռուսաստանը, իսկ 2021թ.՝ միայն Չինաստանը:

Աղյուսակ 3.4.3.1 2020թ. մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտադրատեսակի անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար ⁸⁶
Մյուսիքի մարզ	«Թեղուտ» ՓԲԸ	մոլիբդենի խտանյութ	Շվեյցարիա	853 տ	2,419	4,808
	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	մոլիբդենի խտանյութ	Չինաստան, Ռուսաստան	14,509 թմտ	44,374	90,688
	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Ֆերոմոլիբդեն	Նիդերլանդներ, Ռուսաստան, Ուկրաինա	7,250 տ	45,415	92,815
Ընդամենը					92,208	188,311

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ գեկույցի համար

⁸⁵ նույնը

⁸⁶ Ձեկույցի շրջանակներում տարադրամի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված բոլոր փոխարժեքների միջինացմամբ: 2020թ. մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը եղել է 489.31 ՀՀ դրամ:

Աղյուսակ 3.4.3.2 2021թ. մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտադրատեսակի անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար ⁸⁷
Սյունիքի մարզ	«Թեղուտ» ՓԲԸ	մոլիբդենի խտանյութ	Շվեյցարիա	768 տ	5,488	10,908
	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	մոլիբդենի խտանյութ	Չինաստան	8,562 տ	50,566	100,505
	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ֆերոմոլիբդեն	Նիդերլանդներ, Ռուսաստան, Լեհաստան	2,613 տ	90,763	180,400
Ընդամենը					146,817	291,813

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ զեկույցի համար

Աղյուսակ 3.4.4 2020թ. և 2021թ. արտահանված մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի մեջ վճարվող համարվող մետաղների վերջնական պարունակությունը

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Մետաղը	2020		2021	
			Ծավալը	Խտանյութի ծավալը	Ծավալը	Խտանյութի ծավալը
Սյունիքի մարզ	«Թեղուտ» ՓԲԸ	մոլիբդենի խտանյութ	423 չմտ	853 չմտ	375 տ	768 չմտ
	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	մոլիբդենի խտանյութ	6,183 տ	14,449 թմտ	3,784 տ	8,562 թմտ
	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ֆերոմոլիբդեն	4,914 տ	7,250 տ	5,304 տ	7,840 տ

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ զեկույցի համար


Ցինկի խտանյութ

ՄԱԿ-ի Comtrade-ի վիճակագրության համաձայն ⁸⁸՝ Հայաստանից ցինկի խտանյութի արտահանման արժեքը 2020թ. կազմել է 10.4 մլն ԱՄՆ դոլար, ինչը գրեթե կրկնապատկվել է 2021թ.: Վերջին երկու տարիների ընթացքում Բելգիա է արտահանվել Հայաստանից ցինկի արտահանման 100%-ը: Ցինկի մասնաբաժինն ընդհանուր արտահանման մեջ 2020 և 2021թ. համար կազմել է համապատասխանաբար 1.0% և 1.3%:

⁸⁷ Չեկույցի շրջանակներում տարադրամի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված բոլոր փոխարժեքների միջինացմամբ: 2021թ. մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը եղել է 503.12 ՀՀ դրամ:

⁸⁸ <https://comtrade.un.org/data/>

Գծապատկեր 3.4.6 2013-2021թթ. ցինկի խտանյութի արտահանումն ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար



Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա⁸⁹

«Չաարատ Կապան» ՓԲԸ-ն հանդիսանում է Հայաստանում ցինկի խտանյութի միակ արտադրողը: 2019թ. համեմատ արտահանվող ցինկի ծավալը 2020թ. դրությամբ աճել է 10.9%-ով, որը, սակայն, նվազել է 11.0%-ով 2021թ.: Միննույն ժամանակ, արտահանվող արտադրանքի արժեքը 2020թ. նվազել է 20.2%-ով, չնայած արտահանման ծավալների ավելացմանը: Մինչդեռ 2021թ. գրանցվել է արտահանվող ցինկի արժեքի 29.4% աճ, ինչը պայմանավորված է ցինկի գների կտրուկ աճով:

Աղյուսակ 3.4.5.1 2020թ. ցինկի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար ⁹⁰
Սյունիքի մարզ	«Չաարատ Կապան» ՓԲԸ	Բելգիա	13,487	6,326	12,929

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ զեկույցի համար

Աղյուսակ 3.4.5.2 2021թ. ցինկի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար ⁹¹
Սյունիքի մարզ	«Չաարատ Կապան» ՓԲԸ	Բելգիա	11,998	8,183	16,265

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ զեկույցի համար

Ցինկի խտանյութը պարունակում է նաև որոշ քանակությամբ թանկարժեք մետաղներ: Ստորև ամփոփված է արտահանվող ցինկի խտանյութում թանկարժեք մետաղների վերջնական պարունակությունը:

⁸⁹ Նույնը

⁹⁰ Ձեկույցի շրջանակներում տարադրամի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված բոլոր փոխարժեքների միջինացմամբ: 2020թ. մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը եղել է 489.31 ՀՀ դրամ:

⁹¹ Ձեկույցի շրջանակներում տարադրամի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված բոլոր փոխարժեքների միջինացմամբ: 2021թ. մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը եղել է 503.12 ՀՀ դրամ:

Աղյուսակ 3.4.6 2020թ. և 2021թ. արտահանված ցինկի խտանյութի մեջ վճարվող համարվող մետաղների վերջնական պարունակությունը

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Մետաղը	2020		2021	
			Ծավալը	Խտանյութի ծավալը	Ծավալը	Խտանյութի ծավալը
Սյունիքի մարզ	"Չաարատ Կապան" ՓԲԸ	ցինկ	7,822.46 տ	13,487 թմտ	6,478.92 տ	11,998 թմտ
		ոսկի	121.38 կգ		107.98 կգ	
		արծաթ	2,171.4 կգ		2,075.65 կգ	


Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ գեկոյցի համար

Թանկարժեք մետաղների արտադրատեսակների արտահանում

Համաձայն ՄԱԿ-ի Comtrade տվյալների ⁹², 2013-2020թթ. թանկարժեք մետաղների արտադրատեսակների արտահանումը դրսևորել է կայուն աճ՝ գրանցելով 20,1% միջին տարեկան աճ: Սակայն 2020թ. գրանցվել է թանկարժեք մետաղների արտահանման ծավալների անկում: 2020թ., չնայած արտահանվող ոսկու խտանյութի ծավալի 5.9% անկմանը, արտահանման արժեքն աճել է 10.3%-ով՝ պայմանավորված ոսկու գների աճի հետ: Սակայն 2021թ. ոսկու արտահանման ծավալի 31.1% անկումը հանգեցրել է արտահանվող ապրանքի արժեքի 45.8% նվազմանը: Նշված երկու տարիների համար մետաղական արտադրատեսակների արտահանման մեջ արժեքային առումով թանկարժեք մետաղների արտահանումը համապատասխանաբար կազմել է 24.8% և 10.9%:

2020թ. Շվեյցարիային է բաժին ընկել Հայաստանից արտահանվող ոսկու խտանյութի ընդհանուր ծավալի 54%-ը: Սակայն, հարկ է նշել, որ 2021թ. Շվեյցարիա արտահանումներ չեն իրականացվել: 2021թ. դրությամբ Հնդկաստանը դարձել է Հայաստանից ոսկու խտանյութի առաջատար ներմուծողը՝ գրանցելով 94.3% մասնաբաժին, ի տարբերություն 2020թ. գրանցված 29.5% և 2019 թ. գրանցված 0%-ի: 2013-2021թթ. ընթացքում ԱՄԷ-ն և Իտալիան հանդիսացել են թանկարժեք մետաղների արտահանման մյուս գլխավոր ուղղությունները: Ոսկու խտանյութի արտահանման բաշխումը վերլուծված է ստորև գծապատկերում:

Գծապատկեր 3.4.7 2013-2021թթ. անմշակ և կիսամշակ ոսկու և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութի արտահանումն ըստ երկրների, մին ԱՄՆ դոլար



Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա⁹³

⁹² <https://comtrade.un.org/data/>

⁹³ Նույնը

Հայաստանի Հանրապետությունից արտահանվող թանկարժեք մետաղատեսակներից են հանդիսանում ոսկու համաձուլվածքները և ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի հանքաքարերը: Արտահանում իրականացնող երկու ընկերություններն են «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն և «Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ-ն: 2020թ. դրությամբ նշված երկու ընկերություններին է բաժին ընկել արտահանվող արտադրանքի ընդհանուր արժեքի համապատասխանաբար 97.6% և 2.3%, իսկ 2021թ.՝ 97.9% և 2.1%: Ստորև աղյուսակում ներկայացված է ոսկու համաձուլվածքի և ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի:

Աղյուսակ 3.4.7.1 2020թ. ոսկու համաձուլվածքի և ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտադրատեսակի անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար ⁹⁴
Գեղարքունիքի մարզ	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	Շվեյցարական Համադաշնություն	5.4 տ	121,267	247,834
Կոտայքի մարզ	«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	Շվեյցարական Համադաշնություն	4,627 տ	2,812	5,747
Լոռու մարզ	«Ասսաթ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	Չեխիա, Սլովակիա	7.6 կգ	208.01	425.10
Ընդամենը					124,287	254,006

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

Աղյուսակ 3.4.7.2 2021թ. ոսկու համաձուլվածքի և ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտադրատեսակի անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար ⁹⁵
Գեղարքունիքի մարզ	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	Շվեյցարական Համադաշնություն	3.4 տ	59,898	119,053

⁹⁴ Զեկույցի շրջանակներում տարադրամի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված բոլոր փոխարժեքների միջինացմամբ: 2020թ. մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը եղել է 489.31 ՀՀ դրամ:

⁹⁵ Զեկույցի շրջանակներում տարադրամի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված բոլոր փոխարժեքների միջինացմամբ: 2021թ. մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը եղել է 503.12 ՀՀ դրամ:

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտադրատեսակի անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար ⁹⁵
Կոտայքի մարզ	«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	Շվեյցարական Համադաշնություն	2,254 տ	1,284	2,554
Սյունիքի մարզ	«Ղարագույաններ» ՓԲԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	Իրան	20 կգ	0.00	0.00
Ընդամենը					61,183	121,606

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

Աղյուսակ 3.4.8 2020թ. և 2021թ. արտահանված ոսկու համաձուլվածքի և ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի մեջ վճարվող համարվող մետաղների վերջնական պարունակությունը

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Մետաղը	2020		2021	
			Ծավալը	Խտանյութի ծավալը	Ծավալը	Խտանյութի ծավալը
Գեղարքունիքի մարզ	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	ոսկի	4 տ	5.4 տ	2 տ	3.4 տ
		արծաթ	1 տ		1 տ	
Կոտայքի մարզ	«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	ոսկի	136 կգ	4,627 տ	57 կգ	2,254 տ
		արծաթ	144 կգ		66 կգ	
Սյունիքի մարզ	«Ղարագույաններ» ՓԲԸ	պղինձ	-	-	13 գրամ	20 կգ
		կապար	-	-	127 գրամ	
		ցինկ	-	-	168 գրամ	
Լոռու մարզ	«Ասսաթ» ՍՊԸ	ոսկի	7.6 կգ	20 կգ	-	-

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

Տարբեր աղբյուրներից մետաղների արդյունահանման ոլորտի արտահանման տվյալների համադրում

Աղյուսակ 3.4.9 2020թ. և 2021թ. Ընդերքօգտագործող ընկերություններից և ՄԱԿ-ի Comtrade-ից ստացած մետաղների արդյունահանման ոլորտի արտահանման տվյալների համեմատություն

Արտադրատեսակը	2020		2021	
	Արտահանման ընդհանուր արժեքը՝ ըստ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների, մին ԱՄՆ դոլար	Արտահանման ընդհանուր արժեքը՝ ըստ ՄԱԿ Comtrade-ի, մին ԱՄՆ դոլար	Արտահանման ընդհանուր արժեքը՝ ըստ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների, մին ԱՄՆ դոլար	Արտահանման ընդհանուր արժեքը՝ ըստ ՄԱԿ Comtrade-ի, մին ԱՄՆ դոլար
Պղնձի խտանյութ	510	560	698	769
Ցինկի խտանյութ	13	10	16	16
Մոլիբդենի խտանյութ	95	95	111	122
Ֆերոմոլիբդենի խտանյութ	93	86	180	189
Անմշակ և կիսամշակ ոսկի և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութ և հանքաքար	254	247	122	134

Աղբյուրը՝ Ընդերքօգտագործող ընկերություններ և ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրություն⁹⁶

Ընդերքօգտագործող ընկերությունների և ՄԱԿ-ի Comtrade-ի⁹⁷ կողմից հրապարակված 2020 և 2021թթ. Հայաստանից արտահանվող մետաղական արդյունահանման արտադրանքի վերաբերյալ տվյալների համադրումն ամփոփված է վերը նշված աղյուսակում: Նշված աղբյուրների տրամադրած տեղեկատվության միջև նկատելի տարբերություն կա: Պղնձի հանքաքարի և պղնձի խտանյութի ընդհանուր արտահանման տվյալների համադրման դեպքում, տարբերությունը 2020 և 2021թթ. կազմում է մոտ 10%: Ընդհանուր առմամբ ՄԱԿ-ի Comtrade-ի⁹⁸ և ընկերությունների կողմից ներկայացված խտանյութերի արտահանման մակարդակի վերաբերյալ վիճակագրության միջև առկա էր էական տարբերություն, որի աղբյուրներն են և՛ արտահանման հայտարարագրի ժամանակաշրջանը, և՛ փաստացի արտահանման ամսաթվերը և համապատասխան ժամանակահատվածում փոխարժեքների անկայունությունը:

3.4.2 Ներքին իրացում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

Վերջին տարիներին ներքին շուկայում մետաղական հանքաքարերի և խտանյութերի վաճառքը կտրուկ աճել է: 2020թ. այն նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ աճել է մոտ 6.5 անգամ՝ հասնելով 4.9 մլրդ ՀՀ դրամի կամ 10 մլն ԱՄՆ դոլարի⁹⁹: 2021թ. ներքին շուկայում մետաղական հանքաքարերի և խտանյութերի իրացումն ավելի քան կրկնապատկվել է 2020թ. հայտարարված արժեքի համեմատ և հասել 11.4 մլրդ ՀՀ

⁹⁶ <https://comtrade.un.org/data/>

⁹⁷ Նույնը

⁹⁸ Նույնը

⁹⁹ Ձեկույցի շրջանակներում տարադրամի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված բոլոր փոխարժեքների միջինացմամբ: 2020թ. մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը եղել է 489.31 ՀՀ դրամ:

դրամի կամ 22.6 մլն ԱՄՆ դոլարի¹⁰⁰: Պղնձի հանքաքարի և խտանյութի, ինչպես նաև մոլիբդենի խտանյութի իրացումը զբաղեցնում են ներքին շուկայի գերակշիռ մասը: Հարկ է նշել «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» (ՓԲԸ) կողմից 5 թմտ պղնձի խտանյութի ձեռքբերումը: Նշված կազմակերպության ուղղվածությունը գիտահետազոտական է, և նման ծավալով արտադրանքի գնումը հետագա դիտարկման կարիք ունի: Սույն Ձեկույցի շրջանակներում կազմակերպությունը հաշվետու չի համարվում: Առաջարկվում է իրականացնել հետազոտություն՝ պարզելու գործարքի մանրամասները:

Վաճառքների բաշխումն ըստ ընկերությունների, իրացրած մետաղական արտադրանքի ծավալների և դրամային արժեքի ներկայացված է ստորև:

Աղյուսակ 3.4.2.1 2020թ. ներքին շուկայում վաճառք իրականացրած ընկերությունները, իրացրած մետաղական արտադրանքը, ծավալը և դրամային արժեքը

Ընկերություն	Սպրանքի տեսակ	Ծավալի չափման միավոր	Ծավալ	Արժեքավոր մետաղների պարունակությունը	Ընդամենը իրացրած արժեքը, մլն ՀՀ դրամ	Գնորդ կազմակերպություն
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	պղնձ խտանյութ	թմտ	5	պղնձ -1.11 տ, նսկի- 9.7-գրամ, արծաթ - 229.7 գրամ	3	«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» (ՓԲԸ)
«Թեղուտ» ՓԲԸ	մոլիբդենի խտանյութ	չմտ	584	մոլիբդեն 291,461 չմտ	2,241	«ՕԶՖ Պրոդաքշն» ՍՊԸ
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	կգ	45,600	ոսկի – 1,267 գրամ, արծաթ- 1,639 գրամ	21	«Ասասթ» ՍՊԸ
«Լիճքվազ» ՓԲԸ	պղնձ հանքաքարեր խտանյութ	չմտ	44,947	պղնձ – 195 տ, նսկի -82,036 գրամ, արծաթ - 1,186,762 գրամ, ցինկ-30 տոննա	1,916	«Չաարատ Կապան» ՓԲԸ
«Ատ-Մետալս» ՍՊԸ	ոսկի պարունակող հանքաքար	տ	13,200	ոսկի -25,178 գրամ	741	«Չաարատ Կապան» ՓԲԸ
«Ասասթ» ՍՊԸ	ոսկու և արծաթի դրոբե համաձուլվածք	գրամ	300	ոսկի -0 կգ	9	«ՎԱՆ» ՓԲԸ
Ընդամենը					4,931	

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

¹⁰⁰ Ձեկույցի շրջանակներում տարադրամի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված բոլոր փոխարժեքների միջինացմամբ: 2021թ. մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը եղել է 503.12 ՀՀ դրամ:

Աղյուսակ 3.4.2.2 2021թ. ներքին շուկայում վաճառք իրականացրած ընկերությունները, իրացրած մետաղական արտադրանքը, ծավալը և դրամային արժեքը

Ընկերություն	Ապրանքի տեսակ	Ծավալի չափման միավոր	Ծավալ	Արժեքավոր մետաղների պարունակությունը	Ընդամենը իրացման արժեքը, մլն ՀՀ դրամ	Գնորդ կազմակերպություն
«Թեղուտ» ՓԲԸ	մոլիբդենի խտանյութ	չմտ	145	մոլիբդեն- 72.6 չմթ	372	«ԱՖԶ Պրոդաքշն» ՍՊԸ
			183	մոլիբդեն- 88.1 չմթ	470	«Մեթալ Լայն» ՍՊԸ
«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	ունցիա	993	ոսկի- 973 գրամ արծաթ -1,259 գրամ	686	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ
«Լիճքվազ» ՓԲԸ	պղինձ հանքաքարեր խտանյութ	չմտ	7,159	պղինձ- 504 տոննա, ոսկի- 294,250 գրամ, արծաթ- 3,262,639 գրամ	9,138	«Չասարատ Կապան» ՓԲԸ
«Ասսայթ» ՍՊԸ	ոչ հայտնի մետաղների հանքաքար	տ	33,447	ոսկի- 350 կգ	706	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ
					1	«Ասսայթ-Ս» ՍՊԸ
Ընդամենը					11,374	

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույց

4

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՑԱԾ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏԻՑ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ

4. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՑԱԾ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՑ (պահանջ 4)

4.1 Մետաղական հանքարդյունահանող ընկերություններից մուտքերը պետական բյուջե


Ի կատարումն ԱՃԹՆ 4-րդ ստանդարտի պահանջի, ԲՇԽ-ի որոշման¹⁰¹ համաձայն՝ ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական և համայնքային բյուջեներ վճարվող հարկերը և վճարումները պետք է բացահայտվեն ընդերքօգտագործողների և պետական մարմինների կողմից առանց որևէ էականության շեմի:

Շահութահարկը, ակցիզային և բնապահպանական հարկերը, ավելացված արժեքի հարկը, մաքսատուրքերը, լոսյալթիները և բնօգտագործման վճարներն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից կատարվող պարտադիր վճարումների մի մասն են:

Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2020թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները նախորդ տարվա նկատմամբ նվազել են 5.3%-ով՝ կազմելով 80.5 մլրդ ՀՀ դրամ: 2021թ. -ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները նախորդ տարվա նկատմամբ աճել են 81.2%-ով՝ կազմելով 145.88 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր եկամուտների 8.7%-ը:

2020-ից 2021թթ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից կատարված հարկերի և վճարումների տոկոսային արժեքի 3.5% աճով պայմանավորված դրամական ընդհանուր արժեքը կազմել է 65.39 մլրդ ՀՀ դրամ:

Գծապատկեր 4.1.1 2020 և 2021թթ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները




Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից¹⁰²

¹⁰¹ <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

¹⁰² https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/

Ստորև ներկայացված է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից 2020-2021թթ. պետական բյուջե վճարված հարկերը և վճարներն՝ ըստ հարկատեսակների:

Գծապատկեր 4.1.2 2020 և 2021թթ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները սլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ՊԵԿ կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

2020թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեջ ամենամեծ մասնաբաժինը կազմում են ռոյալթին, եկամտային հարկը և շահութահարկը: 2021թ. ռոյալթիի հարկի վճարումների աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 46.32%, այնուամենայնիվ այն կազմել է վճարված ընդհանուր հարկերի ամենաբարձր մասնաբաժինը ինչպես 2020-ին, այնպես էլ 2021-ին:

Ընկերությունների կողմից պետական բյուջե կատարված վճարումների ծավալով երկրորդ տեղը բաժին է ընկել շահութահարկին՝ 2020թ. բյուջետային եկամուտների ընդհանուր ծավալի 20.83% և 2021թ.՝ 25.69% մասնաբաժիններով:

Երրորդ տեղում եկամտային հարկն է՝ 2020թ. կատարված ընդհանուր վճարումների 20.0%-ով: Այնինչ 2021թ. ավելացել է արտահանման պետական տուրքերի վճարը, որին բաժին է ընկել վճարումների ընդհանուր ծավալի 15.03%-ը՝ զբաղեցնելով երրորդ տեղը վճարումների չափով, որին հաջորդում է եկամտահարկը՝ ընդհանուրի մեջ 11.40% մասնաբաժնով: Մնացած հարկատեսակների և վճարների մասնաբաժինները երկու տարում չեն գերազանցել 3%-ը:

Աղյուսակ 4.1.1 2020 և 2021թթ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները

Հարկի կամ վճարի տեսակը	2020		2021	
	Ծավալը, մլն ՀՀ դրամ	Մասնաբաժինը պետական բյուջեի եկամուտներում	Ծավալը, մլն ՀՀ դրամ	Մասնաբաժինը պետական բյուջեի եկամուտներում
Ռոյալթի	45,122	2.89%	66,025	3.92%
Շահութահարկ	16,765	1.07%	37,473	2.23%
Պետական արտահանման տուրքեր	-	0.00%	21,923	1.30%
Եկամտային հարկ	16,116	1.03%	16,628	0.99%
Ավելացված արժեքի հարկ	410	0.03%	1,793	0.11%
Մաքսատուրք, մաքսավճար, մաքսային մարմինների կողմից գանձվող ճանապարհային հարկ (վճար)	1,748	0.11%	1,229	0.07%
Բնապահպանական հարկեր (վճարներ)՝ ըստ հաշվարկ-հաշվետվությունների	48	0.00%	537	0.03%
Տուրքեր	190	0.01%	190	0.01%
Բնօգտագործման վճարներ	62	0.00%	57	0.00%
ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական հարկեր՝ ըստ ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերի	19	0.00%	18	0.00%
ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական հարկեր՝ ըստ ներկայացված մաքսային հայտարարագրերի	4	0.00%	6	0.00%
Ընդամենն ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները	80,486	5.16%	145,879	8.66%
Ընդամենը պետական բյուջեի եկամուտները	1,560,655	100%	1,683,831	100%

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ՊԵԿ և Շրջակա միջավայրի նախարարության կողմից ԱՃԹՆ գեկոյցի համար


2020 և 2021թթ. պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումներով առաջատար ընկերությունն է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ: 2020 և 2021թթ. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին բաժին է ընկել ընդերքօգտագործող ընկերություններից հաշվարկված վճարումների, համապատասխանաբար, 51.87% և 68.83%-ը: 2020թ. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ հաշվարկված վճարումների բաժինը պետական բյուջեի եկամուտներում կազմում է 2.68% կամ 41.8 մլրդ ՀՀ դրամ: Նույն կերպ, 2021թ. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ հաշվարկված վճարումների բաժինը պետական բյուջեի եկամուտներում կազմում է 5.96% կամ 100.4 մլրդ ՀՀ դրամ:

2020 թ. պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումների հանրագումարով երկրորդն է «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն, որին բաժին է ընկնում հանքարդյունաբերական ընկերությունների հաշվարկված վճարումների 25.57%-ը: 2020թ. «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ հաշվարկված վճարումների բաժինը պետական բյուջեի եկամուտներում կազմում է 1.32% կամ 20.58 մլրդ ՀՀ դրամ: Պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումների հանրագումարով «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ին հաջորդում է «Թեդուտ» ՓԲԸ-ն՝ 0.49% մասնաբաժնով, որին բաժին է ընկնում հանքարդյունաբերական ընկերությունների վճարումների 9.53%-ը:

Արդյունքները մի փոքր տարբեր էին 2021թ. համար: 2021 թ. «Թեդուտ» ՓԲԸ և «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ վճարումները գերազանցել են «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի կատարած վճարումները: «Թեդուտ» ՓԲԸ-ին բաժին է ընկնում հանքարդյունաբերական ընկերություններից բոլոր հաշվարկված վճարումների 9.96%-ը: Հաշվարկված վճարումների բաժինը պետական բյուջեի եկամուտներում կազմում է 0.86% կամ 14.53 մլրդ ՀՀ դրամ: «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին բաժին է ընկել հանքարդյունաբերական ընկերություններից բոլոր հաշվարկված վճարումների 7.09%-ը (10.34 մլրդ ՀՀ դրամ)՝ ի տարբերություն 2020թ. ընդամենը 2.94%-ի (2.37 մլրդ ՀՀ դրամ):

Չնայած հանքարդյունաբերական ընկերությունների կողմից կատարված հարկային վճարումների հարաբերական փոփոխություններին, առաջատար դիրքերը պահպանել են ոլորտի խոշորագույն ընկերությունները, ինչն արտացոլում է ստորև ներկայացված գծապատկերը, որտեղ ամփոփված են հանքարդյունաբերական ընկերությունների կողմից 2020 և 2021թթ. պետական բյուջե կատարած վճարումները:

Գծապատկեր 4.1.3 2020թ. և 2021թ. ընդերքօգտագործող ընկերությունների պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, մլն ՀՀ դրամ




Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ՊԵԿ կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

4.2 Մետաղական հանքարդյունահանող ընկերություններից մուտքերը համայնքային բյուջեներ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տարեկան տեղեկատվություն է տրամադրում համայնքների բյուջե կատարվող վճարումների և հարկերի ընդհանուր գումարի վերաբերյալ: 2020թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերը և վճարները կազմել են համայնքային բյուջեների ընդհանուր եկամուտների 0.74%-ը՝ կազմելով 1.13 մլրդ ՀՀ դրամ: 2021թ. վերոնշյալ վճարները նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ աճել են 90.76 մլն ՀՀ դրամով: 2021թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերը և վճարները կազմել են 1.23 մլրդ ՀՀ դրամ կամ համայնքային բյուջեների ընդհանուր եկամուտների 0.71%-ը:

Գծապատկեր 4.2.1 2020թ. և 2021թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները




Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ հաշվետվության համար

Վարձակալության, փոխադրամիջոցների գույքահարկի¹⁰³, և անշարժ գույքի հարկի վճարներն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերի և վճարների հիմնական տարատեսակներն են: 2020թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերի և վճարների 91.03%-ը կազմում են վարձակալական վճարները, որոնց հաջորդում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարները՝ 5.86% մասնաբաժնով, և անշարժ գույքի հարկերը՝ 3.11% մասնաբաժնով: Մինևույն ժամանակ 2021թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերի և վճարների հիմնական մասը՝ 91.03%-ը կազմում են վարձակալության վճարները, որոնց հաջորդում են անշարժ գույքի հարկը և փոխադրամիջոցների գույքահարկը համապատասխանաբար 5.87% և 3.02% մասնաբաժիններով:

Ստորև ներկայացված է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերի և վճարների կառուցվածքն ըստ երեք հիմնական դասակարգման:

¹⁰³ 2021թ.-ից շինությունների գույքահարկի և հողի հարկի փոխարեն սահմանվել է անշարժ գույքի հարկը (ՀՀ հարկային օրենսգրքի 11-րդ բաժին), իսկ փոխադրամիջոցների համար հաշվարկվող գույքահարկի փոխարեն՝ փոխադրամիջոցների գույքահարկը (ՀՀ հարկային օրենսգրքի 12-րդ բաժին)


Գծապատկեր 4.2.2 2020 և 2021թթ. համայնքների եկամուտներն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերից և վճարներից ըստ հոսքերի կառուցվածքի, մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ հաշվետվության համար


Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեներ վճարված վարձակալական վճարների մեծ մասը կազմել են հողամասերի վարձակալության վճարները՝ 2020 և 2021թթ. կազմելով 95.3% և 99.5%: Վարձակալական վճարներում մնացած մասը բաժին է ընկնում անշարժ գույքի վարձակալության վճարներին՝ 2020 և 2021թթ.-ների համար համապատասխանաբար 4.7% և 0.5% մասնաբաժնով: 2020 և 2021թթ. ընդերքօգտագործող ընկերություններից ստացած եկամուտների ընդհանուր պատկերն, ըստ համայնքների դասակարգման, ներկայացված է ստորև:

Գծապատկեր 4.2.3.1 2020թ. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հայտարարագրած հարկերից և վճարումներից համայնքների բյուջեների եկամուտները դասակարգված ըստ առաջատար համայնքների, մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ հաշվետվության համար

Գծապատկեր 4.2.3.2 2021թ. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հայտարարագրած հարկերից և վճարումներից համայնքների բյուջեների եկամուտները դասակարգված ըստ առաջատար համայնքների, մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ հաշվետվության համար

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեներ վճարումների մասնաբաժինը սույն բյուջեներում տարբերվում է և կախված է համայնքի բյուջեի և ընկերություն վճարումների ծավալներից: 2020թ. ընկերությունների համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված վճարումները խոշոր տոկոսային մասնաբաժին են կազմել Զառիթափի, Ջերմուկի, Գորայքի և Մուլիքցյուղի համայնքների բյուջեներում: Զառիթափը և Ջերմուկը Վայոց Ձորի մարզի մաս են կազմում՝ ընդերքօգտագործող ընկերությունների կողմից 2020թ. վճարումներում համապատասխանաբար 40.12% և 33.56% բաժնեմասերով: Սյունիքի մարզում գտնվող Գորայք համայնքն ունեցել է 37.55% բաժնեմաս: Ի վերջո, Արագածոտնի մարզի Մուլիքցյուղ համայնքին բաժին է ընկել 20.66%-ը: 2021թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից կատարված վճարումների մեծ մասը բաժին է ընկել երեք համայնքների՝ Գորայք, Վայք և Ջերմուկ բյուջեներին, համապատասխանաբար 53.43%, 36.18% և 26.19% բաժնեմասերով:

Ընդերքօգտագործող ընկերությունների կատարած վճարումներն ունեն զգալի դեր սույն համայնքների զարգացման ծրագրերի իրականացման հարցում:

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս տարեկան եկամուտների և ընդերքօգտագործող ընկերությունների վճարումների բաշխումը՝ ըստ համայնքների:

Աղյուսակ 4.2.1.1 2020թ. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված վճարումների մասնաբաժինը համայնքների բյուջեներում, հազ. ՀՀ դրամ

Համայնք	Համայնքի իրական տարեկան եկամուտները	Ընդերքօգտագործող ընկերության հաշվարկված վճարումները	Բյուջեի %-ը
Ախթալա	475,198	11,670	2.46%
Առինջ	345,679	8,132	2.35%
Արարատ	669,645	2,909	0.43%
Արջուտ	43,852	1,212	2.76%
Գեղամասար	444,619	68,125	15.32%
Գորայք	351,609	132,025	37.55%
Երևան	73,119,819	8,821	0.01%
Զառիթափ	348,282	139,737	40.12%
Լոռի Բերդ	266,791	48	0.02%
Լուսակունք	60,583	10	0.02%
Կապան	3,001,835	241,723	8.05%
Մելիքցյուղ	68,365	14,126	20.66%
Մեղրաձոր	202,452	25,815	12.75%
Մեղրի	1,006,299	58,198	5.78%
Շնող	380,588	45,666	12.00%
Ջերմուկ	660,133	221,529	33.56%
Միսիան	1,458,920	40	0.00%
Սպիտակ	570,841	422	0.07%
Ստեփանավան	539,697	5,141	0.95%
Տորֆավան	14,352	108	0.76%
Քաջարան	1,258,824	138,007	10.96%
Օձուն	308,435	2,509	0.81%
Ընդամենը	85,596,818	1,125,973	1.32%

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԳԵՆ կողմից ԱՃԹՆ հաշվետվության համար

Աղյուսակ 4.2.1.2 2021թ. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված վճարումների մասնաբաժինը համայնքների բյուջեներում, հազ. ՀՀ դրամ


Համայնք	Համայնքի իրական տարեկան եկամուտները	Ընդերքօգտագործող ընկերության հաշվարկված վճարումները	Բյուջեի %-ը
Ախթալա	536,324	11,361	2.12%
Ապարան	972,249	30	0.00%
Արարատ	740,410	62,266	8.41%
Գորայք	209,084	111,717	53.43%
Երևան	80,769,471	15,214	0.02%
Լոռի Բերդ	290,204	112	0.04%
Ծաղկաձոր	377,339	25,496	6.76%
Կապան	4,174,187	383,067	9.18%
Մասիս	799,418	80	0.01%
Մեղրի	908,217	68,115	7.50%
Շնող	563,944	47,962	8.50%
Ջերմուկ	688,571	180,369	26.19%
Մխիթան	1,791,455	18	0.00%
Ստեփանավան	700,305	2,712	0.39%
Վայք	326,764	118,239	36.18%
Վարդենիս	538,062	68,078	12.65%
Փամբակ	11,677	1,812	15.52%
Քաջարան	1,045,092	126,489	12.10%
Օձուն	380,409	2,599	0.68%
Ընդամենը	95,823,184	1,225,734	1.28%

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ հաշվետվության համար

Երկու տարիներին էլ համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված վճարումներով առաջատար ընկերություն է հանդիսանում «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն, որին բաժին է ընկնում 2020թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված վճարումների 44.0%-ը, 2021թ.՝ 33.6%-ը: «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն երկրորդ տեղում է՝ 2020 և 2021թթ. ընկերության հաշվարկված վճարումների բաժինն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված վճարումներում կազմել է համապատասխանաբար 23.1% և 31.9%:


Ստորև բերված գծապատկերներում ներկայացված են 2020 և 2021 թթ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված բոլոր վճարումները:

Գծապատկեր 4.2.4.1 2020թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված բոլոր վճարումները, մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ հաշվետվության համար

Գծապատկեր 4.2.4.2 2021թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված բոլոր վճարումները, մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ հաշվետվության համար

4.3 Եկամուտների բաշխումը (պահանջ 5)

ԱՃԹՆ խրախուսում է եկամուտների կառավարման և ծախսերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների բացահայտումը, այդ թվում հատուկ ծրագրերի կամ աշխարհագրական շրջանների համար նախատեսված եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի¹⁰⁴ համաձայն բնապահպանական հարկերից համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար: Շահառու համայնքների ցանկը և բնապահպանական հարկերից նրանց վարչական և ֆոնդային բյուջեներ մասհանվող գումարների չափերը յուրաքանչյուր տարվա համար հաստատվում են տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով, իսկ մասհանումներն առանձին տողով արտացոլվում են այն համայնքների բյուջեներում:

Ընկերություններից յուրաքանչյուրի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների միջև բնապահպանական հարկի բաշխման համամասնությունների հաշվարկի սկզբունքը մանրամասն ներկայացված է 2018թ. զեկույցում:

Ազդակիր համայնքներին բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաների տրամադրման գործընթացի նկարագրություն:

Ազդակիր համայնքներին բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաների տրամադրման գործընթացի շրջանակում լիազոր մարմինների կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները և դրանց կատարման ժամկետները սահմանվում են իրականացվելիք տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշման (ընդունվում են տարեկան) հավելվածում: Գործընթացի մանրամասն նկարագրությունը ներկայացված է 2018թ. զեկույցում:

Համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՀ

¹⁰⁴ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143046>

օրենքի¹⁰⁵ յուրաքանչյուր համայնքին բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար մասհանումների չափերը հաշվարկվում են համապատասխան ընկերությունների կողմից առաջիկա բյուջետային տարվան նախորդող երկրորդ, երրորդ և չորրորդ տարիների արդյունքներով պետական բյուջե փաստացի վճարված (2018թ. հունվարի 1-ից սկսած՝ միասնական հաշվից բնապահպանական հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին հաշվեգրված) բնապահպանական հարկի հանրագումարից՝ պակասեցնելով այն բյուջետային տարվան նախորդող առաջին երկու տարիների կտրվածքով համապատասխան համայնքներին կատարված մասհանումների չափով:

Համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի Հոդված 3-ի՝ բնապահպանական ծրագրի նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, տվյալ մարզի կամ համայնքի զարգացման (սոցիալ-տնտեսական զարգացման) կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության հաստատված փաստաթղթերի հիման վրա:

Համաձայն «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման¹⁰⁶՝ ծրագիրը մշակվում է նախապես հաստատված տեխնիկական առաջադրանքի հիման վրա, որը ներառում է կառուցվածքային նշված ենթաբաժինները՝

1. ծրագրի նպատակը,
2. ծրագրի իրավական հիմքերը,
3. պետական մարմնի լիազորությունները ծրագրի իրականացման հարցում,
4. ծրագրի շահառուները և մատուցվող ծառայությունները,
5. ծրագրի խնդիրները և դրանց կապը ծրագրի նպատակի հետ,
6. ծրագրի կառուցվածքը (միջոցառումները),
7. ծրագրի իրականացման եղանակը (միջոցները և իրականացնող կազմակերպությունների շրջանակը),
8. ծրագրի կատարողական ցուցանիշները (ծավալային ցուցանիշները բնափրեղեն ծավալներով՝ ըստ առանձին միջոցառումների կամ ենթածրագրերի)՝
 - ա) վերջնական արդյունքը,
 - բ) ուղղակի արդյունքները.
9. ծրագրի իրականացման նկարագրությունը՝
 - ա) ծրագրի ներկա վիճակի նկարագրությունը,
 - բ) ծրագրի վերջնական արդյունքների պլանավորումը/կանխատեսումն՝ ըստ իրականացման փուլերի (ժամանակահատվածների):

Նույն որոշման համաձայն՝ ծրագրի ֆինանսական արժեքը գնահատվում է ծրագրի նախահաշվային արժեքի հաշվարկման միջոցով: Նախահաշվային ծախսերը հաշվարկվում են ՀՀ կառավարության կողմից հաստատված նորմատիվների հիման վրա, իսկ ՀՀ կառավարության կողմից հաստատված նորմատիվների բացակայության դեպքերում ծրագրերի նախահաշվային արժեքը հաշվարկվում է տվյալ տարվա բյուջետային ծախսերի հաշվարկման համար ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների շրջանակներում

¹⁰⁵ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին՝ ՀՀ օրենք՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143032>

¹⁰⁶ «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=88963>

ուղորտային հայտերը կազմելու և դրանք ներկայացնելու մեթոդական ցուցումներին համապատասխան:

Թեմատիկ բնույթի բնապահպանական ծրագրերի գծով ծախսերը հաշվարկվում են համապատասխան բանաձևով, որը հաշվի է առնում և գնահատում համապատասխան մասնագետների աշխատավարձի դրույքը, վերջիններիս աշխատանքի աշխատատարությունը և կիրառում որոշակի գործակիցներ՝ նյութածախսի, ծառայությունների ծախսի, վերադիր ծախսերի և շահութաբերության մակարդակի գծով, ինչպես նաև հաշվի է առնվում ՀՀ օրենքով սահմանված հարկերը՝ հաշվարկված նույն օրենքով սահմանված կարգով:

Աղյուսակ 4.3.1 «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված հանքարդյունահանող ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունները, 2021թ.

Ընկերությունների անվանումը	Համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունը (%-ով ընդհանուրի նկատմամբ)	Ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների անվանումը
Ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար բնապահպանական հարկերի գծով		
Լոռու մարզ		
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	65%	Ախթալա
	7%	Շնող
Սյունիքի մարզ		
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	60%	Քաջարան
	40%	Կապան
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	100%	Մեղրի
«Չաարատ Կապան» ՓԲԸ	100%	Կապան
Գեղարքունիքի մարզ		
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	100%	Գեղամասար
Տավուշի մարզ		
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	19%	Այրում
	2%	Կողբ
	7%	Նոյեմբերյան
Մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկերի գծով		
Լոռու մարզ		
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	100%	Ախթալա
Սյունիքի մարզ		
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	100%	Քաջարան
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	100%	Մեղրի

Ընկերությունների անվանումը	Համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունը (%-ով ընդհանուրի նկատմամբ)	Ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների անվանումը
«Չաարատ Կապան» ՓԲԸ	100%	Կապան
Արարատի մարզ		
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	15%	Արարատ
Գեղարքունիքի մարզ		
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	85%	Գեղամասար
Ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրման կամ պահման համար բնապահպանական հարկերի գծով		
Լոռու մարզ		
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	100%	Ախթալա
Սյունիքի մարզ		
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	30%	Քաջարան
	70%	Կապան
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	100%	Մեղրի
«Չաարատ Կապան» ՓԲԸ	100%	Կապան
Արարատի մարզ		
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	100%	Արարատ

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՇՄՆ կողմից՝ ԱՃԹՆ գեկույցի պատրաստման շրջանակներում

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն 2021թ. համայնքներին տրամադրվել են սուբվենցիաներ 120,178 հազ. ՀՀ դրամի չափով՝ բնապահպանական ծրագրերի իրականացման համար: Հատկացված գումարի 95.16%-ը իրացվել է հաշվետու տարվա ընթացքում¹⁰⁷: Պետությունը պլանավորած և փաստացի հատկացված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև աղյուսակում:

Աղյուսակ 4.3.2 «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքների բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին տրամադրվող սուբվենցիաներ¹⁰⁸՝ ըստ համայնքների բաշխման վերաբերյալ, 2021թ. (հազ. ՀՀ դրամ)

Համայնք	Պետությունը պլանավորած	Փաստացի տրամադրած	Վատարման % պլանի նկատմամբ
ՀՀ Լոռու մարզ	80,371	79,584	99.02%
Օձուն համայնք	76,523	76,523	100.00%

¹⁰⁷ Ըստ ՏԿԵՆ-ի կողմից տրամադրած տեղեկատվության, 2020թ. բնապահպանական ծրագրեր չեն իրականացվել, քանի որ ընկերությունների կողմից բոլոր վճարումները կատարվել են միասնական գանձապետական հաշվին: Ծրագրերի ներկայացումն ու իրականացումը հնարավոր է դարձել 2021թ. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի ընդունումից հետո: Ըստ նշված օրենքի «պետական բյուջե փաստացի վճարված» արտահայտությունը փոխարինվել է «միասնական հարկային հաշվարկներով հաշվարկված» արտահայտությամբ: Օրենքը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143032>

¹⁰⁸ https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2021_t_tarekan_

Համայնք	Պետբյուջեով պլանավորած	Փաստացի տրամադրած	Կատարման % պլանի նկատմամբ
<i>Օձուն համայնքի շրջակա միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր</i>	76,523	76,523	100.00%
Ախթալա համայնք	3,849	3,062	79.56%
<i>Ախթալա համայնքի շրջակա միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր</i>	3,849	3,062	79.56%
ՀՀ Սյունիքի մարզ	39,807	34,781	87.37%
Քաջարան համայնք	2,733	1,733	63.41%
<i>Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր</i>	2,733	1,733	63.41%
Մեղրի համայնք	51	-	0.00%
<i>Մեղրի համայնքի շրջակա միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր</i>	51	-	0.00%
Կապան համայնք	37,023	33,048	89.26%
<i>Կապան համայնքի շրջակա միջավայրի պահպանման ծրագիր</i>	37,023	33,048	89.26%
Ընդամենը	120,178	114,365	95.16%

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը վերցված է ՀՀ Պետբյուջեի 2021թ. հաշվետվությունից

Ըստ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի¹⁰⁹, ծրագիրը հրապարակում է համայնքի ղեկավարը: Հրապարակման հստակ ձևերը, սահմանվել են 2020թ. մայիսի 27-ի օրենսդրական բարեփոխումների արդյունքում, որոնց համաձայն ծրագրերը յուրաքանչյուր տարի հրապարակվում են համայնքի ղեկավարի կողմից համայնքապետարանի կայքում և (կամ) համապատասխան մարզպետարանի կայքում՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ¹¹⁰:

Ծրագրի նախագծային փաստաթղթերի բովանդակության, հաստատման կարգի, բնապահպանական ծրագրեր իրականացնող պետական մարմնի կողմից հասարակության իրազեկման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է 2018թ. զեկույցում:

Աղյուսակ 4.3.3 «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքների բնապահպանական ծրագրերի հրապարակումների հղումները, 2021թ.

Համայնք	Ծրագիր	Հղում
ՀՀ Լոռու մարզ		
Օձուն համայնք	<i>Օձուն համայնքի շրջակա միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր</i>	http://www.odzun.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&a=v&g=2d5d3d99-a934-4353-b8c5-3cf9a747ae89
Ախթալա համայնք	<i>Ախթալա համայնքի շրջակա միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր</i>	https://www.alaverdi.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&a=v&g=e81141f1-ac25-4000-b54c-a1899c898f0f

¹⁰⁹ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143046>

¹¹⁰ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք թիվ ՀՕ-278-Ն <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143032>:

Համայնք	Ծրագիր	Հղում
ՀՀ Սյունիքի մարզ		
Քաջարան համայնք	<i>Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր</i>	http://www.kajaran.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&a=v&g=8bc3a293-ff60-42d0-a652-602c8513cf5d
Մեղրի համայնք	<i>Մեղրի համայնքի շրջակա միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր</i>	https://meghri.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&a=v&g=205127e2-7ef7-4ca4-9e9b-77b0ce17bcf2
Կապան համայնք	<i>Կապան համայնքի շրջակա միջավայրի պահպանման ծրագիր</i>	https://kapan.am/upload/DocFlow/Projects/We2071512322651820_2021_KAPAN.pdf

5

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ


5. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը ՀՀ տնտեսության մեջ

Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտը հանդիսանում է Հայաստանի առաջատար ճյուղերից մեկը: Տվյալ ոլորտին է բաժին ընկնում երկրից իրականացվող արտահանումների գերակշռող մասը:

Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2019թ. գրանցված 3.25%-ից 2020թ. աճել է մինչև 3.87%, իսկ 2021թ. մինչև 5.54%: 2020թ. Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի համախառն ավելացված արժեքը կազմել է 239.21 մլրդ ՀՀ դրամ: 2021թ. հանքարդյունաբերության ոլորտի համախառն ավելացված արժեքի նումինալ աճը գերազանցում է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը 61.68%-ով: Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտը էական կշիռ ունի ՀՀ տնտեսության մեջ և 2016-2021թթ. ընթացքում ոլորտի միջին մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 3.57%:

Գծապատկեր 5.1.1 Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի համախառն ավելացված արժեքը և դրա մասնաբաժինը ՀՆԱ-ում




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ազգային հաշիվների վիճակագրություն¹¹¹

2016-2021թթ. (Գծապատկեր 5.1.2), հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի համախառն ավելացված արժեքն աստիճանաբար աճել է՝ գրանցելով 24.21% միջին տարեկան աճ: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում Հայաստանի ընդհանուր ՀՆԱ-ն աճել է ավելի դանդաղ՝ գրանցելով 6.62% միջին տարեկան աճ: Այսպիսով, ի տարբերություն այլ ոլորտների հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտը նպաստում է ՀՆԱ-ի կայուն աճին:

¹¹¹2014-2015թթ՝ 17-1-SNS.indd (armstat.am)
 2016-2017թթ՝ armenia_2018_6.pdf (armstat.am)
 2017-2020թթ՝ 99526988.pdf (armstat.am)
 2020-2021թթ՝ https://armstat.am/file/article/sv_03_22a_112.pdf

Գծապատկեր 5.1.2 Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի տարեկան դինամիկան՝ համեմատած Հայաստանի ՀՆԱ-ի դինամիկայի հետ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԳ ազգային հաշիվների վիճակագրություն¹¹²

Չնայած նրան, որ Հայաստանի ՀՆԱ-ն նախորդ տարվա համեմատ 2020թ. դրությամբ նվազել է 5.52%-ով (361.42 մլրդ ՀՀ դրամ), հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտը շարունակական աճ է գրանցել: 2020թ.ի դրությամբ ներկայացված 20 տնտեսական ոլորտներից (Գծապատկեր 5.1.3) համախառն ավելացված արժեքի անկում է նկատվել դրանցից 13-ում, այդ թվում խոշորագույն ոլորտներում որոնք են՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և առևտուրը: Միևնույն ժամանակ, հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտը և մնացած 6 տնտեսական ոլորտներն արձանագրել են համախառն ավելացված արժեքի աճ: Ոլորտի բացարձակ արժեքն աճել է 26.34 մլրդ ՀՀ դրամով՝ այլ ճյուղերի ավելացված արժեքի աճին նպաստելով 10.9%-ով՝ ի տարբերություն մնացած ճյուղերի կողմից գրանցված 453.45 մլրդ ՀՀ դրամի անկման:

2021թ. դրությամբ Հայաստանի ՀՆԱ-ն աճել է 801.06 մլրդ ՀՀ դրամով, համապատասխանաբար հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի համախառն ավելացված արժեքն աճել է 147.55 մլրդ ՀՀ դրամով: Ոլորտի ավելացված արժեքը նախորդ ժամանակահատվածի համեմատ գրանցել է 61.68% աճ, մինչդեռ ոլորտի մասնաբաժինն ընդհանուր ՀՆԱ-ում կազմել է 5.54%:

Այսպիսով՝ հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտն՝ ընդհանուր ՀՆԱ-ում ներկայացված 20 ոլորտների թվում, 2019 և 2020թթ. ընթացքում տասնամեկերորդն է եղել: 2020թ. դրությամբ համեմատած տնտեսության երեք խոշորագույն ճյուղերի, որոնք են արտադրությունը, գյուղատնտեսությունը և առևտուրը՝ հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտը մոտավորապես երեք անգամ ավելի քիչ համախառն ավելացված արժեք է ստեղծել: Ոլորտի մասնաբաժինը գրեթե նույնն է, ինչ տեղեկատվական և կապի ոլորտի և էլեկտրաէներգիայի, գազի, գույրշու և օդորակման ոլորտների մասնաբաժինը:


Հայաստանի տնտեսության ներկայացված ճյուղերը 2021թ. դրությամբ մնացել են անփոփոխ, մինչդեռ հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտը ՀՆԱ-ում իր մասնաբաժնով զբաղեցրել է 8-րդ տեղը: Ոլորտը գերազանցել է պետական կառավարման և պաշտպանության, պարտադիր սոցիալական ապահովության, արվեստի և ժամանցի, հանգստի և տեղեկատվության և հաղորդակցության ոլորտների կողմից գրանցված համապատասխան ցուցանիշները: Նախորդ տարվա համեմատ 2021թ.

¹¹²2017-2022թթ՝ 99526988.pdf (armstat.am)
2020-2021թթ՝ https://armstat.am/file/article/sv_03_22a_112.pdf

ավելացված արժեքի ընդհանուր աճը կազմել է 687.99 մլրդ ՀՀ դրամ, ինչը իր հերթին պայմանավորված է բոլոր ոլորտներում արժեքի ավելացմամբ, բացառությամբ ֆինանսական և ապահովագրական, արվեստի, ժամանցի և հանգստի, ինչպես նաև սպասարկման այլ ոլորտների:

2020 և 2021թթ. դրությամբ բոլոր ոլորտներում գրանցված համախառն ավելացված արժեքը, համապատասխան ժամանակահատվածների համար ընդհանուր ՀՆԱ-ում ոլորտի զբաղեցրած բաժնեմասի վերլուծության հետ մեկտեղ, ներկայացված է ստորև գծապատկերում:

Գծապատկեր 5.1.3 2020-2021թթ. դրությամբ Հայաստանի տնտեսության մյուս ոլորտների համեմատ հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում




Աղբյուրը՝ ՀՀ ՎԳ ազգային հաշիվների վիճակագրություն¹¹³

Ստորև գծապատկերում և աղյուսակում (Գծապատկեր 5.1.4., Աղյուսակ 5.1.1) ներկայացված է ՀՆԱ-ում հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի մասնաբաժնի դինամիկան՝ Հայաստանի տնտեսության հինգ խոշորագույն ոլորտների համեմատ: Նշված 5 ոլորտների համեմատ 2017-2021թթ. ընթացքում հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտն ավելի արագ աճի տեմպ է գրանցել՝ մեծացնելով իր կշիռը տնտեսության մեջ: 2017-2021թթ. ընթացքում, տնտեսության խոշորագույն ճյուղ է հանդիսացել մշակող արդյունաբերության ոլորտը,

¹¹³https://armstat.am/file/article/sv_03_22a_112.pdf

որին հաջորդել է գյուղատնտեսություն, անտառտնտեսություն և ձկնորսություն ոլորտը: Նշված երկու ոլորտների տարեկան համախառն աճը 2017-2021թթ. ընթացքում համապատասխանաբար կազմել է 7.9% և -0.9%: Հարկ է նշել, որ հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտում տարեկան համախառն աճի տեմպը կազմել է 22.74%:

Գծապատկեր 5.1.4 Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ 2021թ. դրությամբ 5 խոշորագույն տնտեսական ոլորտների հետ համեմատ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ազգային հաշիվների վիճակագրություն¹¹⁴

Աղյուսակ 5.1.1 2021թ. Դրությամբ 5 խոշորագույն արդյունաբերությունների ավելացված արժեքը և հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում

Տնտեսական գործունեության տեսակ	Ցուցանիշ	2017	2018	2019	2020	2021
Մշակող արդյունաբերություն	Համախառն ավելացված արժեքը, մլրդ ՀՀ դրամ	591.6	678.2	766.3	763.2	796.3
	ՀՆԱ-ի մասնաբաժին %	10.6%	11.3%	11.7%	12.3%	11.4%
Գյուղատնտեսություն, անտառտնտեսություն և ձկնորսություն	Համախառն ավելացված արժեքը, մլրդ ՀՀ դրամ	615.0	692.7	762.9	701.6	791.7
	ՀՆԱ-ի մասնաբաժին %	11.1%	11.5%	11.7%	11.3%	11.3%
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	Համախառն ավելացված արժեքը, մլրդ ՀՀ դրամ	834.4	838.9	754.2	670.0	785.2
	ՀՆԱ-ի մասնաբաժին %	15.0%	13.9%	11.5%	10.8%	11.2%
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	Համախառն ավելացված արժեքը, մլրդ ՀՀ դրամ	436.5	459.9	511.7	429.1	517.6
	ՀՆԱ-ի մասնաբաժին %	7.8%	7.6%	7.8%	6.9%	7.4%
Առողջապահություն և բնակչության	Համախառն ավելացված արժեքը, մլրդ ՀՀ դրամ	404.4	397.4	415.5	333.8	470.5

¹¹⁴2016-2017թթ.՝ armenia_2018_6.pdf (armstat.am)
 2017-2019թթ.՝ 99526988.pdf (armstat.am)
 2020-2021թթ.՝ https://armstat.am/file/article/sv_03_22a_112.pdf

Տնտեսական գործունեության տեսակ	Ցուցանիշ	2017	2018	2019	2020	2021
սոցիալական սպասարկում	ՀՆԱ-ի մասնաբաժին %	7.3%	6.6%	6.4%	5.4%	6.7%
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	Համախառն ավելացված արժեքը, մլրդ ՀՀ դրամ	185.5	169.8	212.9	239.2	386.8
	ՀՆԱ-ի մասնաբաժին %	3.3%	2.8%	3.3%	3.9%	5.5%

Աղբյուրը՝ ՀՀ ՎԳ ազգային հաշիվների վիճակագրություն¹¹⁵

Արտիզանային և փոքրամասշտաբ արդյունահանումը չի համարվում Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մաս: Ինչպես և Հայաստանի ԱՃԹՆ նախորդ զեկույցում, արտիզանային և փոքրամասշտաբ արդյունահանման ոլորտի վերլուծության նպատակով ուսումնասիրվել են ոչ ֆորմալ գործունեությանը վերաբերող հասանելի համապատասխան դատական ակտերը և վարչական մարմինների որոշումները: Հայաստանի Հանրապետության Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020 և 2021թթ. տարեկան հաշվետվություններում հանքարդյունաբերության ոլորտում ոչ ֆորմալ գործունեությունների իրականացման վերաբերյալ տեղեկություններ չեն գրանցվել: Ուսումնասիրության արդյունքում, մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ոչ ֆորմալ գործունեությանը վերաբերող դատական գործեր նույնպես չեն բացահայտվել: Հաշվի առնելով Հայաստանում սովյալ ոլորտի առանձնահատկությունները, ինչպես նաև առկա օրենսդրական պահանջները, օրենսդրական վերահսկողությունը և հաշվետվությունների պահանջները, կարելի է ենթադրել, որ Հայաստանում արտիզանային և փոքրամասշտաբ արդյունահանում չի իրականացվում:


5.2 Զբաղվածությունը հանքարդյունաբերության ոլորտում

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տրամադրած տվյալների՝ Հայաստանի տնտեսության մեջ իր մասնաբաժնով արդյունաբերությունը զբաղվածության ցուցանիշներով զբաղեցնում է երրորդ հորիզոնականը՝ ծառայությունների և գյուղատնտեսության ոլորտներից հետո: 2020 և 2021թթ. հանքարդյունաբերության ոլորտին բաժին է ընկել արդյունաբերության ոլորտի ընդհանուր զբաղվածության համապատասխանաբար 8.2% և 6.7%-ը:

2020թ. արդյունաբերության ոլորտին բաժին է ընկել ընդհանուր զբաղվածության 13.8%-ը, ինչը 2.2%-ով ցածր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Մինչդեռ, 2020թ. դրությամբ մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտում զբաղվածությունն աճել է հասնելով 9.2 հազ. աշխատակցի, ինչը 1.1%-ով գերազանցել է 2019թ. համապատասխան ցուցանիշը: 2021թ. մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտում զբաղվածների թիվը մնացել է անփոփոխ: Գրանցված աճը հիմնականում պայմանավորված է «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՄՊԸ-ում զբաղվածության 13.4% աճով, որը 2019թ. ընդհանուր զբաղվածության մեջ զբաղեցրել է 16.5% բաժնեմաս, և 50.2% աշխատուժի ավելացմամբ «Թեդուտ» ՓԲԸ-ում, որն 2019թ. ընդհանուր զբաղվածության մեջ ունեցել է 8.2% մասնաբաժին:

¹¹⁵ Նույնը

Գծապատկեր 5.2.1 Մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտում զբաղվածության տարեկան դինամիկա, 2017-2021թթ.




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ-ի հրապարակած համապատասխան տարեգրքեր ¹¹⁶

2021թ. մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտի մասնաբաժինը հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործում ոլորտի ընդհանուր զբաղվածության մեջ նվազել է 0.72%-ով 2020թ. համեմատ վերջինիս զբաղվածության բացարձակ թվի աճման հետևանքով: Համապատասխանաբար 0.02%-ով նվազել է մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտի մասնաբաժինն ընդհանուր զբաղվածության մեջ: Հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինն ընդհանուր զբաղվածության մեջ համեմատաբար ավելի փոքր է քան նույն ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում (տես սույն զեկույցի 5.1-րդ գլուխը): Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տրամադրած տվյալների՝ ուսումնասիրված տնտեսության 21 ոլորտներից հանքարդյունաբերության ոլորտը զբաղվածության ցուցանիշով 2020 և 2021թթ. զբաղեցրել է 16-րդ ¹⁰⁸ մասնաբաժինը, իսկ 2019թ.՝ 17-րդը (Գծապատկեր 5.2.3):


¹¹⁶ 2017-2022թթ.՝ <https://www.armstat.am/file/doc/99533583.pdf>

Գծապատկեր 5.2.2 2017-2021թթ. ընթացքում մետաղարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը հանքարդյունաբերության և ընդհանուր զբաղվածության մեջ, հազ. մարդ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ-ի հրապարակած համապատասխան տարեգրքեր¹¹⁷

Գծապատկեր 5.2.3 2020թ. և 2021թ. դրությամբ հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինն ընդհանուր զբաղվածության մեջ, Հայաստանի տնտեսության խոշորագույն 10 ոլորտների համեմատ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ-ի հրապարակած համապատասխան տարեգրքեր¹¹⁸


Հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածության գենդերային կառուցվածքում ավանդաբար գերակշռում են տղամարդիկ: Այսպիսով, 2020թ. ոլորտում աշխատող 11.9 հազ. աշխատակցից տղամարդիկ կազմել են 10.5 հազ. (88.24%), իսկ կանայք՝ 1.4 հազ. (11.76%): Սակայն, տվյալ ոլորտում կանանց մասնաբաժինը 2018թ.-ից ի վեր

¹¹⁷ Նույնը

¹¹⁸ 2018-2019-2020թ` 99528083.pdf (armstat.am)

աստիճանաբար աճել է՝ 2020թ. գերազանցելով 2016թ. դրությամբ գրանցված համապատասխան ցուցանիշը, որը, սակայն, կրկին նվազել է 2021թ. (Գծապատկեր 5.2.4): Ընդհանուր աշխատակիցների թիվը ոլորտում ևս նվազել է 2021թ.:


Գծապատկեր 5.2.4 Հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածության գենդերային կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ-ի հրապարակված համապատասխան տարեգրքեր¹¹⁹

Հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների մեծամասնությունը պատկանում են քաղաքային բնակչությանը: Սակայն ոլորտում զբաղված գյուղական բնակչության մասնաբաժինն աստիճանաբար ավելանում է: 2020թ. դրությամբ հանքարդյունաբերության ոլորտում աշխատել է քաղաքային բնակչությանը պատկանող՝ 7.3 հազ. մարդ, իսկ գյուղական բնակչությանը պատկանող՝ 4.6 հազ. մարդ (Գծապատկեր 5.2.5):

Գծապատկեր 5.2.5 Հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածության կառուցվածքն ըստ բնակչության վայրի



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ-ի հրապարակված համապատասխան տարեգրքեր¹²⁰


Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրված տվյալների համաձայն հանքարդյունաբերության ոլորտում աշխատողների թիվը խմբավորվել է ըստ մի քանի գործոնների, ինչպիսիք են. սեռը, բնակչության վայրը և աշխատանքային պայմանագրի տեսակը: 2020 և 2021թթ. տվյալների համաձայն՝ հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների գերակշռող մասը (98%) ՀՀ քաղաքացիներ էին: Միևնույն ժամանակ, նշված երկու տարիների ընթացքում հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների շուրջ 84% տղամարդիկ էին, 97%-ը ունեին անժամկետ պայմանագրային աշխատանք: Ընդհանուր

¹¹⁹ 2016-2017թթ՝ https://www.armstat.am/file/article/trud_18_4.1.pdf

¹²⁰ Նույնը

առմամբ, ոլորտում զբաղվածների ընդհանուր բաշխվածությունն ըստ սեռի, քաղաքացիության և պայմանագրի ժամկետայնության բավականին կայուն է:


Գծապատկեր 5.2.6 2020 և 2021թթ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների բաշխվածությունն ըստ սեռի, քաղաքացիության և պայմանագրի ժամկետայնության



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ գեկույցի համար

Ստորև ներկայացված գծապատկերում ամփոփված են ստեղծած աշխատատեղերի քանակով առաջատար 10 ընկերությունները և դրանց կողմից ապահովվող աշխատատեղերի քանակը: Ուսումնասիրված երկու տարիների ընթացքում ոլորտի ստեղծած աշխատատեղերի մեծամասնությունը՝ շուրջ 95%-ը, բաժին է ընկնել վեց ընկերությունների:

Գծապատկեր 5.2.7 2020թ. և 2021թ. զբաղվածությունը հանքարդյունաբերության առաջատար ընկերություններում




Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ գեկույցի համար

Համաձայն ՀՀ ՎԿ-ի տվյալների՝ 2020թ. ընդհանուր զբաղվածների գրեթե 30%-ը կենտրոնացած է եղել Երևանում: Արմավիրի և Արարատի մարզերը՝ համապատասխան 11.9% և 10.0% մասնաբաժիններով, զբաղեցրել են երկրորդ և երրորդ տեղերը: 2021թ. դրությամբ համապատասխան մասնաբաժիններին էին 28.4%, 12.4% և 10.4% (Գծապատկեր 5.2.8):

Ելնելով ոլորտների առանձնահատկություններից՝ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածության տեղաբաշխումը զգալիորեն տարբերվում է Հայաստանում ընդհանուր զբաղվածության տեղաբաշխումից: Ընկերությունների կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2020 և 2021թթ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների միայն 5%-ն է կենտրոնացված եղել Երևանում: Մինչդեռ, Սյունիքի մարզում աշխատողների թիվը կազմել է ընդհանուր զբաղվածների թվի մոտ 65%-ը, ինչը սերտորեն կապված է նշված գոտիներում հանքարդյունաբերության գործունեության մակարդակի հետ: Սյունիքի մարզում են գտնվում մետաղական հանքարդյունաբերական ոլորտի երեք խոշորագույն քաղաքները՝ Քաջարանը, Կապանը և Մեղրին: Սա իր հերթին այն դարձնում է մետաղի արդյունահանման ոլորտի առաջատար տարածաշրջան և, հետևաբար, զարմանալի չէ, որ Սյունիքին է պատկանում ոլորտի զբաղվածության ամենամեծ մասնաբաժինը: 2020թ. դրությամբ ոլորտում զբաղվածությամբ Սյունիքի մարզին հաջորդել են Գեղարքունիքի և Լոռու մարզերը՝ համապատասխանաբար 18% և 11% մասնաբաժիններով: Չնայած մետաղների արդյունահանման ոլորտում զբաղվածության համեմատաբար կայուն


բաշխմանը, Գեղարքունիքի մարզի մասնաբաժինը վերջին տարում նախորդ տարվա համեմատ նվազել է 1%-ով (Գծապատկեր 5.2.9):

Գծապատկեր 5.2.8 2020թ. և 2021թ. բոլոր ոլորտներում զբաղվածների տոկոսային տեղաբաշխումն՝ ըստ մարզերի և մայրաքաղաքի



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ-ի 2021թ. «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» հրապարակում¹²¹

Գծապատկեր 5.2.9 2020թ. և 2021թ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների տոկոսային տեղաբաշխումն՝ ըստ մարզերի և մայրաքաղաքի



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ զեկույցի համար

Վերջին մի քանի տարիների ընթացքում ՀՀ ՎԿ-ի կողմից տրամադրված մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածությանը վերաբերող տվյալները տարբերվում են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրված տեղեկատվությունից: 2020թ. զբաղվածների թվաքանակի հայտարարագրված տարբերությունը կազմել է 1,300 մարդ, մինչդեռ 2021թ. այն կազմել է 938 մարդ: Նշված տարբերությունը պայմանավորված է ընկերությունների կողմից տեղեկատվության հավաքագրման մեթոդաբանության տարբերություններով: Մասնավորապես, ՀՀ ՎԿ-ի կազմած զբաղվածության վիճակագրությունը հիմնված է տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի ընտրանքային հետազոտության վրա, մինչդեռ ընկերությունների կողմից տրամադրված զբաղվածության ցուցանիշն աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակն է հաշվետու տարվա կտրվածքով:

¹²¹ 2019-2020 marzer_2021_17 (armstat.am)

5.3 Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից իրականացված սոցիալ-տնտեսական գործունեությունը (պահանջ 6.1)

ԱՃԹՆ 6.1 պահանջի համաձայն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից իրականացվող սոցիալական վճարները ենթակա են բացահայտման:

Ընկերությունների կողմից ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները սահմանվում են ընդերքօգտագործման պայմանագրերում՝ որպես առանձին հավելված: Պայմանագրային պարտավորությունները կարող են սահմանվել տարբեր ժամկետներով՝ տարեկան, 3 տարի, 5 տարի կամ այլ: Ընդերքօգտագործման պայմանագրերում հավելվածի առկայության վերաբերյալ տեղեկատվությունը և շարադրված սոցիալական պարտավորությունները համառոտ ներկայացված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 5.3.1 2020-2021թթ. Պայմանագրով սահմանված սոցիալական պարտավորությունները

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված պարտավորությունը		Կատարված փոփոխություններ		
		Տարեկան, ՀՀ դրամ	Այլ ժամկետով ¹²² , ՀՀ դրամ	2020թ.	2021թ.	Պարզաբանում
«Ազարակի ՊՄԿ» ՓԲԸ	ՊՎ-311 05.04.2013	40,640,000	-	Տարեկան 2,640,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև 2,000,000 ՀՀ դրամի Մեղրու տարածաշրջանի բժշկական կենտրոնին ֆինանսական օգնություն և, ընդհանուր առմամբ, 36,000,000 ՀՀ դրամի չափով Մեղրի համայնքի զարգացման ծրագրերին մասնակցություն	Փոփոխության չի ենթարկվել	
«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	ՊՎ-103 (20.10.2012)	-	-	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	

¹²² Պայմանագրային պարտավորությունները կարող են սահմանվել տարբեր ժամկետներով՝ 3 տարի, 5 տարի կամ այլ

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված պարտավորությունը		Կատարված փոփոխություններ		
		Տարեկան, ՀՀ դրամ	Այլ ժամկետով ¹²² , ՀՀ դրամ	2020թ.	2021թ.	Պարզաբանում
«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	ՊՎ-425 (28.12.2012)	-	-	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	
«Ասասաթ» ՍՊԸ	ՊՎ-366 (06.06.2013)	1,000,000	-	Փոփոխության չի ենթարկվել	Փոփոխության չի ենթարկվել	Ըստ 06.06.2013թ. Պայմանագրին կից Հավելված 3-ի Ընկերությունը ստանձնել է տարեկան 800,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև 200,000 ՀՀ դրամ մասնակցություն ավտոճանապարհների վերանորոգմանը
«Ատ-Մետալս» ՍՊԸ	Պ-514 (16.01.2015)	3,600,000	-	Փոփոխության չի ենթարկվել	Փոփոխության չի ենթարկվել	Ըստ 16.01.2015թ. Պայմանագրին կից Հավելված 3-ի Ընկերությունը ստանձնել է տարեկան 3,600,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Պ-515 (22.08.2014)	250,000	400,000	Փոփոխության չի ենթարկվել	Փոփոխության չի ենթարկվել	Ըստ 22.08.2014թ. Պայմանագրին կից Հավելված 3-ի Ընկերությունը ստանձնել է տարեկան 650,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում
«Գեդի Գօլդ» ՍՊԸ	Պ-544 (22.07.2016)	650,000	-	Փոփոխության չի ենթարկվել	Փոփոխության չի ենթարկվել	Ըստ 22.07.2016թ. Պայմանագրին կից Հավելված 3-ի Ընկերությունը ստանձնել է տարեկան 650,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված պարտավորությունը		Կատարված փոփոխություններ		
		Տարեկան, ՀՀ դրամ	Այլ ժամկետով ¹²² , ՀՀ դրամ	2020թ.	2021թ.	Պարզաբանում
						սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	ՊՎ-189 (20.10.2012)	-	13,200,000	Փոփոխության չի ենթարկվել	Փոփոխության չի ենթարկվել	Ըստ 20.10.2012թ. Պայմանագրին կից Հավելված 3-ի Ընկերությունը ստանձնել է տարեկան 12,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև 1,200,000 ՀՀ դրամ՝ ազդակիր համայնքներից 2-3 ուսանողների ուսման վարձի տրամադրման նպատակով
«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՊՎ-232 (27.11.2012)	-	-	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	
«Թայթթոուն» ՍՊԸ	Պ-459 (11.02.2013)	-	-	Ընդերքօգտագործման պայմանագրերի ցանկում առկա չէ ընկերության մասին տեղեկություն	Թույլտվությունը դադարեցվել է 2021 թ. Մայիսին	Ընկերության թույլտվությունը դադարեցվել է 2021 թ. Մայիսին
«Թեդուտ» ՓԲԸ	ՊՎ-376 (20.02.2013)	-	-	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	
«Լեո-Էքս» ՍՊԸ	ՊՎ-094 (16.08.2012)	-	-	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	ՊՎ-245 (26.09.2012)	61,500,000	-	Փոփոխության չի ենթարկվել	Փոփոխության չի ենթարկվել	Ըստ 26.09.2012թ. Պայմանագրին կից Հավելված 3-ի Ընկերությունը ստանձնել է տարեկան 61,500,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված պարտավորությունը		Կատարված փոփոխություններ		
		Տարեկան, ՀՀ դրամ	Այլ ժամկետով ¹²² , ՀՀ դրամ	2020թ.	2021թ.	Պարզաբանում
«Լիճքվազ» ՓԲԸ	ՊՎ-293 (22.11.2012)	-	-	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	
«Ղարագույլաններ» ՓԲԸ	Պ-547 (25.10.2016)	1,000,000	250,000	Փոփոխության չի ենթարկվել	Փոփոխության չի ենթարկվել	Ըստ 25.10.2016թ. Պայմանագրին կից Հավելված 3-ի Ընկերությունը ստանձնել է տարեկան 1,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում և 250,000 ՀՀ դրամ ուսանողի կիսամյակային ուսման վճարի տրամադրում
«Մարջան Մայնինգ» ՍՊԸ	ՊՎ-398 (07.03.2013)	-	-	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	Չի դիտարկվում 2021 թ. համար	
«Մեգո Գոլդ» ՍՊԸ	ՊՎ-184 (28.12.2012)	-	-	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	ՊՎ-057 (22.08.2012)	-	-	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	
«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	ՊՎ-174 (07.11.2012)	-	-	Ընդերքօգտագործման պայմանագրերի ցանկում առկա չէ ընկերության մասին տեղեկություն	Ընկերության ընդերքօգտագործման թույլտվությունը դադարել է	
«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ	ՊՎ-213 (20.10.2012)	-	-	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	
«Չաարատ Կապան» ՓԲԸ	ՊՎ-183 (27.11.2012)	-	-	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	
«Պարամունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	089 (12.06.2012)	-	-	Ընդերքօգտագործման պայմանագրերի ցանկում առկա չէ ընկերության մասին տեղեկություն	Չի դիտարկվում 2021 թ. համար	
«Սագամար» ՓԲԸ	ՊՎ-093 (20.10.2012)	1,000,000	5,000,000	Փոփոխության չի ենթարկվել	Փոփոխության չի ենթարկվել	Ըստ 20.10.2012թ. Պայմանագրին կից Հավելված 3-ի Ընկերությունը ստանձնել է տարեկան 1,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված պարտավորությունը		Կատարված փոփոխություններ		
		Տարեկան, ՀՀ դրամ	Այլ ժամկետով ¹²² , ՀՀ դրամ	2020թ.	2021թ.	Պարզաբանում
						պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև 3 տարին մեկ 4,000,000 ՀՀ դրամ՝ վերանորոգման աշխատանքների մասնակցության և 5 տարին մեկ 1,000,000 ՀՀ դրամ՝ համայնքի ջրագծերի վերանորոգման աշխատանքների նպատակով
«Վայք Գոլդ» ՍՊԸ	Պ-371 (30.11.2012)	3,000,000	-	Փոփոխության չի ենթարկվել	Փոփոխության չի ենթարկվել	Ըստ 30.11.2012թ. Պայմանագրին կից Հավելված 3-ի Ընկերությունը ստանձնել է տարեկան 3,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում
«Վարդանի գարթոնք» ՍՊԸ	ՊՎ-239 (27.09.2012)	-	-	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	
«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	ՊՎ-169 (20.10.2012)	-	-	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	Հավելված 3 պայմանագրում ներկայացված չէ	

Աղբյուրը՝ ՀՀ ՏԿԵՆ-ի «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն» հրապարակում¹²³

¹²³ <https://mtad.am/pages/extractive-industries-transparency-initiative>

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ներկայացվող ԱՃԹՆ հրապարակային հաշվետվություններում ընկերությունները «Ընդերքօգտագործողի սոցիալ-տնտեսական ներդրումը համայնքին» բաժնում ներկայացնում են ընդերքօգտագործողի հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված պարտավորությունները, մասնավորապես, պարտավորության անվանումը, ֆինանսական պարտավորության դեպքում՝ ներդրման չափը, իսկ ոչ ֆինանսական պարտավորության դեպքում՝ ապրանքը կամ ծառայությունը (ծրագիրը) և դրա արժեքային գնահատականը, ինչպես նաև, թե որ համայնքին է ուղղված եղել պարտավորությունը:

Դիտարկվող ժամանակահատվածում հանքարդյունահանող ընկերությունների կողմից կատարված փաստացի պարտադիր և կամավոր վճարումների ամփոփ վերլուծությունը ներկայացված է ստորև: Առավել մանրամասն տվյալները ներկայացված են 3-րդ և 4-րդ Հավելվածներում:

Աղյուսակ 5.3.2 2020 և 2021թթ. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ըստ ընդերքօգտագործման պայմանագրերի և ՏԻՄ-երի հետ կնքված համաձայնագրերի փաստացի կատարված վճարներ՝ ըստ ընկերությունների¹²⁴

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	2020թ., ՀՀ դրամ	2021թ., ՀՀ դրամ
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	ՊՎ-311 Ապրիլ 5, 2013	37,920,000	37,920,000
«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	ՊՎ-103, Հոկտեմբեր 20, 2012	60,000,000	80,000,000
«Ասսայթ» ՍՊԸ	ՊՎ-366, Հունիս 6, 2013	-	1,738,973
«Ատ-Մետալս» ՍՊԸ	Պ-514, Հունվար 16, 2015	7,360,000	6,354,000
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	ՊՎ-189, Հոկտեմբեր 20, 2012	-	50,000,000
«Թեղուտ» ՓԲԸ	ՊՎ-376, Փետրվար 20, 2013	140,000,000	140,000,000
«Ղարագույլաններ» ՓԲԸ	Պ-547, Հոկտեմբեր 25, 2016	500,000	500,000
«Չաարատ Կապան» ՓԲԸ	ՊՎ-183, Նոյեմբեր 27, 2012	142,897,000	47,663,334
«Սագամար» ՓԲԸ	ՊՎ-093, Հոկտեմբեր 20, 2012	6,345,000	12,345,000
Ընդամենը		395,022,000	376,521,307


Աղյուսակը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ գեկույցի համար

Համաձայն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրված հաշվետվությունների՝ ընկերությունների կողմից ըստ պայմանագրի համայնքներին կատարված ընդամենը պարտադիր վճարները կազմել են 395 մլն ՀՀ դրամ 2020թ. և 377 մլն ՀՀ դրամ 2021թ.: 2020թ. կատարված ամենախոշոր վճարը կատարել է «Չաարատ Կապան» ՓԲԸ՝ 142,897,000 ՀՀ դրամ, որին հաջորդել է «Թեղուտ» ՓԲԸ-ն՝ 140,000,000 ՀՀ դրամ:

2020թ. պարտադիր վճարներով առաջատարն է եղել Կապան համայնքը, որին բաժին է հասել ընդամենը վճարված պարտադիր վճարների 37%-ը, իսկ 2021թ.՝ Շնողը՝ 36%: համայնքների՝ 2020-2021թթ. ստացած պարտադիր վճարների բաշխումը ներկայացված է ստորև գծապատկերում:

¹²⁴ «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ, «Թեղուտ» ՓԲԸ և «Չաարատ Կապան» ՓԲԸ 2020-2021թթ. համար կատարել են վճարումներ՝ համաձայն ընկերությունների և համայնքների միջև կնքված առանձին համաձայնագրերի: Սույն ընկերությունների ընդերքօգտագործման պայմանագրերում հավելված 3-ը բացակայում է:

Գծապատկեր 5.3.1 2020 և 2021թթ. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ըստ ընդերքօգտագործման պայմանագրերի և ՏԻՄ-երի հետ կնքված համաձայնագրերի փաստացի կատարված վճարներ՝ ըստ համայնքների, հազ. ՀՀ դրամ



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ գեկույցի համար

Աղյուսակ 5.3.3 2020 և 2021թթ. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքներին կատարած նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարած անհատույց օտարումները


Ընդերքօգտագործող	Ֆինանսական վճարներ, 2020թ., ՀՀ դրամ	Ոչ ֆինանսական վճարներ, 2020թ., ՀՀ դրամ	Ֆինանսական վճարներ, 2021թ., ՀՀ դրամ	Ոչ ֆինանսական վճարներ, 2021թ., ՀՀ դրամ
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	34,762,000	-	-	-
«Ատ-Մետալս» ՍՊԸ	-	-	12,360,000	-
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	-	168,333	-	-
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	892,000,000	2,726,491,258	370,500,000	1,604,822,969
«Թեղուտ» ՓԲԸ	8,011,300	-	3,000,000	16,488,383
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	-	-	-	32,139,031
«Լիճքվազ» ՓԲԸ	-	-	6,914,925	-
«Ղարազույաններ» ՓԲԸ	500,000	-	500,000	-
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	-	-	5,400,000	-
«Սազամար» ՓԲԸ	-	-	-	174,000
Ընդամենը	935,273,300	2,726,659,591	398,674,925	1,653,624,383

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընկերությունների կողմից ԱՃԹՆ հաշվետվության համար

Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարած նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով անհատույց օտարումներ կամ այլ ձևով կատարած անհատույց օտարումների ընդամենը գումարը կազմել է 3.7 մլրդ ՀՀ դրամ 2020թ. և 2 մլրդ ՀՀ դրամ՝ 2021թ.: Հարկ է նշել, որ ոչ ֆինանսական կամավոր վճարները 2020թ. մոտ 3 անգամ, իսկ 2021թ.՝ 4 անգամ գերազանցել են ֆինանսական վճարները:

Հաշվետու ժամանակաշրջանում 2020-2021թթ. համար համայնքներին կատարած ընդամենը ֆինանսական և ոչ ֆինանսական կամավոր վճարներով առաջատարն է եղել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ՝ 2020թ. վճարելով 3.62 մլրդ ՀՀ դրամ կամ ընդամենը վճարների 99%, իսկ 2021թ.՝ 1.98 մլրդ ՀՀ դրամ՝ 96%:

Գծապատկեր 5.3.2 2020 և 2021թթ. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից նվիրատվություններից, նվիրաբերություններից կամ այլ ձևով կատարած անհատույց օտարումներից համայնքների բյուջեների եկամուտները՝ դասակարգված ըստ առաջատար համայնքների, մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընկերությունների կողմից ԱՃԹՆ հաշվետվության համար

2020-2021թթ. բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով կատարած անհատույց օտարումներ ստացած առաջատար համայնքներն են եղել Քաջարանը և Կապանը: Նշված համայնքները միասին 2020թ. ստացել են ընդամենը կամավոր վճարների 98%, այնինչ 2021թ.՝ 90%-ը: Քաջարանին բաժին է հասել 2մլրդ ՀՀ դրամ վճար 2020թ. և 1.3 մլրդ ՀՀ դրամ 2021թ.:

5.4. Հիմնադրամներին, ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց հատկացվող նվիրատվություններ

ԱՃԹՆ 2019թ. ստանդարտի 5.1 պահանջը նախատեսում է, որ ստանդարտն իրականացնող երկրները պետք է պարզաբանեն արդյունահանող ոլորտի այն եկամուտները, որոնք չեն մուտքագրվում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներ:

2022թ. ապրիլի 27-ին տեղի ունեցած ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ նիստի¹²⁵ ընթացքում, որը հաստատում էր Հայաստանի 2020-2021թ. ազգային զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը, անդրադարձ չկատարվեց հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից հիմնադրված (դրանց փոխկապակցված) հիմնադրամների ընդգրկման և հաշվետվությունների ներկայացման հարցին: Ուստի, առաջնորդվելով 2017թ. հոկտեմբերի 10-ի¹²⁶ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ նիստի ժամանակ հիմնադրամների ընդգրկման և հաշվետվությունների ներկայացման հարցի շուրջ կայացրած որոշումներով, զեկույցի շրջանակում ներառել ենք ընկերությունների կողմից հիմնադրամներին, հասարակական կազմակերպություններին և ֆիզիկական անձանց (ազրեգացված, ոչ անվանական կերպով) կատարված վճարումների կամավոր բացահայտման արդյունքում ստացված տեղեկատվությունը:

2020թ. դրությամբ ընդհանուր առմամբ եղել է 26 հաշվետու ընկերություն, իսկ 2021թ.՝ 24: 2020թ. դրությամբ հաշվետու ընկերություններից միայն 6 ընկերություններն են հիմնադրամներին և ոչ առևտրային իրավաբանական անձանց կատարել ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով անհատույց օտարումներ կատարել՝ ընդհանուր 6.2 մլրդ ՀՀ դրամի չափով: Հաջորդ տարում կատարած նվիրատվությունների և հատկացումները կազմել են 4.4 մլրդ ՀՀ դրամ և կատարվել են 11

¹²⁵<https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

¹²⁶ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_10_10_%202017.pdf

ընկերությունների կողմից: Չնայած նշված նախաձեռնություններում ընդգրկված ընկերությունների թվի աճին, 2020-2021թթ. կատարված ներդրումների ընդհանուր գումարը նվազել է 1.8 մլրդ ՀՀ դրամով, մինչդեռ ֆիզիկական անձանց արված նվիրատվությունների քանակը, ընդհակառակը, աճել է 226 մլն ՀՀ դրամով:

Համաձայն Պետական եկամուտների կոմիտեի 2020թ. ապրիլի 17-ի N 337-Ն հրամանի¹²⁷ յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ից ոչ ուշ, հիմնադրամներն իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունները կհրապարակեն ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային հաշվետվությունների համար նախատեսված համակարգում: Առողիտորական եզրակացության հրապարակումը պարտադիր է, եթե հիմնադրամի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 մլն ՀՀ դրամը:

2020թ. դրությամբ հիմնադրամներին կատարված ֆինանսական և ոչ ֆինանսական հատկացումները կազմել են 856 մլն ՀՀ դրամ, որոնք իրականացվել են 6 ընկերությունների կողմից: 2021թ. դրությամբ միայն երեք ընկերություններ են հիմնադրամներին նվիրատվություններ կատարել՝ ընդհանուր 85 մլն ՀՀ դրամի չափով: ՀԿ-ներին ուղղված նվիրատվությունները 2020թ. կազմել են 469 մլն ՀՀ դրամ, իսկ 2021թ.՝ 432 մլն ՀՀ դրամ: Նվիրատվություններ ստացած ՀԿ-ների թիվը 2020թ. կազմել է 15, որը 2021թ. նվազել է հասնելով 10-ի: Մնացած ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվությունները, նվիրաբերությունները կամ այլ ձևով անհատույց օտարումները ուղղված են եղել մի շարք այլ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ պետական կառույցների, բժշկական հաստատությունների, թանգարանների և այլ կազմակերպությունների: Նշված նվիրատվությունների չափը 2020թ. դրությամբ կազմել է 5 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2021թ. դրությամբ՝ 3.9 մլրդ ՀՀ դրամ:

Հանքարդյունահանող ընկերությունների կողմից կատարված նվիրաբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ճշտել հնարավոր չէ, քանի որ ՊԵԿ կայքում¹²⁸ 2020-2021թթ. ներկայացված հաշվետվություններում բացակայում է ըստ նվիրաբերող կողմի ապագրեգացված տեղեկատվությունը: Նաև, թե՛ նվիրաբերող, թե՛ ստացող ընկերությունների ֆինանսական հաշվետվություններում բացակայում է փոխանցված/ ստացված նվիրաբերությունների բաշխումը՝ տվյալները ներկայացված են ընդամենը թվով հաշվետու տարվա համար: Օրինակ՝ 2020թ. ամենախոշոր նվիրաբերությունը կատարվել է Հայաստան համահայկական հիմնադրամին: Վերջինիս, հաշվետվությունը¹²⁹ ՊԵԿ կայքում 2020թ. համար ներառում է տեղեկատվություն ընդամենը նվիրաբերությունների գումարի վերաբերյալ: Հիմնադրամը հրապարակում է ֆինանսական հաշվետվությունները նաև իր կայքում¹³⁰, որտեղ ևս միայն ընդամենը ստացված նվիրաբերություններն են ներկայացված՝ առանց նվիրաբերողների կամ առանձին ստացված գումարների վերաբերյալ տեղեկատվության: Հիմնադրամի կայքում առկա Golden Book ցուցակում¹³¹ ներառված են միայն նվիրաբերողների անունները: Մույն խնդիրը վերաբերում է նաև այլ հիմնադրամների ստացված նվիրաբերություններին:

¹²⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141595>

¹²⁸ https://www.petekamutner.am/Reports_vh.aspx?rptid=0

¹²⁹ <https://www.petekamutner.am/shared/Reports/Report2020-02507456-vh.pdf>

¹³⁰ <https://www.himnadram.org/en/reports>

¹³¹ <https://www.himnadram.org/files/2022/04/5275785.pdf>

Աղյուսակ 5.4.1.1 2020թ. ընդերքօգտագործող ընկերությունների կատարած վճարումները հիմնադրամներին (պահանջ 5.1)

Ընկերություններ	Հիմնադրամներ	Սոցիալ-տնտեսական ներդրումն ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության, ՀՀ դրամ	Սոցիալ-տնտեսական ներդրումն ըստ հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության, ՀՀ դրամ	Հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության հղում
«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Հայաստան համահայկական հիմնադրամ	488,590,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2020-02507456-vh.pdf
«Թեղուտ» ՓԲԸ	Զինձառայողների ապահովագրության հիմնադրամ	150,000,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2020-02656976-vh.pdf
«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Քրոնիմետ բարեգործական հիմնադրամ	85,000,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2020-02600555-vh.pdf
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Հայաստան Համահայկական Հիմնադրամ	50,000,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2020-02507456-vh.pdf
«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Իմ քայլը բարեգործական հիմնադրամ	25,000,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2020-01282864-vh.pdf
«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Զինձառայողների ապահովագրության հիմնադրամ	13,800,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2020-02656976-vh.pdf
«Չաարատ Կապան» ՓԲԸ	Հայաստան Համահայկական հիմնադրամ	10,000,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2020-02507456-vh.pdf
«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզի զարգացման և ներդրման հիմնադրամ	10,000,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2020-09425412-vh.pdf
«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ	Գագիկ Ծառուկյան Բարեգործական հիմնադրամ	8,429,629	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2020-02568189-vh.pdf
«Չաարատ Կապան» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի զարգացման և ներդրման հիմնադրամ	5,000,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2020-09425412-vh.pdf
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	ՄԻԹԻ ՕՖ ՍՄԱՅԼ բարեգործական հիմնադրամ	4,850,000	4,850,000	https://old.cityofsmile.org/wp-content/uploads/2020/07/CITY-OF-SMILE-income-ENG-apr-jun.pdf
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	ԲԱՆԳԵՐԵՄ մարզադպրոց	3,360,000	-	Առկա չէ
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	ԻՄ ՔԱՅԼԸ բարեգործական հիմնադրամ	2,500,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2020-01282864-vh.pdf
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	«ՀՀ Սյունիքի մարզի զարգացման և ներդրման հիմնադրամ»	2,000,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2020-09425412-vh.pdf
Ընդամենը		858,529,629		

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկոյցի համար, Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի կայք

Աղյուսակ 5.4.1.2 2021թ. ընդերքօգտագործող ընկերությունների կատարած վճարումները հիմնադրամներին (պահանջ 5.1)

Ընկերություններ	Հիմնադրամներ	Սոցիալ-տնտեսական ներդրումն ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության	Սոցիալ-տնտեսական ներդրումն ըստ հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության, ՀՀ դրամ	Հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության հղում
«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Կապան բարեգործական հիմնադրամ	60,000,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2021-09412901-vh.pdf
«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ	Գագիկ Ծառուկյան Բարեգործական հիմնադրամ	12,183,376	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2021-02568189-vh.pdf
«Չաարատ Կապան» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզի զարգացման և ներդրման հիմնադրամ	5,000,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2021-09425412-vh.pdf
«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Զինձառայողների ապահովագրության հիմնադրամ	4,600,000	Արտացոլված չէ	https://www.petekamutner.am/shared/Reports/Report2021-02656976-vh.pdf
«Չաարատ Կապան» ՓԲԸ	Սյունիքի մարզպետարան	2,795,405	Արտացոլված չէ	http://syunik.mtad.am/files/docs/59963.pdf
Ընդամենը		84,578,781		

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՀԹՆ զեկույցի համար Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի կայք

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ի համաձայն, եթե Կազմակերպության գույքի ստացման աղբյուր են հանդիսացել հանրային միջոցները (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի միջոցները), ապա կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել հաշվետվությունը: 2019թ. դեկտեմբերի 4-ին «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում նույն օրենքի վերախմբավորված 26-րդ հոդվածի համաձայն, եթե կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում պետական կամ համայնքային միջոցներից ֆինանսավորվել է 10 միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա այդ միջոցների օգտագործման վերաբերյալ լիազոր մարմնի սահմանած հաշվետվությունը, որպես հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն, ենթակա է պարտադիր աուդիտի՝ «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի համաձայն:

Աղյուսակ 5.4.2.1 2020թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ (պահանջ 5.1)

Ընկերություններ	Ոչ առևտրային իրավաբանական անձ	Մոցիալ-տնտեսական ներդրումն ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Հանրային Դիվանագիտություն ՀԿ	420,000,000
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Առաքելություն Հայաստան ԲՀԿ	16,000,000
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Թի էմ էմ ուսուցման և զարգացման կենտրոն ՀԿ	8,000,000
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Կապանի զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքների իրավունքների պաշտպանության ԲՀԿ	7,200,000
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	Առաջատար Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միություն ՀԿ	4,350,000
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Պրոլայֆ Առողջապահական ՀԿ	4,000,000
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Հուլիսի և հավատի օջախ բարեգործական ՀԿ	3,600,000
«Չաարատ Կապան» ՓԲԸ	Հայկական Կարմիր Խաչի ընկերություն Սյունիքի մարզային ծրագիր	2,880,000
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ Բարեգործական հասարակական կազմակերպություն	1,000,000
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	ԲԱՐԻ ՄԱՄՄ Բարեգործական կազմակերպություն	1,000,000
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	ՀՀ ԵԿՄ ՀԿ	800,000
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Վիկտորիա Մարադսիրական ՀԿ	126,500
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Էլյո ՀԿ	100,000
«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	Դու մենակ չես մարդասիրական կազմակերպություն	100,000
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Արցախ-Հայ Մամուլի Ակումբ ՀԿ	60,000
Ընդամենը		469,216,500

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկուլցի համար Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք

Աղյուսակ 5.4.2.2 2021թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ (պահանջ 5.1)

Ընկերություններ	Ոչ առևտրային իրավաբանական անձ	Մոցիալ-տնտեսական ներդրումն ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության
«Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Հանրային Դիվանագիտություն ՀԿ	385,000,000
«Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Առաքելություն Հայաստան ԲՀԿ	16,000,000
«Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Պրոլայֆ Առողջապահական ՀԿ	14,942,650
«Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Կապանի Զոհված և Վիրավոր Ազատամարտիկների Ընտանիքներ	7,200,000
«Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Պառնաս մշակութային հասարակական կազմակերպություն	3,800,000
«Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Հույսի և հավատի օջախ բարեգործական ՀԿ	3,600,000
«Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Հաշմանդամների աջակցության Սյունիքի մարզի ՈՂԶԻ ՀԿ	866,500
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	«Մեդրիի տարածաշրջանի պտղաբուծության զարգացման» ՀԿ	500,000
«Չաարատ Կապան» ՓԲԸ	Հայկական Կարմիր Խաչի ընկերություն Սյունիքի մարզային ծրագիր Սյունիքի մարզային ծրագիր	230,000
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Էխո ՀԿ	150,000
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	«Հավատ և սեր» ՀԿ	140,000
Ընդամենը		432,429,150

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք

Աղյուսակ 5.4.3 2020 և 2021թթ. հանքարդյունաբերական ընկերությունների նվիրատվություններն ըստ շահառուների տեսակների

Շահառուների տեսակներ	2020	2021
	Գումարը ՀՀ դրամով	Գումարը ՀՀ դրամով
ՀԿ-ներ	469,216,500	432,429,150
Հիմնադրամներ	858,529,629	84,578,781
ՊՈԱԿ-ներ	236,862,196	54,829,785
Կրոնական հաստատություններ	38,006,540	40,993,500
Բժշկական հաստատություններ	36,649,509	5,500,000
Թանգարաններ	7,116,920	497,050
Այլ	4,644,841,967	3,835,594,297
Ընդամենը	6,291,223,261	4,454,422,562

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք

Աղյուսակ 5.4.4 2020թ. և 2021թ. ընկերությունների կողմից կատարված նվիրատվությունների քանակը և ծավալը

Ընկերություններ	2020		2021	
	Նվիրատվությունների քանակ	Գումարը ՀՀ դրամով	Նվիրատվությունների քանակ	Գումարը ՀՀ դրամով
«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	31	5,796,165,739	26	4,356,844,795
«Չաարատ Կապան» ՓԲԸ	20	80,363,963	21	58,590,888
«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ	2	8,429,629	2	12,183,376
«Թեղուտ» ՓԲԸ	10	211,476,315	6	10,128,579
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	5	9,135,884	6	7,440,000
«Լիճքվազ» ՓԲԸ	1	4,161,293	1	6,914,925
«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	5	889,690	6	970,000
«Բակտեկ Էլո» ՍՊԸ	-	-	2	550,000
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	5	10,550,000	1	400,000
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	15	150,413,891	-	-
«Վայք Գոլդ» ՍՊԸ	3	17,000,000	-	-
«Սագամար» ՓԲԸ	5	2,100,357	-	-
«Լեռ-Էքս» ՍՊԸ	6	286,500	-	-
«Ղարագոյլաններ» ՓԲԸ	1	250,000	-	-
Ընդամենը	109	6,291,223,261	71	4,454,022,562

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկոլոյցի համար Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք

Աղյուսակ 5.4.5.1 2020թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ֆիզիկական անձանց ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ (պահանջ 5.1)

Ընկերություններ	Ֆիզիկական անձանց քանակը	Ֆինանսական հատկացումներ	Ոչ ֆինանսական հատկացումներ
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	5	3,065,700	-
«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	13	1,900,000	-
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	4,692	29,771,540	27,053,250
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	10	6,675,072	-
«Թեղուտ» ՓԲԸ	172	6,747,766	-
«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	98	57,691,000	20,662,664
Ընդամենը	4,990	105,851,078	47,715,914

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկոլոյցի համար

Աղյուսակ 5.4.5.2 2021թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ֆիզիկական անձանց ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ (պահանջ 5.1)

Ընկերություններ	Ֆիզիկական անձանց քանակը	Ֆինանսական հատկացումներ	Ոչ ֆինանսական հատկացումներ
«Չաարատ Կապան» ՓԲԸ	1,427	41,369,226	-
«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	5	3,065,700	-
«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	29	5,650,000	-
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	50	1,539,400	-
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	33	14,171,829	-
«Թեղուտ» ՓԲԸ	30	6,316,923	-
«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	37	206,463,856	86,943,083

Ընկերություններ	Ֆիզիկական անձանց քանակը	Ֆինանսական հատկացումներ	Ոչ ֆինանսական հատկացումներ
«Լիճքվազ» ՓԲԸ	2	570,000	-
«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ	1	12,183,376	-
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	110	-	300,000
«Վայք Գոլդ» ՍՊԸ	2	1,035,000	-
Ընդամենը	1,726	292,365,310	87,243,083

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

5.5 Մետաղական հանքարդյունաբերության բնապահպանական ազդեցության կառավարման և մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվությունը (պահանջ 6.4)

ԱՃԹՆ 2019թ. ստանդարտի 6.4 պահանջը իրախուսում է ստանդարտն իրականացնող երկրներին բացահայտել արդյունահանող ճյուղերի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության կառավարման և մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվությունը: Մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը և ընթացակարգերն առավել մանրամասն ներկայացված են 2018¹³² և 2019¹³³թթ. ԱՃԹՆ զեկույցներում:

Համաձայն ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնելու կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 2018 թ փետրվարի 22-ի N 191-Ն որոշման ¹³⁴ ընդերքօգտագործող ընկերությունները պարտավորվում են Շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկումների արդյունքների մասին:

Շրջակա միջավայրի նկատմամբ մշտադիտարկումները վերաբերում են շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով, հիմնական գնահատման հաշվետվությամբ (ՇՄԱԳ), և բնապահպանական կառավարման պլաններով նշված բացասական ազդեցությունների տեսակներին: Մշտադիտարկումների ծրագիրը կազմվում է ըստ շրջակա միջավայրի բոլոր բնական բաղադրիչների՝ հողային ծածկույթ, մթնոլորտային օդ, մակերևութային և ստորերկրյա ջրեր, բուսական ծածկույթ և կենդանական աշխարհ:

Մշտադիտարկման արդյունքները եռամսյակային և տարեկան կտրվածքով ներկայացվում են լիազոր մարմին՝ ՇՄՆ: Ամփոփ տարեկան հաշվետվությունն ընդերքօգտագործողները ներկայացնում են մինչև յուրաքանչյուր տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը էլեկտրոնային կամ թղթային տարբերակով: Լիազոր մարմինը եռամսյակային հաղորդումները և ամփոփ տարեկան հաշվետվություններն ստանալուց հետո ամփոփում է դրանք և 10 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում լիազոր մարմնի պաշտոնական կայքում:¹³⁵

Ընդերքօգտագործողի էլեկտրոնային կայքի առկայության դեպքում ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության

¹³² <https://www.eiti.am/hy/annual-reports/2020>

¹³³ <https://www.eiti.am/hy/annual-reports/2021>

¹³⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120135>

¹³⁵ <http://mnp.am/am/pages/233>

կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում գնահատված արդյունքների վերաբերյալ ամփոփ տարեկան հաշվետվությունը տեղադրվում է նաև այդ կայքում:

Յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ ընդերքօգտագործողները պարտավոր են վերանայել և լիազոր մարմնի հետ համաձայնեցնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող աշխատանքների ծրագիրը և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչները:

ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1758-Ն որոշմամբ ստեղծվել է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: Ֆոնդի թարմացված կանոնադրությունը հաստատվել է ՀՀ ՏԿԵ նախարարի 30.06.2020թ. թիվ N 47-Լ հրամանով (լրացված 15.02.2021թ. թիվ N 08-Լ որոշմամբ):

Վերջինիս գործունեության առարկան և նպատակն իրենց մեջ ներառում են, ի թիվս այլոց, ՀՀ տարածքում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառման իրականացումը, ինչպես նաև ընդերքօգտագործման իրավունքով ծանրաբեռնվածության վերաբերյալ վերլուծության իրականացումը՝ ըստ մարզերի, օգտակար հանածոների տեսակների և դրանց փոփոխությունն ըստ տարիների:

«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կողմից վարվող <https://www.geofund.am/hy> կայքում գետեղված է որոշակի տեղեկատվություն մետաղական հանքաքարի արդյունահանման թույլտվություն ունեցող ընկերությունների վերաբերյալ՝ ընկերության անվանումը, արտոնագրի համարը, ընդերքօգտագործման պայմանագրի կնքման ամսաթիվը, վավերականության ժամկետը, համարը, ինչպես նաև լեռնահատկացման ակտի տարեթիվը և համարը: Կայքում հասանելի են նաև հանքավայրերի և հանքերևակումների անձնագրերը:

Առանձին ընկերությունների վերաբերյալ փաստաթղթերը (պայմանագրեր, լեռնահատկացման ակտեր և այլն) կայքում սակայն հասանելի չեն:

2020թ. ընթացքում ԱՃԹՆ հաշվետու 26 ընկերություններից միայն 7-ն են ներկայացրել բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություն, իսկ 2021թ. հաշվետու 24 ընկերություններից՝ 6-ը:¹³⁶

Աղյուսակ 5.5.1.1 2020թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություններ

N	Ընկերության անվանումը	i. եռամսյակ	ii. եռամսյակ	iii. եռամսյակ	iv. եռամսյակ	Տարեկան հաշվետվություն
1	«Թեղուտ» ՓԲԸ	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված	-	Ներկայացված
2	«Լիճքվազ» ՓԲԸ	-	-	Ներկայացված	Ներկայացված	-
3	«Չաարատ Կապան» ՓԲԸ	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված
4	«Մազամար» ՓԲԸ	-	-	-	-	Ներկայացված

¹³⁶ <http://mnp.am/shrjaka-mijavayr/ynnderqi-hashvetvutyunneri-arxiv>

N	Ընկերության անվանումը	i. եռամսյակ	ii. եռամսյակ	iii. եռամսյակ	iv. եռամսյակ	Տարեկան հաշվետվություն
5	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	-	-	-	-	Ներկայացված
6	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված
7	«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	-	-	-	-	Ներկայացված

Աղբյուրը՝ Շրջակա միջավայրի նախարարություն¹³⁷

Աղյուսակ 5.5.1.2 2021թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություններ

N	Ընկերության անվանումը	i. եռամսյակ	ii. եռամսյակ	iii. եռամսյակ	iv. եռամսյակ	Տարեկան հաշվետվություն
1	«Թեղուտ» ՓԲԸ	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված
2	«Լիժքվազ» ՓԲԸ	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված
3	«Չաարատ Կապան» ՓԲԸ	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված
4	«Մագամար» ՓԲԸ	-	-	-	-	Ներկայացված
5	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	-	-	-	-	Ներկայացված
6	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված	Ներկայացված

Աղբյուրը՝ Շրջակա միջավայրի նախարարություն¹³⁸

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի¹³⁹ գնահատման և փորձաքննության կառավարումն իրականացնում են ՀՀ կառավարությունը, Շրջակա միջավայրի նախարարությունը, Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնը (ՇՄԱՓԿ), Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ առանց ՇՄԱԳ փորձաքննական դրական եզրակացության արգելվում է հիմնադրությամբ փաստաթղթի ընդունումը կամ նախատեսվող գործունեության իրականացումը:

Նախատեսվում է, որ ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունը 7 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում:¹⁴⁰

Հարկ է նշել, որ ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունը նախարարության կայքէջում տեղադրված չէ հանրամատչելի կերպով. առանձնացված չեն ընդերքօգտագործողների կողմից ներկայացված ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունները, 2016թ. և դրան նախորդող տարիներին հրապարակված եզրակացությունները հասանելի չեն որոնման կոճակով, քանի որ արխիվացված փաստաթղթերի տեսքով են ներկայացված, փաստաթղթերը ներկայացված են միայն pdf ձևաչափով: ԱՃԹՆ շրջանակներում հաշվետու

¹³⁷ Նույնը

¹³⁸ Նույնը

¹³⁹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=91594>

¹⁴⁰ Նույնը

ընդերքօգտագործող ընկերությունների ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունների հասանելիության վերլուծությունը ներկայացված է ստորև՝

Աղյուսակ 5.5.2 2022թ. օգոստոսի դրությամբ ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունները

N	Ընկերության անվանումը	ՇՄԱԳ փորձաքննական եզրակացություն	Հրապարակման ամսաթիվը
1	«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Արջուտի ոսկու հանքաքարի վերամշակման ֆաբրիկայի կառուցման և շահագործման աշխատանքային նախագծի հաշվետվություն:	06.08.2014
		Արջուտի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի հաշվետվություն:	19.09.2015
2	«Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ	Հրապարակված չէ	-
3	«Ասասթ» ՍՊԸ	Հրապարակված չէ	-
4	«Թաթարոուն» ՍՊԸ	Դրական եզրակացություն Լիճքի հանքավայրի տեղամասում 110կՎ բարձրավոլտ օդային գծի և ենթակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	19.06.2018
		Լիճքի պղնձի հանքավայրի արդյունահանման հաշվետվություն:	21.12.2015
		Դրական եզրակացություն Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի (Թխկուտի տեղամաս) ստորին հորիզոններում և թներում 2017-2019թթ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամկետի երկարաձգման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ:	14.09.2017
5	«Լեռ-Էքս» ՍՊԸ	Հանքասարի պղինձ- մոլիբդենային հանքավայրում 2015-2017թթ. ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների նախնական գնահատման հայտ:	14.12.2015
6	«Գեղի գոլդ» ՍՊԸ	Գեղի գետի ավազանի հանքային դաշտում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի ժամկետի երկարաձգման նախնական գնահատման հայտ:	28.12.2015
7	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Դրական եզրակացություն Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի փոփոխված նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	29.04.2016
8	«ԳեոՊրոՄայինգ Գոլդ» ՍՊԸ	Դրական եզրակացություն Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի արտադրողականության բարձրացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	02.02.2022
		Դրական եզրակացություն Վարդենիսի բազմամետաղների հանքերնական տարածքում 2017-2019թթ. երկրաբանահետախուզական աշխատանքների համար նախնական գնահատման հայտի վերաբերյալ:	04.10.2017
		Դրական եզրակացություն Գեղարքունիքի մարզի Սոթքի ոսկու հանքավայրի բացահանքի և ստորգետնյա հանքի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	26.09.2022
9	«Վարդանի գարթոնքը» ՍՊԸ	Հրապարակված չէ	-

N	Ընկերության անվանումը	ՇՄԱԳ փորձաքննական եզրակացություն	Հրապարակման ամսաթիվը
10	«Թեղուտ» ՓԲԸ	Դրական եզրակացություն սպառողական հատկությունները կորցրած ապրանքներից գոյացող թափոնների պահման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	15.06.2021
		Դրական եզրակացություն "Թեղուտ" ՓԲ ընկերության լեռնահարստացման կոմբինատում առաջացող թափոնների պահման/տեղադրման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	21.01.2022
11	«Ատ-մետալս» ՍՊԸ	Դրական եզրակացություն Սյունիքի մարզի Մեղրասարի ոսկու հանքավայրի արդյունահանման /արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգում/ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	08.09.2022
		Դրական եզրակացություն Տաշտունի ոսկու կորզման գործարանի վերազինման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ:	22.07.2021
		Մեղրասարի ոսկու հանքավայրի արդյունահանման աշխատանքային նախագծի վերաբերյալ:	18.11.2014
		Դրական եզրակացություն Թաղամիլի ոսկու երևակման տարածքում 2020-2023թթ. իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ:	15.03.2021
12	«Վայք գոլդ» ՍՊԸ	Հրապարակված չէ	-
13	«Ղարագուլյաններ» ՓԲԸ	Հրապարակված չէ	-
14	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Հրապարակված չէ	-
15	«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	Հրապարակված չէ	-
16	«Լիճքվազ» ՓԲԸ	Հրապարակված չէ	-
17	«Մարջան մայնինգ» ՍՊԸ	Հրապարակված չէ	-
18	«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	Բացասական եզրակացություն Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	27.07.2022
		Մեղրաձորի ոսկու կորզման ֆաբրիկայի աշխատանքային նախագծի վերաբերյալ:	22.04.2014
19	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	Դրական եզրակացություն "Նահատակ" պոչամբարի ռեկուլտիվացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	22.07.2021
		Դրական եզրակացություն Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկայի բացահանքի արդյունահանված տարածքում պոչերի պահեստավորման հաշվետվության վերաբերյալ:	14.11.2017
20	«Մեգո գոլդ» ՍՊԸ	Թուխանուկի ոսկու (կենտրոնական տեղամաս) հանքավայրի շահագործման փոփոխված աշխատանքային նախագծի վերաբերյալ:	11.12.2014
21	«Սագամար» ՓԲԸ	Արմանիսի ոսկի բազմամետաղային հանքավայրի ընդլայնման աշխատանքային նախագիծ:	22.05.2015

N	Ընկերության անվանումը	ՇՄԱԳ փորձաքննական եզրակացություն	Հրապարակման ամսաթիվը
		Դրական եզրակացություն Դեղին և Սև գետերի ավազանում երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ:	26.03.2018
22	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Դրական եզրակացություն Կապան համայնքում նախատեսվող անտառապատման և անտառվերականգնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ: Դրական եզրակացություն Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների արդյունահանման նախագծի փոփոխության (ներառյալ արդյունահանման ծավալների փոփոխություն, ընդերքի տեղամասի ընդլայնում, թույլատվության ժամկետի երկարաձգում) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	04.05.2021 16.12.2016
23	«Մուլտի գրուպ» կոնցեռն ՍՊԸ	Դրական եզրակացություն Էրթիչի քվարցիտների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ: Դրական եզրակացություն Երևան քաղաքի Աբովյան փողոց 5/1, 5/2, և 5/5 հասցեներում նախատեսվող հյուրանոցային համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ:	13.04.2018 18.04.2018
24	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Դրական եզրակացություն Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/311 թույլտվությամբ տրամադրված տեղամասի ընդլայնման և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	22.06.2020
25	«Զաարատ Կապան» ՓԲԸ	Դրական եզրակացություն Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի տարածքում պաշտպանիչ բնամասի փլուզման հետևանքի վերացման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	22.01.2019
25		Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ստորգետնյա մշակման տեխնիկական նախագծի (փոփոխության) հաշվետվություն:	18.11.2019
26	«Պարամաունտ գոլդ մայնինգ» ՓԲԸ	Հրապարակված չէ	-

Աղբյուրը Շրջակա միջավայրի նախարարություն¹⁴¹

Ընդերքի մասին օրենսգիրքն ընդերքօգտագործող ընկերությունների համար նախատեսում է բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումների անցկացում:

Ընդերքօգտագործող ընկերությունների ներգրավվածությամբ դատական գործերի հասանելի տվյալների բազան է <http://datalex.am/>:

¹⁴¹ <http://www.mnp.am/shrjaka-mijavayr/ezrakacutyunner>

5.6 COVID-19 համավարակի ազդեցությունը հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի վրա

2020թ. սկզբին ամբողջ աշխարհը կանգնեց բարդ սոցիալ-տնտեսական խնդրի առջև, որի պատճառով COVID-19 էր և իրենից բխող կարանտինային սահմանափակումները: Համաշխարհային մասշտաբով, այն զգալի ազդեցություն ունեցավ բժշկական օգնության տրամադրման, մարդկանց, կապիտալի և բիզնեսի շարժունակության վրա: Համավարակը նպաստեց աղքատության մակարդակի սրացմանը և ստեղծեց բարդ տնտեսական պայմաններ շատ տնտեսությունների համար: Ի պատասխան համաճարակի, երկրների մեծամասնությունը հաստատեցին տեղաշարժի սահմանափակումներ, ինչը իր հերթին բացասական ազդեցություն ունեցավ համաշխարհային արտադրության և մատակարարման շղթաների վրա, ինչպես նաև տրանսպորտային համակարգերի վրա: Արդյունքում, շատ երկրներ բախվեցին ապրանքների և ծառայությունների դեֆիցիտի հետ, ինչը իր հերթին հանգեցրեց գնաճի: Առողջապահության համաշխարհային կազմակերպության գնահատականներով՝ համաճարակի սկզբից աշխարհում գրանցվել է COVID-19 հիվանդության 617.95 մլն հաստատված դեպք և 6.53 մլն մահվան դեպք (2022թ. հոկտեմբերի 7-ի դրությամբ)¹⁴²: Հայաստանում գրանցվել է COVID-19-ի հաստատված 443.79 հազ. դեպք և 8.69 հազ. մահվան դեպք¹⁴³:

Հայաստանում համազգային կարանտին է սահմանվել 2020թ. մարտին: Հաստատված սահմանափակումները հանգեցրել են ձեռնարկությունների և ուսումնական հաստատությունների գործունեության ժամանակավոր դադարեցմանը, ինչպես նաև Հայաստանի քաղաքացիների և օտարերկրացիների համար ուղևորությունների սահմանափակմանը: 2020թ. մայիսի սկզբից կառավարությունը որոշ չափով թեթևացրել է կարանտինային սահմանափակումները՝ թույլ տալով որոշ ձեռնարկություններին վերսկսել իրենց աշխատանքը, սակայն այլ սահմանափակումները պահպանվել են մինչև 2020թ. սեպտեմբերի 11-ը¹⁴⁴:

COVID-19-ի հետևանքով առաջացած ճգնաժամը խաթարել է Հայաստանի տնտեսական աճը: ՄԱԿ-ի ԵՏՀ ուսումնասիրության համաձայն¹⁴⁵, COVID-19 համավարակի հետևանքով Հայաստանի ՀՆԱ-ն 2020թ. հունվար-օգոստոս ամիսներին տարեկան կտրվածքով կրճատվել է 5.3%-ով: ՄԱԿ ԶԾ-ի կողմից իրականացված ուսումնասիրության համաձայն¹⁴⁶, հունվար-մայիս ամիսների ընթացքում արտադրության ծավալների անկում է գրանցվել տնտեսության բոլոր ոլորտներում, բացառությամբ հանքարդյունաբերության ոլորտի: Հարկ է նշել, որ դա տվյալ ոլորտի նկատմամբ կառավարության կողմից խիստ սահմանափակումներ չկիրառելու արդյունք է: 2020թ. ապրիլի 25-ի որոշման համաձայն թույլատրվել է այլումինի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների աշխատանքը, իսկ 2020թ. ապրիլի 27-ի որոշմամբ՝ հանքարդյունաբերության գործունեության սահմանափակումները չեղարկվել են¹⁴⁷:

¹⁴² ԱՀԿ՝ <https://www.who.int/data#dashboards>

¹⁴³ ԱՀԿ՝ <https://covid19.who.int/region/euro/country/am>

¹⁴⁴ ՄԱԿ ԵՏՀ՝ COVID-19-ի ազդեցությունը Հայաստանի արևմտի և կառուցվածքային վերափոխումների վրա՝ https://unece.org/sites/default/files/2021-01/Impact_COVID-19_Armenia..pdf

¹⁴⁵ Նույնը

¹⁴⁶ ՄԱԿ ԾՁ՝ Covid-19-ի բռնկման սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատումը հայկական համայնքներում՝ <https://www.undp.org/armenia/publications/socio-economic-impact-assessment-covid-19-outbreak-armenian-communities>


¹⁴⁷ ԱՄՆ ՄԶԳ՝ Covid-19-ի անմիջական ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա՝

https://pdf.usaid.gov/pdf_docs/PA00X8GF.pdf

Աշխարհի այլ երկրներում սահմանված կարանտինային սահմանափակումները, ազդեցություն են ունեցել Հայաստանից արտահանման ծավալի և արժեքի վրա: ՄԱԿ-ի COMTRADE-ի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2020թ. մետաղական արտադրանքի արտահանման ծավալը 2019թ. համեմատ կրճատվել է 82.20 հազ. տոննայով (կամ 14,05%-ով): Արտահանման ծավալների կրճատման հիմնական պատճառ է հանդիսացել արտահանվող պղնձի խտանյութի ծավալի անկումը, որը կազմել է 91.5 հազ. տոննա (16.29%) (Տես բաժին 3.4.1): Արտահանման ծավալների անկումը որոշ չափով փոխհատուցվել է մետաղների միջազգային գների աճով (Տես բաժին 3.4.1): Օրինակ՝ պղնձի արժեքը 2020թ. 2019թ. համեմատ աճել է 3.5%-ով, կազմելով 6,221 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց: Արդյունքում, մետաղական արտադրանքի արտահանման դրամական արժեքը գրանցել է ավելի ցածր անկում, 2020թ. նվազելով 2.85%-ով՝ 2019թ. համեմատ: 2021թ. մետաղական արտադրանքի ծավալները շարունակել են նվազել, սակայն արտահանման արժեքը զգալիորեն աճել է:

Այսպիսով, 2020թ. Հայաստանի համար նշանավորվել է հիմնական տնտեսական ցուցանիշների անկմամբ: Հայաստանի ՀՆԱ-ն նախորդ տարվա համեմատ 2020թ. կրճատվել է 5.52%-ով, ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալը կրճատվել է 5.04%-ով, իսկ երկրի արտահանման ընդհանուր ծավալը կրճատվել է 4.16%-ով: Մինչդեռ, ազդեցությունները հանքարդյունաբերության ոլորտի վրա նշանակալի չեն եղել: Այսպիսով, ոլորտի ընդհանուր արտադրության ծավալը 2020թ. աճել է 13.13%-ով, իսկ համախառն ավելացված արժեքն աճել է 9.70%-ով (տես բաժին 5.1): Նույնիսկ, 2020թ. կարանտինային սահմանափակումների ընթացքում, հանքարդյունաբերության ոլորտի արտադրությունը շարունակել է աճել (Գծապատկեր 5.6.1.): 2020թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին արտահանված հանքային արտադրանքի արժեքը նույնպես շարունակական աճ է դրսևորել: Մինևույն ժամանակ, թանկարժեք մետաղների, ինչպես նաև ոչ թանկարժեք մետաղների արտահանումը 2020թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին նվազել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ: Սակայն, 2020թ. ոչ թանկարժեք մետաղների արտահանման արժեքը վերականգնվել է (Գծապատկեր 5.6.2.):


Գծապատկեր 5.6.1 2019թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի արտադրությունը՝ 2020 և 2021թթ. նույն ժամանակահատվածի համեմատ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ-ի հրապարակած համապատասխան տարեգրքեր¹⁴⁸

¹⁴⁸ ՀՀ ՎԿ՝ 2019՝ sv_09_19r_411.pdf (armstat.am)
2020-2021՝ sv_09_20r_411 (armstat.am)

Գծապատկեր 5.6.2 2019թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանքարդյունաբերության արտադրանքի արտահանումը՝ 2020 և 2021թթ. նույն ժամանակահատվածի համեմատ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԳ-ի հրապարակած համապատասխան տարեգրքեր¹⁴⁹

5.7 ԱՃԹՆ կարևորությունը էներգետիկ անցման համար

Աշխարհին նետված ժամանակակից մարտահրավերները, պահանջում են բոլոր պետություններից և ընկերություններից վերանայել էներգետիկ ոլորտի զարգացման սեփական տեսլականները և պատրաստ լինել էներգետիկ քաղաքականությանը ուղղված զգալի փոփոխություններին: Միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում Եվրոպական երկրների տնտեսությունը կենտրոնացած է զարգացման ցածր ածխածնային մոդելի, կլիմայական չեզոքության և շրջանաձև տնտեսության անցման վրա: Էներգետիկ անցումը դարձել է ժամանակակից զարգացման անբաժանելի մասը: Այն պահանջում է վառելիքային հանածոները փոխարինել վերականգնվող էներգիայով, որը ոչ միայն տնտեսապես ձեռնտու է և էկոլոգիապես մաքուր, այլ նաև պետություններին էներգետիկ անկախություն է ապահովում: Պետությունները պարտադրվում են կլիմայական փոփոխության դեմ համապատասխան միջոցառումներ իրականացնել, ինչը ներառում է միջին ջերմաստիճանը պահպանել 2 °C-ից ցածր: Այդ նպատակները շարադրված են Փարիզի համաձայնագրում, որը 2017թ. հաստատվել և ընդունվել է Հայաստանի կողմից:

Ըստ Հայաստանի Հանրապետության 2021-2030թթ. Ազգային Մակարդակով Սահմանված Գործողությունների, ՀՀ-ն կլիմայական չեզոքության հասնելու իր ճանապարհին պլանավորում է մինչև 2030թ. կրկնապատկել վերականգնվող էներգիայի մասնաբաժինն ընդհանուր էներգիայի արտադրության մեջ և 1990թ. համեմատ ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնել մոտ 40%-ով:¹⁵⁰ Երկարաժամկետ հեռանկարում Հայաստանը ձգտում է մինչև 2050թ. ջերմոցային գազերի արտանետումները կրճատել մինչև 2.07տCO₂ համ. մեկ շնչի հաշվով: Ազգային մակարդակով սահմանված

¹⁴⁹ Նույնը

¹⁵⁰ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N 610-Լ որոշումը « Փարիզի համաձայնագրին 2021-2030 թթ. ՀՀ ազգային սահմանած ներդրումը հաստատելու մասին» որոշումը՝ <https://unfccc.int/sites/default/files/NDC/2022-06/NDC%20of%20Republic%20of%20Armenia%20%202021-2030.pdf>

գործողությունների ցանկը հաստատվել է 2021թ. ապրիլին և ընդգրկում է հետևյալ տնտեսական ոլորտները

- էներգետիկա,
- արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում,
- գյուղատնտեսություն,
- թափոններ,
- անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում

Նշված ոլորտները հանդիսանում են ջերմոցային գազերի արտանետումների հիմնական աղբյուրները և պահանջում են էական փոփոխություններ և ներդրումներ: Էներգետիկ անցման իրականացումը կառավարությունից պահանջում է համալիր միջոցառումների ձեռնարկում, որոնք ներառում են բայց չեն սահմանափակվում գործող օրենսդրության թարմացմամբ և նոր ներդրումային նախագծերի իրականացմամբ, ինչպես նաև տնտեսության տարբեր հատվածների վերջնական վերափոխմամբ: Ներկայումս Հայաստանի էներգետիկ քաղաքականությունը կենտրոնացած է վերականգնվող էներգիայի աղբյուրների զարգացման և միջուկային ռեակտորի ծառայության ժամկետի երկարացման վրա, որն ապահովում է երկրում էլեկտրաէներգիայի գրեթե մեկ երրորդը:¹⁵¹ Ձեռնարկությունները, իրենց հերթին, պետք է համապատասխան քայլեր իրականացնեն տեխնոլոգիաների արդիականացման, էլեկտրաէներգիայի մակարդակի սպառման կրճատման, վերականգնվող էներգիայի աղբյուրների անցման և նոր ռազմավարությունների իրականացման ուղղությամբ:

ԱՃԹՆ շրջանակներում ստացված տվյալները կարող են օգտակար լինել հանքարդյունաբերական ոլորտի զարգացման ապագա մոդելների մշակման համար՝ հաշվի առնելով կլիմայական մարտահրավերները: ԱՃԹՆ միջազգային քարտուղարության տվյալների համաձայն՝ ԱՃԹՆ մեծ ներուժ ունի հանրությանը և շահագրգիռ կողմերին իրազեկելու հանքարդյունաբերության ոլորտում առկա իրավիճակի և հետագա զարգացման համար անհրաժեշտ գործընթացների մասին: Համաշխարհային և ներքին շուկաներում պահանջարկի փոփոխություններին պատշաճ պատրաստվելու համար հարկավոր է առաջնորդվել հուսալի և ստուգված տվյալներով: Ակնկալվող արտադրության ծավալների, արտահանման և ներմուծման ծավալների, ընկերությունների եկամուտների վերաբերյալ ԱՃԹՆ կողմից տրամադրված տվյալները պետությանը կօգնեն նոր՝ ավելի ճշգրիտ քաղաքականություն ձևավորել, իսկ ներդրողներին կօգնեն պատկերացում կազմել հնարավոր ներդրումների մասին¹⁵²:

ԱՃԹՆ միջազգային քարտուղարությունն ընդգծել է էներգետիկ անցման ճանապարհին ԱՃԹՆ կողմից տրամադրված տվյալների օգտագործման հետևյալ առավելությունները¹⁵³



Կառավարությունների համար

¹⁵¹ ՄԷԳ՝ Հայաստանի էներգետիկ պրոֆիլը՝ https://iea.blob.core.windows.net/assets/89a4a24d-fe2b-4e04-9ec7-25d3c02dbefd/CountryPages_Armenia_FINAL.pdf

¹⁵² ԱՃԹՆ, Էներգետիկ անցում՝ տվյալների օգտագործումը էներգիայի անցման ուղիների տեղեկացման համար, <https://eiti.org/energy-transition>

¹⁵³ ԱՃԹՆ, Նախապատրաստում էներգետիկ անցման համար՝ նավթից, գազից և հանքարդյունաբերությունից կախված պետություններին վերաբերող հիմնական հարցերը (Համառոտ քաղաքականություն), https://eiti.org/sites/default/files/attachments/en_eiti_policy_brief_preparing_for_the_energy_transition.pdf

Էներգետիկ անցման պատշաճ պլանավորումը ՀՀ կառավարությանը կօգնի պետության կլիմայական պարտավորությունները համապատասխանեցնել արդյունահանման ոլորտի առաջնահերթությունների հետ: Այն նաև կօգնի վերլուծել ներդրումների հնարավոր աղբյուրները:

- Հասկանալով և կանխատեսելով համաշխարհային և ներքին շուկայում հանածո ռեսուրսների պահանջարկի նվազումը՝ կառավարությունը կկարողանա օբյեկտիվորեն արձագանքել հումքի շուկայում գների հնարավոր տատանումներին,
- Կլիմայի և հանքարդյունաբերության ոլորտներում քաղաքականության համաձայնեցումը կապահովի նպատակների ավելի արդյունավետ համակարգմանը և իրականացմանը,
- Հանքարդյունաբերական ընկերությունների անմիջական ներդրման և կարևորագույն ռեսուրսների հաշվեկշռային պաշարների մասին ճշգրիտ տեղեկատվության առկայությունը պետությանը կապահովի սահուն և աստիճանական էներգետիկ անցում,
- Տվյալ ուղղությամբ ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերի պատրաստման գործում հանրության ներգրավումը կապահովի կառավարության նկատմամբ վստահության բարձր մակարդակ:



Ձեռնարկությունների համար

- Էներգետիկ անցումը ձեռնարկություններին կստիպի ավելի արդյունավետ կառավարել ներդրումային ռիսկերը:
- Էներգետիկայի անցման պետության հստակ տեսլականն ընկերություններին հնարավորություն կընձեռնի իրականացնել և հասնել կոնկրետ նպատակների,
- Պետական ձեռնարկությունները շահագրգիռ կողմերի հետ կարող են խորհրդակցել՝ մշակելու ռազմավարություններ և ուղղորդել ռեսուրսներ տեխնիկական հմտություններ ձևավորելու համար, որոնք անհրաժեշտ են անցումը կատարելիս:
- Ռիսկերի կառավարման ռազմավարությունների և մոտեցումների բացահայտումը, ինչպես նաև շահագրգիռ կողմերի հետ սերտ համագործակցությունը ցույց կտան ընկերությունների փոփոխությունների հանդեպ պատրաստակամությունը:
- Մաքուր էներգիայի տեխնոլոգիաների և զրոյական արտանետումների մեջ ներդրման արդյունքների հաղորդումը կօգնի ընկերություններին ամրապնդել իրենց գործունեության սոցիալական լիցենզիան:



Համայնքների համար

Կառավարության և ընկերությունների կողմից հստակ գործողությունների պլանի առկայությունն արդյունահանող ոլորտից կախված անձանց անհրաժեշտ տեղեկատվություն կտրամադրի առաջիկա փոփոխությունների մասին և դրանց պատրաստվելու հնարավորություն կտա:

- Պետական քաղաքականության և էներգետիկ անցման հետ կապված ծրագրերի թափանցիկությունը հասարակությանը հնարավորություն կընձեռնի վերլուծել կանխատեսված ապագա եկամուտները և մասնակցություն ունենալ քաղաքականության մշակմանը:

- Քաղաքականության թափանցիկությունը և արդյունահանող հատվածի հնարավոր եկամուտների պլանավորումը հնարավորություն կստեղծեն վերահսկել աշխատանքային ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները:

5.8 2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ռազմական գործողությունների, Հայաստանում հայտարարված ռազմական դրության և դրանից հետո ստեղծված իրավիճակի ազդեցությունը Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վրա:

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետությունը լայնածավալ ռազմական հարձակում սկսեց Արցախի Հանրապետության դեմ շփման գծի ողջ երկայնքով: Լայնածավալ ռազմական գործողությունները տևեցին 44 օր: Նույն օրը 27.09.2020թ. ՀՀ կառավարությունն ընդունեց թիվ 1586-Ն որոշումը Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին, որով, ի թիվս այլոց, սահմանվեցին *«ռազմական դրության ժամանակ կիրառվող միջոցառումները և իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակումները, ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցները և մարմինները»*: Կառավարության որոշմամբ հաստատված միջոցառումներում ցանկում էր նաև երկրում նախաձեռնված ընդհանուր գորահավաքը:

Ռազմական գործողություններն ավարտվեցին 2022թ. նոյեմբերի 9-ին ՀՀ վարչապետի, Ադրբեջանի նախագահի և ՌԴ նախագահի եռակողմ հայտարարությամբ: Եռակողմ հայտարարության համաձայն, ի թիվս այլոց, Հայաստանը պետք է դուրս բերեր իր զինված ուժերը Քարվաճառի (Քելբաջարի) շրջանից:

Չնայած Եռակողմ հայտարարությանը՝ Ադրբեջանի զինված ուժերը, օգտվելով Հայաստանի և Ադրբեջանի միջև դեղին հատվածի բացակայության փաստից, իրականացրել են պարբերական առաջխաղացումներ, որոնք զուգորդվում են ուժի գործադրմամբ, ուժի գործադրման սպառնալիքներով կամ անգամ լայնածավալ պատերազմական գործողություններով:

Խնդրո առարկա առաջխաղացումների արդյունքում առաջնային տուժած ընդերքօգտագործողը «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերությունն է, որին տրամադրվել են ընդերքօգտագործման իրավունքներ Սոթքի ոսկու հանքավայրի նկատմամբ: Խնդրո առարկա հանքավայրը երկու պետությունների զինված ուժերի վերադասավորումների հետևանքով կիսով չափ հայտնվել է Ադրբեջանի վերահսկողության ներքո՝ փաստացի բացառելով ընդերքի ամբողջական հասանելիությունը «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերության համար:

6

ՀԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ



6. ՀԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

6.1 Համադրման գործընթացի մեթոդաբանությունը և շրջանակները

Ի կատարումն ԱՃԹՆ ստանդարտի 4 պահանջի՝ ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-Ն որոշման¹⁵⁴ համաձայն պետական մարմինները (Պետական եկամուտների կոմիտե, Շրջակա միջավայրի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն) պետք է պատրաստեն և հրապարակեն հաշվետվություններ ընդերքօգտագործող կազմակերպություններից ստացված եկամուտների վերաբերյալ, մինչև ժամանակ հանձնարարելով լիցենզավորված ընկերություններին՝ նշված մարմիններին տեղեկացնել կատարված վճարների վերաբերյալ: Այնուհետև, այդ աղբյուրներից հավաքագրված տվյալներն համադրվում են Անկախ Ադմինիստրատորի կողմից և հրապարակվում է հաշվետվություն, որտեղ ներկայացվում են համադրման արդյունքները (եկամուտների հոսքերի վերլուծություն, գումարների համեմատություն, բացահայտված անհամապատասխանություններ և չհամաձայնեցված գումարներ, եթե այդպիսիք կան): Նաև տրվում են տվյալների հավաքագրման և համադրման գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

6.1.1 ԱՃԹՆ զեկույցի համադրման շրջանակներում համադրվող ընկերությունների ցանկի որոշում

2022թ. ապրիլի 27-ին կայացած նիստի ժամանակ (ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ նիստի արձանագրություն N15¹⁵⁵) Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ ԲՇԽ-ն որոշում է ընդունում, որ 2021թ. օգոստոսի 1-ի դրությամբ լիցենզիա ունեցող մետաղի արդյունահանմամբ զբաղվող բոլոր ընկերությունները պետք է մասնակցեն 2020-2021թթ. համադրման գործընթացին, բացառությամբ սնանկ ճանաչված ընկերությունների (այս դրույթը կարելի է գտնել նաև ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-Ն¹⁵⁶, և Ընդերքի մասին օրենսգրքում¹⁵⁷ փոփոխություններ և լրացումներում, որոնք ընդունվել են 2019թ. ապրիլի 23-ին: Բազմաշահառու խումբը նաև որոշել է, որ այն ընկերությունների համար, որոնց ընդերքօգտագործման իրավունքները ուժը կորցրած են ճանաչվել 2021թ. օգոստոսի 1-ի դրությամբ, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետք է հրապարակվեն միակողմանի հաշվետվություններում միայն այն պատճառով, որ այդ ընկերություններն այլևս չեն համարվում ընդերքօգտագործող ընկերություններ, և հետևաբար, հաշվետվություն հրապարակելու պարտավորություն չունեն¹⁵⁸:

Մինչև ժամանակ, այն ընկերությունները, որոնք բողոքարկել են ընդերքօգտագործման դադարեցումը մինչև 2020թ. օգոստոսի 16-ը և 2021թ. օգոստոսի 1-ի դրությամբ հայցն ընդունվել է դատական վարույթ, համարվել են ընդերքօգտագործողներ և, հետևաբար, ներկայացրել են հրապարակային հաշվետվություններ:

Ընդհանուր առմամբ, համադրման գործընթացին մասնակցած և հաշվետվություններ հրապարակած մետաղարդյունահանող ընկերությունների ցանկում ներառված է 26

¹⁵⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132674>

¹⁵⁵ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_27_04_2022_arm.pdf

¹⁵⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132674>

¹⁵⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130250>

¹⁵⁸ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_27_04_2022_arm.pdf

ընկերություն: Լրացուցիչ տեղեկությունների տրամադրում է պահանջվել այն ընկերություններից, որոնց վճարումները (հարկերի և այլ վճարումների ընդհանուր գումարը) 2021-2022թթ. գերազանցել են 150 մլն ՀՀ դրամ էականության շեմը:

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս 2020-2021 թթ. ընթացքում ընկերությունների կատարած ընդհանուր վճարումները ընկերությունների և պետական մարմինների կողմից (ՀՀ ՊԵԿ, ՀՀ ՇՄՆ) ներկայացված տեղեկատվության համաձայն, հղում կատարելով նաև էականության շեմին:

Աղյուսակ 6.1.1 Էականության շեմի կիրառումը, 2020թ.

N	Ընկերության անվանում	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ընկերությունների տվյալների, 2020թ., հազ. ՀՀ դրամ	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ պետական մարմինների տվյալների, 2020թ., հազ. ՀՀ դրամ	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ ընկերությունների տվյալների, 2020թ., հազ. ԱՄՆ դոլար ¹⁵⁹	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ պետական մարմինների տվյալների, 2020թ., հազ. ԱՄՆ դոլար ¹⁶⁰	Ընկերության մասնաբաժինն ընդհանուր եկամտային հոսքերում, % ¹⁶¹	Էականության շեմը գերազանցող
1	«Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	41,750,792	41,750,745	85,326	85,326	51.87%	Գերազանցում է
2	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	20,582,627	20,582,628	42,065	42,065	25.57%	Գերազանցում է
3	«Թեդուտ» ՓԲԸ	7,672,385	7,672,898	15,680	15,681	9.53%	Գերազանցում է
4	«Չաարատ Կապան» ՓԲԸ	5,434,232	5,434,283	11,106	11,106	6.75%	Գերազանցում է
5	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	2,367,761	2,367,760	4,839	4,839	2.94%	Գերազանցում է
6	«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	923,291	923,628	1,887	1,888	1.15%	Գերազանցում է
7	«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	639,974	639,691	1,308	1,307	0.79%	Գերազանցում է
8	«Լեռ-Էքս» ՍՊԸ	385,593	385,603	788	788	0.48%	Գերազանցում է
9	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	254,304	254,349	520	520	0.32%	Գերազանցում է
10	«Լիճքվազ» ՓԲԸ	212,579	212,579	434	434	0.26%	Գերազանցում է
	Ընդամենը եկամտային հոսքեր էականության շեմը գերազանցող ընկերություններից	80,223,538	80,224,163	163,953	163,955	99.67%	
11	«Ատ-Մետալս» ՍՊԸ	53,580	63,610	110	130	0.08%	
12	«Մազամար» ՓԲԸ	46,944	49,632	96	101	0.06%	
13	«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ	44,617	44,661	91	91	0.06%	
14	«Գեդի Գոլդ» ՍՊԸ	14,702	14,702	30	30	0.02%	
15	«Ասասթ» ՍՊԸ	14,667	14,715	30	30	0.02%	
16	«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	10,510	10,510	21	21	0.01%	

¹⁵⁹ Ձեկույցի շրջանակներում տարադրամի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված բոլոր փոխարժեքների միջինացմամբ: 2020թ. մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը եղել է 489,307 ՀՀ դրամ:

¹⁶⁰ Նույնը

¹⁶¹ Հաշվարկվել է Պետական եկամուտների կոմիտեի և Շրջակա միջավայրի նախարարության կողմից ստացված տվյալների հիման վրա

N	Ընկերության անվանում	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ ընկերությունների տվյալների, 2020թ., հազ. ՀՀ դրամ	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ պետական մարմինների տվյալների, 2020թ., հազ. ՀՀ դրամ	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ ընկերությունների տվյալների, 2020թ., հազ. ԱՄՆ դոլար ¹⁵⁹	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ պետական մարմինների տվյալների, 2020թ., հազ. ԱՄՆ դոլար ¹⁶⁰	Ընկերության մասնաբաժինն ընդհանուր եկամտային հոսքերում, % ¹⁶¹	Էականության շեմը գերազանցող
17	«Բակտեկ Էկո» ՍՊԸ	10,215	10,248	21	21	0.01%	
18	«Վարդանի զարթոնք» ՍՊԸ	10,034	-	21	-	0.00%	
19	«Ղարագույաններ» ՓԲԸ	10,005	10,005	20	20	0.01%	
20	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	4,765	4,765	10	10	0.01%	
21	«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	4,738	4,738	10	10	0.01%	
22	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	3,906	3,938	8	8	0.00%	
23	«Վայք Գոլդ» ՍՊԸ	411	411	1	1	0.00%	
24	«Թաթաթոուն» ՍՊԸ	-	16,929	-	35	0.02%	
25	«Մեգո Գոլդ» ՍՊԸ ¹⁶²	-	12,371	-	25	0.02%	
26	«Մարջան Մայնինգ» ՍՊԸ ¹⁶³	-	404	-	1	0.00%	
	Ընդամենը եկամտային հոսքեր էականության շեմը չանցած ընկերություններից	229,095	261,640	468	535	0.33%	
	Ընդամենը եկամտային հոսքեր բոլոր ընկերություններից	80,452,633	80,485,803	164,422	164,489	100%	

Աղբյուրը ¹ԱՃԹՆ շրջանակներում ՀՀ ՊԵԿ-ից և ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից տրամադրվող հաշվետվություն

¹⁶² Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում Հր.693-Ա 13.12.2019թ.: Բողոքարկվել է, 2021թ. հունիսի դրությամբ համարվում է ընդերքօգտագործող:

¹⁶³ Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում Հր.692-Ա 13.12.2019թ.: Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում Հր.1018-Ա 29.07.2020թ

Աղյուսակ 6.1.2 Էականության շեմի կիրառումը, 2021թ.

